

## ԴԱՂԻ ՎԱՆՔՈՒՄ 2008 Թ. ԿԱՏԱՐՎԱԾ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

Սամվել Այվազյան, Գագիկ Սարգսյան

Դաղի վանքը գտնվում է պատմական Արցախի Վերին Խաչեն գավառում (այժմ՝ ԼՂՀ Շահումյանի շրջան)՝ Տրտու գետի ձախ ափին: Մատենագրական աղբյուրներում վանքն առաջին անգամ հիշատակվում է Թ դարում. «...ի խորածորն, որ կոչի Դաղի վանք...»<sup>1</sup>: Վկայվել է նաև Դաղուի, Դաղի, Դաղեի, Դատեի, Թաղեի, Խութա, Խոտա, Դոթալ, Առաքելոց, Չարեքղարի անվանումներով:

կան կազմակերպությունը (ներկայումս՝ հիմնադրամ, հիմնադիր-նախագահ՝ ճարտ. դր. Արմեն Հախնազարյան) ձեռնամուխ եղավ վանքի վերականգնման գործընթացին:

Այդ ծրագրերում նախատեսվում էին նաև պեղումներ: Մասնավորապես 2008 թ. 27.05 - 05.06 ընկած ժամանակահատվածում վանական համալիրի Դաղի եկեղեցու ներսում (նկ. 2) կատարվեցին պեղ-



Նկ. 1. Դաղի վանական համալիրի տեսքը հարավից (լուս.՝ Ս. Այվազյանի, 2010 թ.)

Հիմնադրումն ավանդաբար կապվում է Թաղեոս առաքյալի աշակերտներից Դաղի նահատակության հետ: Վերջինս մ. թ. Ա դարում քրիստոնեություն քարոզելու պատճառով սպանվում է, որի գերեզմանի տեղում էլ հետագայում հիմնադրվում է վանքը. «Թաղեոս, մի յեթանասնիցն, որ գնաց հրամանա Թաղեի ի մեծն Հայք եւ ի կողմանս հիւսիսոյ եւ լուէալ գմահն Արգարու, դարձաւ եւ եմուտ ի փոքր Սիւնիք եւ կրօնաորեալ անդէն ծածկաբար՝ վախճանեցաւ եւ տեղին շինեցաւ վանք եւ յանուն նորա կոչեցավ»<sup>2</sup>:

Գնահատելով Դաղի վանքի մշակութային և պատմական մեծ արժեքը, ինչպես նաև կարևորելով նրա նշանակալի դերը հայ քաղաքական և հոգևոր կյանքում՝ դեռևս 1997 թ. «Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող» (RAA) հասարակա-

ման աշխատանքներ, որոնք 2007 թ. (արշավախմբի ղեկավար՝ հնագետ Համլետ Պետրոսյան, ճարտ.՝ Սամվել Այվազյան) սկսված և ժամանակավորապես դադարեցված Սք. Դաղի եկեղեցու բեմի հատվածում կատարված պեղումների շարունակությունն էին:

2008 թ. այն ղեկավարում էր հնագետ Գագիկ Սարգսյանը (ճարտ.՝ Սամվել Այվազյան):

Պեղումների շարունակման անհրաժեշտությունը բխում էր մի քանի նկատառումներից.

ա. Դեռևս 2007 թ. պեղումներից պարզ էր, որ Դաղի եկեղեցու խորանի կենտրոնում գտնվող կոթողի հետևում հայտնաբերված դիաթաղումը ոչ մի առնչություն չունի Սք. Դաղի հետ<sup>3</sup> (նկ. 3), ուստի անհրաժեշտ էր վերջնականապես պարզել Սք. Դաղի գերեզմանի առկայության առեղծվածը:

1 Մովսես Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Երևան, 1983, էջ 340:

2 Ժամանակագրութիւն տեառն Միխայէլի Ասորոց պատրիարքի, Յերուսաղէմ, 1871, էջ 33:

3 Պետրոսյան Հ., 2007 թ. ՀՃՈՒ հ/կ-ին հանձնված պեղումների հաշվետվություն: Այդտեղ վերծանված է նաև կոթողի վրայի փորագրությունը. «Հավանական է տարբերակ ներկայացնող արձանագրությունը. «Թ:ՊԺ:»-1361 կամ «ՊԺԹ»-1370»:



բ. Նշված կոթողը կանգնեցված է Դաղի եկեղեցուց (կառուցվել է ԺԳ դարի կեսերին)<sup>4</sup> ավելի վաղ ինչ-որ շինությունից մնացած կրաշաղախե միջուկով պատի (շինության հարավարևմտյան անկյան բեկոր, որի վրա պահպանվել է մուտքի ներսի վերևի անկյունը բարավորի մի մասով) մեծ զանգվածի վրա (նկ. 4): Անհրաժեշտ էր հնարավորինս պարզել այդ հին շինության նշանակությունը, ինչպես նաև բեմի հարավային մասում բացահայտված անկյունային պատի կառուցման ժամանակաշրջանը:

գ. Դաղի եկեղեցու վերականգնման ծրագրով նախատեսված էր սալահատակել սրահը և բեմը, բայց նախապես բացված խուզահորերում ի հայտ եկան ինչ-որ պատերի հիմնամասեր (նկ. 5), որոնք մնալու էին սալահատակի տակ: Անհրաժեշտ էր նախքան սալահատակելը պարզել այդ պատերի առնչությունը պահպանված շինությունների հետ:

դ. 2007 թ. պեղումներն ավարտելուց հետո բեմի կոթողի առջևում բացված կրաշաղախի զանգվածի տակ բանվորները պատահաբար հայտնաբերում

են դատարկ հորի նման մի փոս, որտեղից դուրս են բերում փայտի կտորներ՝ ենթադրելով, թե փայտյա խաչ է (ցավոք, դա կատարվել է առանց մեր իմացության): Գտածոն՝ 27 մեծ և 11 փոքր փայտի կտորներ, 13 մետաղական գամեր, տեղափոխվում է Երևան: Կտորները չափագրելով և համադրելով՝ կատարեցինք վերակազմություն (նկ. 8): Պարզվեց, որ հայտնաբերվածը փայտե բազկաթոռ է՝ գահ, որից պահպանվել է նստատեղից միայն վեր եղած հատվածը (նկ. 6): Պահպանվել էին փայտե աթոռի ամբողջ թիկնակը և երկու բազուկները, ընդ որում, աջ բազկի գլխամասը բացակայում էր: Բոլոր կտորներն էլ կոտրատված էին<sup>5</sup>: Միացումներում և հանգույցներում օգտագործվել են նաև մետաղական գամեր: Թիկնակի և բազկի գլխամասերը մշակված են գլանաձև ծավալների համակցությամբ: Աթոռի մակերևույթը ծածկված է փորագիր զարդանախշով: Այն իրենից ներկայացնում է երկայնական ձգված, միմյանց զուգահեռ չորս ակոսաձև գոտիներ, որի երկու կողմերը մեկական շարքով եզրափակում են շրջանակազարդերը: Ակոսաձև զարդագոտին փորագրված է գահի և՛ ներքին, և՛ արտաքին կողմերին, մինչդեռ շրջանակազարդ

<sup>4</sup> Հարությունյան Մ., Հայկական ճարտարապետության Արցախի դպրոցը, Երևան, 1992, էջ 50: Տե՛ս նաև Այվազյան Մ., Դաղի վանքի հոգևոր շինությունների կառուցման ժամանակագրական հաջորդականությունը, «Պատմաբանասիրական հանդես», 2006, № 3, էջ 201:

<sup>5</sup> Փայտյա գահի մասերը մաքրել, ամրակայել և ցուցադրության է նախապատրաստել Լենա Արոյանը:



Նկ. 2. Ճախքան վերականգնումը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1993 թ.), նկ. 3-4. Կոթողի հետնամասի դիաթաղումը 2007 թ. պեղումների ավարտից հետո (լուս.՝ Ս. Ավագյանի, 2007 թ.), նկ. 5. եկեղեցու հարավարևմտյան որմնամույթին կից խուզահորը (լուս.՝ Ս. Ավագյանի, 2007 թ.)

գոտիները՝ ներքուստ, իսկ արտաքինից՝ միայն պահպանված բազկի գլխիկի վրա: Ակոսաձև փորվածքը հիշեցնում է ժայռապատկերներում հանդիպող բնության չորս տարերքներից ջրի, իսկ շրջանագծայինը՝ արևի խորհրդանշական պատկերները:

Վաղբրիստոնեական շրջանի հուշարձաններում նույնպես հանդիպում են շրջանաձև նմանատիպ զարդանախշեր, մասնավորապես Ե-Ջ դարերում թևավոր խաչերի խաչաթևերի ծայրերում և խաչահատումներում, ինչպես՝ Երեբունյքի՝ Ջ դարի բազիլիկայի մուտքի բարավորի, Անիի՝ Թ-Ժ դարի արքունի եկեղեցու որմնասյան վրա, այնուհետև, սկսած Թ-Ժ դարերից, խաչքարային արվեստում և այլն: Դիշտ նույնական զարդանախշ-պատկերագիր է քանդակված Օխտը եղցի վանքի՝ 1158 թ. մի խաչքարի վրա (նկ. 7): Այս խաչքարի ներքևի հատվածում՝ խաչի տակ, քանդակված են մարդկային երեք կերպարանքներ՝ ծնողները, նրանց մեջտեղում՝ վաղամեռիկ որդին, որի հիշատակին է կանգնեցված խաչքարը: Որդու ձախ կողմում պատկերված է հայրը՝ գահաթոռին նստած, իսկ աջ կողմում՝ մայրը՝ գորգի վրա կանգնած: Ահա այս գահի և գորգի վրա էլ քանդակված են ճիշտ նույն շրջանաձև պատկերները, ինչը տեսնում ենք հայտնաբեր-


ված փայտե գահաթոռին: Նման զարդանախշերով, որի ստեղծման արմատները հասնում են մինչև ժայռապատկերներ, աթոռի պատկերաբանդակի գոյությունը խաչքարի վրա թերևս թույլ է տալիս փայտե գահաթոռը թվագրել ԺԲ դարով, սակայն նույն զարդանախշերի առավել հաճախակի գոյությունն ավելի վաղ շրջանի հուշարձաններում գալիս է լրացնելու, որ գահաթոռը կարող էր ստեղծվել նշված դարաշրջանից էլ վաղ:

Գտածոն ենթադրել տվեց, որ բանվորները հանդիպել են ինչ-որ գերեզմանափոսի, և զարմանալի էր, որ թաղման արարողությունը կարող էր աթոռի վրա եղած լինել: Ակնհայտ էր միայն, որ բանվորները հանդիպել են ինչ-որ փակ խցի, ուստի անհրաժեշտ էր պարզել հայտնաբերված խցի նշանակությունը:

Ահա այս չորս հիմնական խնդիրները պարզաբանելու համար 2008 թ. մայիսի 27-ին վերսկսվեցին պեղումները: Գտնվեց բանվորների կողմից բացված խցի անցքը: Խուցն ուրվագծվեց, մաքրվեց ծածկը (դա վերը նշված կրաշաղախի զանգվածն էր): Կոթողի տակ գտնվող կրաշաղախե միջուկով պատի մեծ զանգվածը մասամբ նստած էր խցի ծածկի վրա (դեռևս 2007 թ. պեղումների ժամանակ այս ծածկը բացվել էր, սակայն չէինք կարողացել



Նկ. 6. դամբարանախցից գտնված գահի կտորները, նկ. 7. Օխտը եղի վանքում գտնվող 1158 թ. խաչքարի ստորին հատվածը (լուս.՝ Ր. Քորթոշյանի, 2011 թ.), նկ. 8. գահաթուռը (վերակազմությունը՝ Ս. Ալվազյանի, 2007 թ.)



պարզել, թե այն ինչ էր իրենից ներկայացնում, քանի որ պեղումները ժամանակավորապես դադարեցվել էին):

Պարզվեց, որ խուցը մուտք չունի, այն զնռված է, իսկ բանվորների բացած անցքը գտնվում է խցի հարավային պատի վերնամասում՝ անմիջապես ծածկի տակ (նկ. 9): Հուշարձանը հնարավորինս քիչ վնասելու նպատակով որոշեցինք խուց մտնել բանվորների բացած անցքով՝ այն լայնացնելով այնքան, որ հնարավոր լինե՞ր սողոսկել:

Խուց մտնելու պահին ներսի պատկերը հետևյալն էր. խուցը դատարկ էր, պարզ երևում էին պատերի անմշակ քարերի 5-6 շարքերը և ծածկը կազմող երկու տափակ սալաքարերը: Հատակը պատված էր ջրաբեր մանր ավազի հարթ շերտով, որի մեջ նկատվում էին ընկած փոքր քարեր ու փայտի մանր կտորներ: Խցի արևելյան անկյան մոտ՝ հատակը պատող հողի շերտից դուրս էին ցցված մարդու ներքին ծնոտի երկու եզրամասերը: Քանի որ հատակի՝ 20-30 սմ հզորությամբ լիցքը բաղկացած էր հիմնականում մանր, ջրաբեր փխրուն ավազից,

պրեպարացիան իրականացվեց վրձինով ու մասամբ դանակի ծայրով: Ներքին ծնոտը դրված էր մարդու ոտքերի ու ձեռքերի ոսկորներից կազմված, խնամքով իրար վրա շարված ոսկրակույտի վրա: Այստեղ էին գանգի երկու մանր և փայտյա գահաթուռի փոքր կտորներ: Ոսկրակույտը գտնվում էր խցի արևելյան անկյունում՝ հարավային պատի երկայնքով (նկ. 10, 11): Այն փաստագրելուց և հեռացնելուց հետո պարզվեց, որ նրա հյուսիսային եզրամասի տակ՝ խցի արևելյան անկյունում, հատակի մակարդակը փոքր-ինչ իջնում է: Այստեղ բացվեցին մարդու ոտքերի թաթերի ամբողջական ոսկորներ՝ տեղադրված իրենց տեղում անատմիական ճշտությամբ (նկ. 12): Այսպիսով՝ փաստվեց այն ենթադրությունը, որ դամբարանում կատարված է դիաթաղում, այլ ոչ վերաթաղում:



Նկ. 9. դամբարանախցի ծածկը (լուս.՝ Գ. Սարգսյանի, 2008 թ.)

Դամբարանախցի հատակի կենտրոնական մասում բացվեցին ողերի, կողոսկրերի, թիակների անկանոն թափված ոսկորները՝ խառնված փայտյա գահի մանր կտորների հետ: Խցի արևմտյան եզրամասը չէր պարունակում որևէ գտածո, սակայն փայտյա աթոռի թիկնակի մասերը հենց արևմտյան պատին հենված վիճակում են եղել: Դա եզրակացնում ենք բանվորների վկայությունից, երբ նրանցից մեկը գլուխը ներս է մտցրել անցքից, ինչ-որ բան՝ «փայտե խաչը», ընկել է գլխին:

Խցի հարավային պատի տակ հայտնաբերվեց ձեռնափայտի (զավազանի) երկթեք ծայրերով սպիտակ օնիքսից գլխիկ (նկ. 13, 14): Վերջինս ունի ձեռնափայտի վերջնամասն ազուցելու համար փորված նիստուկ մետաղյա գամերի երկու անցքերով: Ի դեպ, ճիշտ նույն գլխիկով զավազան-ձեռնափայտի հարթաքանոպակ առկա է նաև Շատիվանքում գտնվող Դավիթ վարդապետի տապանաքարին (նկ. 15):

Դամբարանախցից հայտնաբերվեցին նաև ծածկի կղմինդրի երկու փոքր բեկորներ: Նման մի բեկորով ամրացված էր հարավային պատի վերևից երկրորդ շարքի քարը:

Հանգուցյալի կմախքի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ կմախքն ամբողջական չէր (նկ.16): Բացակայում էին կոնքոսկրը, վերին ծնոտը, թերի էին ողնաշարը, կողոսկրերը, ձեռքերի մասերը: Ամբողջական էին ներքին ծնոտը, սրունքներն ու թաթերը: Գանգից առկա էին 3-4 փոքր կտորներ: Հանգուցյալի ոսկորներից փորձանմուշներ վերցնելուց հետո մնացած բոլոր ոսկորները վերաթաղվե-



Նկ. 10. դամբարանախցի արևելյան հատվածում բացված ոսկրակույտը, նկ. 11. նույն հատվածը ոսկորների առաջին շերտի հեռացումից հետո, նկ. 12. ոտնաթաթերի ոսկորները (լուս.՝ Գ. Սարգսյանի, 2008 թ.)




Նկ. 13. ձեռնափայտի օճիքսե գլխամասը դամբարանախցում, նկ. 14. օճիքսե գլխամասը մաքրելուց հետո (լուս.՝ Գ. Սարգսյանի, 2008 թ.), նկ. 15. գավազանաքանդակ Շառիվանքում (լուս.՝ Բ. Քորթոջյանի, 2010 թ.)

ցին նույն խցում, ծածկվեցին ավազի շերտով ու պոլիէթիլենի թաղանթով: Կատարվեց մարդաբանական նախնական հետազոտություն (պատմական գիտությունների թեկնածու Ռուզան Մկրտչյան), որի համաձայն՝ դամբարանախցում թաղվածը տղամարդ է՝ 50-55 տարեկան, 175-180 սմ հասակով: Նա տառապում էր ատամնացավով:




Նկ. 16. դամբարանախցից հայտնաբերված ոսկորները (լուս.՝ Գ. Սարգսյանի, 2008 թ.), նկ. 17-18. պեղավայրի և դամբարանի տեսքը պեղելուց հետո (լուս.՝ Ս. Այվազյանի, 2008 թ.)

Դամբարանախտուցը չափազույժ, բացված տղանցքը վերաշարվեց հանված քարերով, ժամանակավորապես պատվեց մոմլաթե թաղանթով և ծածկվեց հողի բարակ շերտով: Որոշվեց Դադի եկեղեցու վերականգնման նախագծում նախատեսել խցի պահպանությունն ու դիտարկման հնարավորությունը (պեղավայրի և դամբարանի տեսքը պեղելուց հետո, նկ. 17, 18):



Աբ. Դաղի եկեղեցու հատակագիծը պեղումներից հետո (չափ.՝ Ս. Այվազյանի, 2008 թ.)



Խորանի կենտրոնական մասի կտրվածքը դեպի հյուսիս և հատակագիծը: Դամբարանի լայնական կտրվածքը և հատակագիծը (չափ.՝ Ս. Այվազյանի, 2008 թ.)



Նկ. 19. Դամբարանախցի արևելյան անկյունը (ուս.՝ Ս. Այվազյանի, 2008 թ.)

Ուշագրավ է թաղման խցի կառուցվածքը: Դամբարանախյուցն ունի ձվաձևություն հիշեցնող հատակագիծ, որի սուր ծայրն ուղղված է դեպի արևելք, սակայն արևմուտք-արևելք առանցքը 11 աստիճանով

շեղված է եկեղեցու առանցքից դեպի հյուսիս: Խցի հատակը 260 սմ-ով ցածր է բեմի կենտրոնական մասում գտնվող կոթողի հիմքից, վերջինս համապատասխանում է Դաղի եկեղեցու բեմի մակարդակին:

Խցի հատակը 36 սմ-ով ցածր է նույնիսկ փոքր բազիլիկայի հատակից: Ներսում հատակագծային չափերն են՝ երկայնական առանցքով (արևելք-արևմուտք)՝ 107 սմ, լայնական առանցքով՝ 72 սմ, բարձրությունը՝ 132 սմ: Հասկանալի է, որ նշված չափերով խցի մեջ ավանդական ծիսակարգով դիաթաղում (մեջքի վրա պառկած, գլուխը դեպի արևմուտք) հնարավոր չէ կատարել: Թաղումն իրականացվել է փայտե գահին նստած վիճակում: Դիակի աջ կողմում կամ աջ ձեռքին եղել է ձեռնափայտ-գավազան (հիշեցնենք, որ գավազանի գլխիկը գտնվել է խցի հարավային պատի տակից, այսինքն՝ նստած դիակի աջ կողմից):

Դամբարանախույցը կառուցված է տեղական անտաշ, ամուր քարատեսակով և ավազաքարով, առանց շաղախի: Այն իր ամբողջ ծավալով իջեցված է փափուկ ավազաքարից կազմված մայր հողի մեջ: Արևելյան նեղացող մասում քարերը տեղադրված են միմյանց վրա՝ ծայրերը մի փոքր առաջ (նկ. 19): Բարձրության կեսից վերև դամբարանի երկայնական չափը փոքրանում, դառնում է 81 սմ, որի հետևանքով երկայնական կտրվածքում դամբարանը նմանվում է բազկաթռուի՝ կրկնելով գահին նստած մարդու ուրվագիծը (տես գծագիրը), ինչը ևս փաստում է, որ խույցը կառուցվել է հատուկ տվյալ թաղման համար: Դամբարանը ծածկված է լայնական ուղղությամբ ձգված 20-22 սմ հաստությամբ երկու սալաքարերով, որոնցից արևմտյանը 7 սմ-ով մյուսից բարձր է տեղադրված: Ծածկի սալաքարերի վրա դրսից լցված է մասն քարերով կրաշաղախի՝ 3-5 սմ հաստությամբ շերտ: Լցված շաղախի մեջ կա նաև կղմինդրի եզրամասի մի բեկոր: Խցի ներկայիս ծածկը հնարավոր է, որ նախնականը չէ, և արվել է ավելի ուշ: Նմանատիպ կառույցները սովորաբար ունենում են կեղծ թաղ կամ զմբեթանման ավարտ՝ պատերին համահունչ շարվածքով: Դրսում դամբարանախցի հյուսիսային պատի վերին եզրագիծը բացվում է մայր հողին հավասար, իսկ հարավային պատինը բնահողից բարձր է մոտ 40 սմ: Այս տարբերությունը կարելի է բացատրել տեղանքի՝ երբեմնի հյուսիս-հարավ թեքությամբ:

Դամբարանախույցն ամբողջությամբ գտնվում է եկեղեցու նախաբեմի կենտրոնական մասում՝ կոթողից արևմուտք: Խցի արևելյան ծայրը գտնվում է 2007 թ. հայտնաբերված ավերված կառույցի մնացորդի (վերոհիշյալ կրաշաղախե միջուկով պատի զանգվածը) տակ: Վերջինիս վրա էլ կանգնեցվել է, ընդ որում, արդեն կրաբետոնով, Դաղի եկեղեցու բեմի կենտրոնական մասի հայտնի կոթողը (նկ. 9): Սրանից հետևում է, որ հայտնաբերված դամբարանախույցն ավելի վաղ է կառուցվել, քան նրա վրա գտնվող ավերակը և կոթողը, իսկ Դաղի եկեղեցին, ինչպես փաստեցին դեռևս 2007 թ. պեղումները, կառուցվել է ավերված այդ կառույցի բեկորների վրա, այսինքն՝ եկեղեցին նույնպես ավելի ուշ է կառուցվել, քան դամբարանախույցը: Վերջինս եկեղեցուց հետո չէր կարող կառուցվել նաև այն պատճառով, որ եկեղեցին ավերակների վրա կառուցելուց հետո բեմի հատվածում անհրաժեշտ կլիներ փորել 260 սմ խորությամբ փոս և կատարել հուղարկավորություն, սակայն դա քիչ հավանական է, քանի որ թաղման համար բավարար կլիներ 80-120 սմ խորությունը (ինչպես կատարվել է կոթողի հետևի դիաթաղման դեպքում): Եթե նույնիսկ ընդունենք խցի՝ եկեղեցուց հետո կառուցվելը, ապա դժվար կլիներ բացատրել, թե ինչպես կարող էր հայտնվել եկեղեցուց առաջ ավերված մեծածավալ բեկորը եկեղեցուց հետո կառուցված դամբարանախցի վրա:

Վերոշարադրվածից եզրակացնում ենք, որ դամբարանախույցը գոյություն է ունեցել կոթողից, եկեղեցուց և դրանցից էլ դեռ վաղ ավերված կառույցից առաջ՝ առնվազն ԺԲ դարի երկրորդ կեսին (պայմանավորված այդ դարի կեսերին Չոլի գորպեյեի կատարած ավերածությունների հետ): Դրա ծավալային հորինվածքն ու շինարարական տեխնիկան, կառուցման ժամանակագրությունը և թաղման ծիսակարգը հուշում են, որ Սբ. Դաղի ավանդազրույցը կարող էր անմիջական կապ ունենալ հենց այս դամբարանի հետ: Անգամ եթե ընդունենք, որ դամբարանախույցը Սբ. Դաղի գերեզմանը չէ, կամ Դաղի ավանդազրույցը միայն հորինված է, ապա հենց այդ հորինվածը և Կաթողիկե եկեղեցու արևմտյան ճակատի՝ 1224 թ. արձանագրության մեջ<sup>6</sup> հիշված «Դաղի գերեզման»-ը կարելի է ընկալել այս դամբարանի հետ համատեղ:

Պատմաբան Ա. Հակոբյանի մի վարկածով՝ Դաղի եկեղեցու ավանդատան «Տէր Աթանաս» արձանագրությունը կարող է համարվել տապանագիր-«յուշատախտակ» վանահոր հավանական շիրմի «վրայ»<sup>7</sup> (նկատի ունի վանքի 1260-1290 ական թթ. վանահայր Աթանասին)<sup>8</sup>:

Ավերված կառույցի մնացորդները, ինչպես նաև բեմի հարավային կողմում բացված անկյունային

6 Արձանագրությունը տես Դիվանի հայ վիճագրության, պրակ 5, Երևան, 1982, էջ 201: **Կարապետյան Ս.**, Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Ադրբեջանի բռնակցված շրջաններում, Երևան, 1999, էջ 112:

7 **Յակոբյան Ա.**, «Հանդես ամսօրեայ», Վիեննա-Երևան, 2010, թիւ 1-12, էջ 136, ծնթ. 147:

8 Մեր և Ա. Հակոբյանի բանավոր քննարկումների ժամանակ նա հավանական է համարում, որ գտնված դամբարանում թաղված է Աթանասը կամ 13-րդ դարի երկրորդ կեսի վանահայրերից մեկը: Նման ենթադրության է հանգում նաև Գագիկ Սարգսյանը՝ հիմք ընդունելով հանգուցյալի ոսկրի՝ Սանկտ Պետերբուրգի Գերցենի անվան մանկավարժական համալսարանում կատարված ռադիոկարբոնային փորձաքննության SPb-63 փակագրով արդյունքը՝ մ. թ. 1260 թ.±55տարի: Այնուամենայնիվ, գերադասելի ենք համարում այն կարծիքը, որ հանգուցյալը չէր կարող լինել Աթանասը կամ ԺԳ դարի երկրորդ կեսի որևէ վանահայր, քանի որ դամբարան-խույցը կառուցվել է Դաղի «եկեղեցուց» և ավերված կառույցից առաջ, այսինքն՝ նշված անձանց գործունեության ժամանակաշրջանից առաջ (մասնավորապես Աթանասը՝ 1261-1291 թթ.):

պատի հատվածը սերտորեն առնչվում են փոքր բազիլիկ եկեղեցու հետ, կամ նրա մի մասն են, կամ մոտ ժամանակների կառույցներ են: Մասնավորապես անկյունային պատը, որը տեղում է, շարունակվում է Դաղի եկեղեցու խորանի հարավային պատի տակ՝ փաստելով, որ եկեղեցին կառուցվել է վերջինիս վրա, և ենթադրում, որ կհասնի փոքր բազիլիկ եկեղեցուն: Ցավոք, այս մասում 2007 թ. բացված խուզահորը տեխնիկապես հնարավոր չէր ավելի խորացնել և հստակեցնել այս պատի ու փոքր բազիլիկայի փոխկապվածությունը (հենց այս մասում է փոքր բազիլիկի հյուսիսային մուտքը): Եթե հստակեցվեր այդ կապը, ապա ավելի դյուրին կլիներ պարզել նաև խցի և փոքր բազիլիկայի կառուցման ժամանակագրական հաջորդականությունը:

Խցից 1,5-2 մ հարավ՝ Դաղի եկեղեցու նախաբեմի հարավային պատի տակ, բնահողի վրա բացվեց միջին չափի տափակ քարերից և գլաքարերից շարված սալահատակի հատված, որը շարունակվում է դեպի փոքր բազիլիկ եկեղեցի:


Պեղումների ընթացքում Դաղի եկեղեցու ներսում բացվեցին կոպտատաշ շարվածքով երկու պատերի մնացորդներ: Լայնական ուղղությամբ ձգվող պատը (նկ. 17, 18) սկսվում է եկեղեցու հյուսիսային պատի արևելյան որմնամույթից և շարունակվում դեպի հարավային պատի արևելյան որմնամույթը՝ 1 մ հեռու մնալով վերջինից: Այն շարված է դեպի արևմուտք նայող ճակատով միաշերտ, ճեղքած կոպտատաշ քարերով և պահպանվել է մեկ շարի բարձրությամբ: Երկայնական ուղղությամբ

գտնվողը (նկ. 5, 20) սկսվում է լայնական ուղղությամբ պատի վերջից միակտոր մեծ քարով և շարունակվում մինչև հարավային պատի արևմտյան որմնամույթը, ապա 90 աստիճան թեքվելով՝ մտնում է նրա տակ: Այս պատի հետագա ընթացքը պարզելու անհնարինությունը թույլ չի տալիս ավելի բնութագրել: Հստակ է միայն, որ գոյություն է ունեցել Սբ. Դաղի եկեղեցուց առաջ: Վերջինիս հարավարևմտյան որմնամույթի արևելյան կողմում՝ երկայնական պատից մոտ 10-20 սմ հեռավորության և որմնամույթի խարսխից 112 սմ խորության վրա, գտնվեց 25x33x191 սմ չափի ողորկ երեսով խաչքար (նկ. 21 և գծանկար): Ընկած դիրքից պարզորոշ երևում էր, որ խաչքարն իր նախնական տեղում չէ: Խաչքարի հաստությունը վերին մասում դանակածն էր և հասնում 2 սմ-ի: Հարթ մակերեսի վերևի մասում քանդակված է պարզ գծային խաչ՝ եռաճյուղ ավարտվող թևերով, որոնց ծայրերին կան գնդաձև փորվածքներ: Ստորին թևն ունի իջնող պոչուկ: Խաչքարի կողային հատվածներն ամբողջ երկարությամբ կտրատված են: Մի փոքր կտրվածք կա նաև ներքևից: Խաչքարն ունի ԺԱ-ԺԲ դարերին բնորոշ ոճական և գեղարվեստական առանձնահատկություններ:

Դաղի եկեղեցու բեմի հարավային մասում 2007 թ. հայտնաբերված անկյունային պատի շարունակությունը պարզելու նպատակով մոտ 3 քմ մակերեսով խուզահոր բացվեց նույն եկեղեցու արևելյան ճակատին կից: Մոտ 1 մ խորության վրա բացվեցին քրիստոնեական երկու դիաֆադումներ քարարկղե-



Նկ. 20-21. հայտնաբերված երկայնական ուղղությամբ պատը և խաչքարը (ուս.՝ Ս. Այվազյանի, 2008 թ.)



Խաչքարի գծանկարը (հեղ.՝ Ս. Այվազյանի)

րում առանց տապանաքարերի (նկ. 22): Թաղումները կցված են Դաղի եկեղեցու արևելյան ճակատի տակ բացված հիմնապատին (դրա մասին՝ ստորև) և ակնհայտորեն կատարված են ավելի ուշ: Այս թաղումները հաստատում են դեռևս ավելի վաղ արտահայտած մեր կարծիքը<sup>9</sup>, որ համալիրի այս մասում եղել են թաղումներ, և, ամենայն հավանականությամբ, այստեղ գերեզմանոց է: Խուզահորում չհայտնաբերվեց խնդրո առարկա պատի շարունակություն դեպի արևելք: Փոխարենը Դաղի եկեղեցու արևելյան ճակատի հիմքում բացվեց նույն ճակատի հարթությունից մոտ 15 սմ դուրս եկած և նրանից մի փոքր շեղված հիմնապատ (նկ. 23), որի հարթությունը մոտավոր համընկնում է փոքր բազիլիկի արևելյան ճակատի հետ: Հաշվի առնելով շինարարական տեխնիկայի և շարվածքի տարբերությունները՝ վստահաբար կարելի է ասել, որ Դաղի եկեղեցին կառուցվել է այս հիմնապատից հետո՝ շարվելով նրա վրա: Նշված հիմնապատը սերտորեն առնչվում է խնդրո առարկա անկյունային պատի և փոքր բազիլիկ եկեղեցու հետ և կարող է կազմել նրանց մի մասը: Այդ կապը պարզելու համար անհրաժեշտ է այս մասում ևս պեղումներ կատարել: Որոշեցինք դա թողնել պեղման հաջորդ փուլին, իսկ բացված խուզահորում կատարվեց հողի հետլիցք:

Դաշտային աշխատանքների ընթացքում փորձանուշներ վերցվեցին կառույցների տարբեր հատվածներից հանված կրաշաղախի կտորներից:



Նկ. 22-23. արևելյան կողմի դիաթաղումները և Դաղի եկեղեցու արևելյան պատի բացված հիմնապատը (լուս.՝ Ս. Այվազյանի, 2008 թ.)

Դրանց համեմատական փորձաքննությունը (հեղինակ՝ պատմական գիտությունների թեկնածու Քնարիկ Նավասարդյան) տվեց հետևյալ պատկերը. Դաղի կոթողի տակ գտնվող պատի մեծ զանգվածի, ինչպես նաև բեմի լիցք կազմող պատերի պատասխանների շաղախը նույնական է խորանի հարավային անկյունում 2007 թ. բացված պատի շաղախի հետ: Կոթողն ամրացնող, Դաղի եկեղեցու պատի շարի, ինչպես նաև թաղման խցի տանիքը պատող կրաշաղախները տարբեր են կառուցվածքով և բաղադրությամբ, հնարավոր է նաև ժամանակագրությամբ:

Պեղումներից հայտնաբերված հնագիտական նյութերը՝ փայտե գահը, ձեռնափայտի գլխիկը,

<sup>9</sup> Այվազյան Ս., նշվ. հոդվ., էջ 205:

հանձնվել են Արցախի պատմաերկրագիտական քանգարան:

Ամփոփելով համառոտ ներկայացնենք Դադի վանքի 2008 թ. հնագիտական պեղումների արդյունքները՝ հետևյալ եզրակացություններով հանդերձ.

ա. Հայտնաբերվել է խաչքար.

բ. Կաթողիկե եկեղեցուց հյուսիս և Դադի եկեղեցուց արևելք ընկած հատվածում բացվել է գերեզմանոց.

գ. Դադի եկեղեցու ներսում գտնվել են պատերի մնացորդներ, որոնք վկայում են, որ նախքան Դադի եկեղեցու կառուցումը (ԺԳ դարի երկրորդ կեսեր) տեղում եղել է մի շինություն, որի ձևը, ծավալն ու գործառական նշանակությունը դեռևս հնարավոր չէ ճշգրիտ պարզել.

դ. Հայտնաբերված խուցը դամբարան է և Դադի վանքի պահպանված կառույցներից հնագույնը, (թերևս բացառություն կարող է լինել փոքր բազիլիկ եկեղեցին): Դամբարանը կառուցվել է հատուկ տվյալ թաղման համար: Հավանաբար սա է Սբ. Դադի ավանդազրույցի և համալիրի Կաթողիկե եկեղեցու արևմտյան ճակատի՝ 1224 թ. նվիրատվական արձանագրության մեջ հիշված Դադի գերեզմանի գոյության սկզբնաղբյուրը:

ե. Թաղումը կատարված է փայտյա գահին նստած վիճակում, դեմքով դեպի արևելք: Խցում ամփոփված անձնավորությունն ակնհայտորեն քրիստոնյա շատ նշանավոր գործիչ է, որի մասին են վկայում նաև աստվածաշնչյան հովվապետին բնորոշ երկթեք ծայրերով գավազանի գլխիկը և զարդանախշված գահաթոռը: Առայժմ չի հաջողվել պարզել հանգուցյալի ինքնությունը:

զ. Հնարավոր է, որ խուցն առնվազն երկու անգամ բացվել է կողոպտելու կամ սրբի մասունքները վերցնելու նպատակով:

Առաջին ներխուժումը տեղի է ունեցել թաղումն իրականացնելուց բավականին ուշ, երբ արդեն քայքայվել էին հանգուցյալի փափուկ հյուսվածքները, կմախքը իջել էր, ու կրծողները ոչնչացրել էին փայտյա բազկաթռոչի ոտքերն ու նստատեղը: Կողոպտիչները կամ մասունք վերցնողները խառնել են թաղման խցի հատակին գտնվող ոսկորները՝ մասամբ կոտրատելով այն: Հատակի արևելյան անկյան իջվածքում մնացած ոտքի թաթերն ու անմիջապես հարավային պատին կից՝ հատակին գլխիկվայր ընկած գավազանի օմիքսե գլուխը, ամենայն հավանականությամբ, արդեն ծածկված լինելով ներթափանցող ջրաբեր ավազի շերտով, դուրս են մնացել նրանց ուշադրությունից:

Վերջին ներխուժումը հավանաբար տեղի է ունեցել կողոպտիչների կամ անկազմակերպ մասունք վերցնողների խառնածությունները վերացնելու և խուցն ամրացնելու նպատակով: Ներխուժողները մեծ ոսկորները խնամքով շարել են արևելյան

պատի տակ, ներքին ծնոտը դրել ոսկրակույտի վրա: Դամբարանախցում, պատի քարերի արանքում, տանիքի կրաշաղախե լիցքում հայտնաբերված կղմինդրների կտորները (վերաբերում են ԺԳ դարին և նույնական են զմբեթավոր փոքր եկեղեցու կղմինդրների հետ) փաստում են, որ վերջին անգամ խուցը բացվել և զննվել է Դադի եկեղեցին կառուցելու և դամբարանը նրա խորանի տակ ամփոփելու ժամանակ:

է. Դադի եկեղեցուն հարավից կից միանավ բազիլիկի, որն ակնհայտորեն ավելի վաղ է և կրում է վերակառուցումների բազմաթիվ հետքեր<sup>10</sup>, հյուսիսային կողմում եղել է մի զգալի ծավալ (հիշենք եկեղեցու բեմի հարավային կողմի անկյունային պատը, Դադի կոթողի տակ գտնվող ավերակված բեկորն ու մնանատիպ, սակայն զգալիորեն փոքրածավալ բազմաթիվ բեկորներ և վերջապես արևելյան կողմում հայտնաբերված հիմնապատը), որը կարող էր բազիլիկին ժամանակակից կամ նրա մի մասը կազմող կառույց լինել (դա կարելի է պարզել պեղման աշխատանքների և խուզահորերի միջոցով): Այդ ծավալը հեռացվել է Դադի եկեղեցին կառուցելիս, և հեռացված ծավալի շինաղբով լցվել, բարձրացվել է կառուցվող Դադի եկեղեցու բեմը: Ընդ որում, կառուցողները գիտեին և տեսնում էին թաղման խուցը, քանի որ նորակառույց եկեղեցին նախագծվել է այնպես, որ խուցը հայտնվի նրա բեմի հատվածի կենտրոնում՝ առանցքի վրա, իսկ հեռացվող ծավալի կրաշաղախե միջուկով պատի բեկորները խնամքով շարել են խցի շուրջը՝ աշխատելով չվնասել այն:

ը. Հարկ ենք համարում մեկ անգամ ևս այստեղ նշել տարբեր զեկուցումներում արտահայտած այն կարծիքը, որ Դադի եկեղեցու գործառական նշանակությունը չի համապատասխանում եկեղեցի գործառույթին: Դա բացատրվում և փաստվում է հետևյալով՝ նախ կառույցն ունի ոչ սովորական՝ բավական երկար (406 սմ) նախախորան, որը բարձրացված է մինչև խորանի մակարդակը (110 սմ), ինչը չենք տեսնում միջնադարի եկեղեցական ոչ մի կառույցում: Նույնիսկ վաղ շրջանի և զմբեթավոր բազիլիկներում (Եղվարդ, Գվին, Մրեն, Տեկոր, Բագավան և այլն) խորանները, որ հաճախ են հանդիպում երկու մասից կազմված, և առաջին ուղղագիծ մասը՝ համեմատաբար ձգված, ցածր էին կառուցվում:

Երկրորդ՝ սրահի և նախախորանի երկայնական պատերին (հյուսիսային և հարավային) կան մեծ ու փոքր որմնախորշեր, 6-ը՝ նախախորանում, 4-ը՝ սրահում, որոնք եկեղեցիներին հատկանշական չեն: Առավել հետաքրքրական է նախախորանի հյուսիսային պատի ձախակողմյան խորշը, որը մյուսների համեմատ ունի առավել ճոխ հարդա-

<sup>10</sup> Արվազյան Ս., նշվ. հոդվ., էջ 201-203:



Նկ. 24. Սբ. Դաղի եկեղեցին (լուս.՝ Ս. Այվազյանի, 2009 թ.)

րանք, իսկ կենտրոնական մասում՝ կլոր անցք, որտեղ կարող էր կավե ջրատար խողովակ տեղադրված լինել, ինչը նույնպես կասկածի տակ է դնում կառույցի՝ որպես եկեղեցի գործառույթը:

Երրորդ՝ կառույցի խորանում կատարվել է թաղում (2007 թ. հայտնաբերվածը), ինչը չէր կարող լինել եկեղեցու պարագայում:

Չորրորդ՝ կառույցի շինարարությունը չի ավարտվել<sup>11</sup>, մնացել է առանց ծածկի կամ հենց այդպես է նախագծվել, իսկ եկեղեցու լրիվ գործառույթի համար այն պետք է ծածկ ունենար:

Հինգերորդ՝ բոլոր ժամանակաշրջաններում եկեղեցիները կառուցվում էին այնպես, որ խորանում արևելքից առնվազն մեկ լուսամուտ բացվեր, ինչը կապվում է արևի, լույսի, նույնական է Քրիստոսի փրկարար լույսի հետ, և համապատասխանաբար եկեղեցիներն էլ ունեն արևելք-արևմուտք ուղղվածություն՝ արևելքում տեղադրված սուրբ խորանով և այնտեղից սփռվող լույսով: Այս դեպքում եկեղեցին ոչ մի լուսամուտ չունի, չնայած որ տեխնիկապես միանգամայն հնարավոր էր լուսամուտի գոյությունը:

Եվ վեցերորդ՝ կառույցը չունի սբ. սեղան, որն անհրաժեշտ է հոգևոր ծիսակատարությունների համար: Բենի կենտրոնում տեղադրվածը մեծածավալ կոթող է՝ խաչաքանդակներով և արձանագրու-



Ճարտարապետ Սամվել Այվազյանը և հնագետ Գագիկ Սարգսյանը դամբարանախցի մոտ (2009 թ.)

թյունով, որի վերևի մասում փորվածք է արված, որտեղ ժամանակին տեղադրվել է խաչաքանդակ: Կոթողը չէր կարող ծառայել որպես սբ. սեղան, քանի որ ունի 190 սմ բարձրություն, այսինքն՝ կրծքի կամ դրանից մի փոքր ցածր մակարդակի փոխարեն մարդու հասակից բարձր է:

Ք. Նախորդ եզրակացությունը, պեղումներից հայտնաբերված դամբարան-խուցը, կոթողի արևելյան մասում 2007 թ. բացված դիաֆրաղումը և ժամատան, փոքր գավթի, բազիլիկ եկեղեցու՝ դեպի Դաղի եկեղեցի բացվող մուտքերի<sup>12</sup>, որպես սրբավայր տանող ճանապարհի գոյությունը հիմք են տալիս ասելու, որ Դաղի եկեղեցու մեջ է այն սրբացված տարածքը, որի շուրջը դարերի ընթացքում կազմավորվել է վանական համալիրը, և ներկայիս Դաղի եկեղեցու կառույցը ծառայում է որպես դամբարան-սրբատեղի:

Դաղի եկեղեցու վերականգնման նախագծում կատարված փոփոխությունների համաձայն՝ հայտնաբերված դամբարանախուցը ներառվում է բենահատվածի նոր ծավալում: Այն աստիճաններով հաղորդակցվում է սրահի հետ բենի ճակատից բացվող մուտքով: Ներկայումս շինարարական աշխատանքների մեծ մասն իրականացվել է նախագծին համապատասխան (նկ. 24):

<sup>11</sup> Նման կարծիք է հայտնել Մ. Հասրաթյանը (տե՛ս Հայկական ճարտարապետության Արցախի դպրոցը, Երևան, 1992, էջ 50): Տե՛ս նաև Այվազյան Ս., նշվ. հոդվ., էջ 201:

<sup>12</sup> Մուտքերի մասին տե՛ս Այվազյան Ս., նույն տեղում:

# ՆՈՐ ՏՎՅԱԼՆԵՐ ԽԱԹՐԱՎԱՆՔԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԸՆԹԱՅՔԻ ՄԱՍԻՆ

Մամվել Կարապետյան

Խաթրավանքն Արցախի առավել հայտնի վանական այն համալիրներից է, որն ամբողջացել է տարբեր ժամանակներում կառուցված և վերակառուցված մի շարք շինությունների ստեղծման արդյունքում:

Մի քանի մատուռ-եկեղեցիներից, գավթից, կրկնահարկ մահարձանից, տապանատնից, սեղանատնից և օժանդակ այլ կառույցներից բաղկացած վանական համալիրի շինությունները, առանձին-առանձին վերցրած, մասնավորապես ճարտարապետական առումով թերևս այնքան էլ նշանակալի կառույցներ չեն, սակայն տվյալ դեպքում չափազանց հետաքրքրական են՝ որպես համալիրը գոյացրած բաղադրիչներ, քանի որ վանական համալիրը վերջնականապես ձևավորվել է ժամանակի ընթացքում մեկը մյուսի հետևից ծնունդ առած շինությունների շնորհիվ, ուստի ինքնին կարևորվում է վանքի գոյացման շինարարական փուլերի ուսումնասիրության խնդիրը:

Ինչպես այլուր, Խաթրավանքի պարագայում ևս կառույցների ժամանակագրական հաջորդականությունը մասամբ պարզվում է միմյանց հպված տարբեր որմնակից շինությունների «կարերի» ուսումնասիրությամբ: Խաթրավանքում, բարեբախտաբար, բավականաչափ առատ են նաև պահպանված շինարարական արձանագրությունները, որոնք էլ առավել օգնում են խնդրի պարզաբանմանը<sup>1</sup>:

Մկզբից ևեք ցանկանում ենք նշել, որ բազմաթիվ շինություններից բաղկացած վանական համալիրում, այնուամենայնիվ, առավել վաղ թվագրված հուշարձանները ոչ թե ճարտարապետական կառույցներն են, այլ ավերված գերեզմանոցից մեզ հասած 1104<sup>2</sup>, 1167, 1179 թթ. խաչքարերը:


Մասնավորապես 1167 թ. խաչքար է պահպանվել ԺԷ դարում վերակառուցված եկեղեցու գլխավոր խորանից դեպի արևելք բացված լուսամուտից ներքև, արտաքուստ.

«ԹՎ(ին) Ո/ԺՁ (1167), գ/Մխիթար / մեղա/տը յի/2եց/(է)ք»:

Երկրորդ խաչքարը գտնվում է վանքի հիմնական կառույցներից մոտ 100 մ հարավ՝ ավերված գերեզմանոցում.

1 Մի շարք այցելությունների շնորհիվ Խաթրավանքում համալիր ուսումնասիրություններն իրականացվել են 1978-2011 թթ. ընթացքում:

2 Այս խաչքարն ագուցվել է 1204 թ. կառուցված եկեղեցու բարավորին, որի մասին տե՛ս իր տեղում:



Խաթրավանք. խաչքար, 1167 թ. (լուս.՝ 2011 թ.)



Խաթրավանք. խաչքար, 1179 թ. (լուս.՝ 2011 թ.)



Խաթրավանքի տեսքը հյուսիս-արևմուտքից և հարավ-արևելքից (2011 թ.)

«ՈՒԸ (1179) քվակ/անին ... /... / ին... / ...կանգնե-  
ցաք զ/խաչս ի տապանիս, ո/րք երկրպագէք / յիշե-  
ցէք»:

Ահա այս երկու խաչքարերը վկայում են, որ  
Խաթրավանքից մեզ հասած նախքան ամենահին


շինության՝ միանավ փոքրիկ եկեղեցու ծնունդը  
(որը, ինչպես ստորև կտեսնենք, կառուցվել է ոչ թե  
գրականության մեջ ցարդ բազմիցս վկայակոչված  
1204 թ., այլ նրանից 22 տարի ավելի վաղ՝ 1182 թ.)  
տեղում եղել է խաչքարերով գերեզմանոց: Ընդ ո-

րում, խաչքարերի և տապանաքարերի մի մասը հետագա դարերում, օտար տիրապետություններով պայմանավորված, մշակույթի անկումային շրջանում գործածվել է որպես շինաքար:

Եվ այսպես, վանական համալիրի հնագույն շինությունը, ինչպես դա պարզվում է հենց նույն կառույցի հարավային որմին արտաքուստ ագուցված շինարարական արձանագրությունից, հյուսիսակողմի միանավ եկեղեցին է: Այստեղ հարկ է նշել, որ տարօրինակաբար նախկին բոլոր հետազոտողների տեսադաշտից վրիպած 14 տողով փորագրված և ցարդ անխաթար պահպանված արձանագրությունը պարզում է, որ Խաթրավանքի՝ մեզ հայտնի հնագույն եկեղեցին արդեն 1182 թ.<sup>3</sup> հիմնադրել է Դեսումի դուստրը՝ Սեդան, ով միևնույն ժամանակ հանդես է եկել նվիրատվությամբ: Հանգամանք, որը թույլ է տալիս ենթադրելու, որ նորակառույցն ինքը բնավ էլ տվյալ վայրի կառույցների առաջնեկը չէր, այլ, ըստ երևույթին, վայրն արդեն ուներ հոգևոր կենտրոնի բովանդակություն և նշանակություն, չնայած որ դեռևս չունեի հաստատված վանահայրառաջնորդ:

Սեդայի կառուցած եկեղեցու շինարարական արձանագրությունն ավանդում է.

*Ես Սեդա դուստր Դեսումա շինեցի զեկեղեցիս եւ ետու զՅորդաձորոս սորբ նշանս մեծ ծախիք ի սմա, վխան իմ հոգոյս, արդ առաջնորդ ով լիինի*



*սմա զԱռաքելոցն տաներն :Դ: (4) ալր ժամ իմ հոգոյս արխցէ յամէն ամի, որ խափանէ իմ մեղացն | պարտական է, թ(վին) :ՈԼ/Ա: (1182):*  
Հրատ. առաջին անգամ:

Վանքի շինարարական ընթացքը լուսաբանող հայտնի հաջորդ վիմագիրը 1204 թ.-ից է և, չնայած այն հանգամանքին, որ վերջինս գիտական շրջա-

3 Հենց այս արձանագրության հիմքով ցարդ գիտական գրականության մեջ Խաթրավանքի հիմնադրումը վերագրվել է 1204 թ. (տե՛ս **Սյրոչյան Շ.**, Լեռնային Գարաբաղի պատմաճարտապետական հուշարձանները, Երևան, 1985, էջ 48; **Ուլուքաբեան Բ., Հարաբեան Մ.**, Խաղավանք-Խաթրավանք, «Հայկազեան հայագիտական հանդես», հ. Ժ, Պէյրոս, 1984, էջ 23-24; **Thierry J.-M.**, Eglises et couvents du Karabagh, Antélias-Liban, 1991, p. 89-90):

նակներին հայտնի է դեռևս 1858 թ.-ից<sup>4</sup>, իսկ ավելի ուշ էլ ունեցել է երկու նոր հրատարակություն<sup>5</sup>, այնուամենայնիվ, այսօր էլ կարիք ունի որոշ պարզաբանման: Խնդիրն առնչվում է դեռևս 1960-ական թթ. արձանագրագիտական հատուկ գիտարշավի մասնակիցների ջանքերով Երևան փոխադրված վիմագրի գտնված նախնական վայրի անորոշությունը, քանի որ ժամանակին կոտրատված արձանագրության բեկորները հավաքել են առանց դրանց գտնված վայրի մասին բավարար տեղեկություններ հաղորդելու:

Նշենք, որ արձանագրության առաջին հրատարակիչն ընդհանրապես չի անդրադարձել գտնված վայրի նկարագրությանը, մինչդեռ երկրորդ հրատարակիչը վկայել է, որ արձանագրությունը գտնվելիս է եղել «Արտաքուստ տաճարիս արևելեան ճակատին»<sup>6</sup>:

Ըստ ամենայնի, արդեն կոտրատված և որմի առջև թափված բեկորների առնչությամբ 1960-ական թթ. տեղում աշխատած գիտարշավի ղեկավար Ս. Բարխուդարյանն էլ նշել է, որ արդեն տեղահան արձանագրությունը գտնվելիս է եղել եկեղեցու «արևելյան պատին արտաքուստ, նրա կենտրոնական վերին մասում»<sup>7</sup>:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ միմյանց կից երեք եկեղեցիների արևելյան ճակատներից հյուսիսայինի<sup>8</sup> և կենտրոնականի նշյալ հատվածները ցարդ միանգամայն անադարտ են, մինչդեռ հարավայինն է, որի արևելյան ճակատից՝ հատկապես լուսամուտից վեր ընկած հատվածից երեսպատի քարեր են թափված, կարելի է եզրակացնել, որ խնդրո առարկա արձանագրությունը հենց այս եկեղեցուն է պատկանելիս եղել:

Հինգ բեկորների բաժանված փոքր-ինչ անհարթ մակերևույթով սալաքարին 10 տողով փորագրված և բովանդակությամբ երկու մասի բաժանված արձանագրության մեջ ոչ միայն վկայվում է Խաթրավանքում արդեն երկրորդ եկեղեցու (տե՛ր Հովհաննեսի ձեռքով) կառուցման մասին, այլև շեշտվում է հոգևոր կենտրոնի՝ վանք լինելու հանգամանքը.


*Ի ՈԾԳ (1204) թուխս ես տ(է)ր Յոհանէս շինեցի զեկեղեցիս եւ ժողովեցի զխաչ եւ զգիրք որ ի սմա եւ արկ | զՋոթացն այգին եւ զՄատաղիսն բազում աշխատութ(եամ)ք | եւ ետու զվանքս իր ամէն սահմա-*

4 Որոշ աղճատումներով վիմագրի առաջին հրատարակիչն է Ս. Ջալալյանը (տե՛ս նրա՝ Ծանապարհորդություն ի Մեծն Հայաստան, հ. Բ, Տփղիս, 1858, էջ 230-231):  
5 **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, Բագու, 1895, էջ 194: Տե՛ս նաև Դիվան հայ վիմագրության, պրակ 5, Երևան, 1982, էջ 121-122:  
6 **Բարխուտարեանց Մ.**, նույն տեղում:  
7 Դիվան հայ վիմագրության, պրակ 5, էջ 121:  
8 Ի դեպ, այս արձանագրությունը հյուսիսային եկեղեցուն վերաբերել չէր կարող նաև այն պատճառով, որ վերջինս հարավային ճակատին արդեն ուներ իր շինարարական արձանագրությունը (1182 թ.), իսկ կենտրոնական եկեղեցու արևելյան ճակատն էլ ամբողջությամբ ԺԷ դարի վերակառուցում է:



նա իմ առագ աղբարս Հաս/անա եւ իր որդեացն Հաթերք տեսանն միջնորոթ(եամ)ք, ով խ/ափանէ խափանեցի ի կենացն ա(ստուծոյ): Յանուն ա(ստուծոյ) այս իմ գիր է Հաս/անա, որ երբ աղբերս զեկեղեցիս շինեաց ու զվանքս ինձ երես, ես | զԽնձորորակս իր սահմանովն ի յեկեղեցիս տուի, ով հակ/առ կա ա(ստուծոյ) է հակառակ, ով զայս գիրս խափանէ, չունի թող/ութի(ւ)ն յա(ստուծոյ):

Այս նույն եկեղեցու արևմտյան ճակատից բացված միակ մուտքին որպես բարավոր է ծառայում հորիզոնական դիրքով ազուցված պարզ հորինվածքով և քառատող արձանագրությամբ մի խաչքար.



Խաթրավանք. խաչքար, 1104 թ. (լուս.՝ 2005 թ.)

Թվ(ին) (Շ)ԾԳ (1104), | զԳիրոզ | յաղարթս յիշեցեալ:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. ըստ գրչագրական և ոճական առանձնահատկությունների՝ կարծում ենք, որ գրչի բաց թողած հարյուրավորը Շ-ն է (600), հետևաբար՝ 1104 թ.:

Խաչքարի՝ 1104 թ. կերտված լինելուն ավելի հակված ենք՝ հիմք ընդունելով ոչ միայն գրչագրական և հորինվածքային առանձնահատկությունների ուսումնասիրությունը, այլև այն, որ քիչ հավանական է, որ 1204 թ. կառուցված եկեղեցուն՝ իբրև բարավոր, ազուցվեր նույն թվականին ի սկզբանե որպես խաչքար կերտված հուշարձանը:

Վանքի շինարարական ընթացքը լուսաբանող հաջորդ վիմագիրն արդեն 1890-ական թթ. սկզբներին պահպանվել էր նախնական տեղից վայր ընկած բեկորի տեսքով<sup>8</sup>: 1960-ական թթ. արձանագրության միայն մի հատվածը պարունակող նշյալ բեկորն իսկ չէր վերագտնվել, և «Դիվան»-ի կազմողները ստիպված պարզապես վերահրատարակել էին այն՝ օգտվելով նախորդ և միակ հրատարակությունից: 1999 թ. տեղում գտնվեց խնդրո առարկա արձանագրության երկու բեկորները, սակայն նույն ժամանակ պարզվեց, որ առնվազն երկու բեկոր էլ դեռ պակասում էր:



Մ. Բարխուտարյանցի ընթերցման և մեր գտած երկու բեկորների ամբողջացման արդյունքում 1215 թ. «կամար»-ի կառուցման մասին վկայող այս արձանագրությունից ընթերցվում է հետևյալը.

8 Բարխուտարյանց Մ., նշխ. աշխ., էջ 121-122:

(Կաման աստուծոյ) եւ Հասան եւ | [մայր իմ] Շուշիկ շինեցա[[ք գտորք կամար] Պետր(ո)ս հար իմո՛ Խ| ...գթամբար| ...տեղն| ...տապանա/տունս ի [տարին]... ...պատարագ | առնեն իմ հայր ...| ով գգրեայս խ[ափաննէ ջանա]] որոշեալ եղիցի ...|ուրե- նէն, ի թ(վ)ին Ո[ԿԳԴ] (1215):

Հրատ. Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 194; Դիվան հայ վիճագրության, V, էջ 129:

Դժվար է հաստատապես պնդել, թե «կամար»-ը, որի կառուցման մասին վկայել է սույն արձանագրու- քյունը, համալիրի որ շինությանն է վերաբերում: Թերևս դա կարող էր լինել համալիրի հյուսիսային կողմում կանգնած կրկնահարկ մահարձանը, որի ա- ռաջին հարկը պարզ թաղ՝ «կամար» է, իսկ երկրորդ հարկում միմյանց կից կանգնեցված են եղել զույգ խաչքարեր (պահպանվել են միայն պատվան- դանները՝ փշրված խաչքարերի մնացորդներով):

Վանական համալիրում առանձնապես խոշոր ծավալի շինարարական աշխատանքներ են իրա- կանացվել 1225 թ.: Փաստորեն նշյալ թվականին որոշվել է արդեն գոյություն ունեցող 1182 և 1204 թթ. կառուցված եկեղեցիների (իրենց փոքր չափերի համար վերջիններս կարելի է նույնիսկ մատուռ ան- վանել) միջանկյալ ազատ տարածությունը տրա- մադրել մինչ այդ գոյություն չունեցած գավթին: Ընդ որում, հանրահայտ Չաքարե և Իվանե եղբայրների քույրը Դոփը, գավթի հետ միասին նույն թվակա- նին կառուցում է նաև մի մատուռ, իսկ այդ մասին պատմող տաստողանի արձանագրությունը փորա- գրել է տալիս նորակառույցի հյուսիսային ճակա- տին (արևմտյան անկյան մոտ):

Թո(ւ)ին Ո՛ՀԳ (1225). եւ Դոփս դուստր Ս(ա)րգ- սի, քոյր Չաքարեի եւ Իւանեի շ[ինեցի զգաւիթս եկե- ղեցոյս եւ զմա/տուռս եւ տվի զաւետարանս եւ | յԱնկաբակոց երկիրն եւ զիմ Հակոբեանայ մատա- ղիսն յեկեղեցիս իմ հոգոյ յԱ(ստուա)ծածնիմ. |



ժամն :Գ: (3) ար ինձ արարե[ք, ով խափանէ չունի թո/ղութիւն Ա(ս- տուծոյ):

Հրատ. Շահխաթու- նեանց Յ., Ստորագրու- քին Կաթողիկէ Էջ- միածնի և հինգ գաւա- ոսցն Արարատայ, Բ, էջմիածին, 1842, էջ 363-364; Չալալեանց Ս., Դանապարիորդու- քին ի Մեծն Հայաս- տան, Տփլիս, 1842, Ա, էջ 207; Դիվան հայ վի- մագրության, V, էջ 127:

Ծանոթ. Շահխա- քունյանցի ընթերցման մեջ առկա սխալների նույնական կրկնու- քյունները Չալալյանցի

մոտ (օրինակ՝ «եկեղեցոյս»-ի բաց թողումը, «Հակոբեանայ զիմ մատաղիս» սխալ ընթերցման կրկնությունը և այլն) վկայում են, որ Չալալյանցը բավարարվել է վիճագրի տուկ վերահրատարա- կումով: «Դիվան...»-ի կազմողները սխալ են վերծանել տեղա- նունը («Հակոբեանայ» ձևով) և ներկայացրել անիրական գրչանկար: Ի դեպ, Հակոբեան տեղամասը Հըկոռան արտա- սանությամբ այսօր էլ հայտնի է Վաղուխասի և Խունկութայի բնակիչներին: Քարի չափերն են՝ 35 x 47 սմ:

Եթե արձանագրության մեջ հիշատակված գա- վիթն աներկբա ցարդ կանգուն գավիթն է, իսկ «զգաւիթս եկեղեցոյս» ասելով կարելի է հասկանալ գավթի արևելյան կողմում կառուցված և 1691 թ. վերակառուցված խորանը, որով փաստորեն արդեն գոյություն ունեցող եկեղեցիների միջև ձևավորվել էր համալիրի կենտրոնական կամ գլխավոր եկեղե- ցին, ապա վկայակոչված «մատուռ»-ը թերևս հա- մալիրի հյուսիսարևմտյան անկյունում ձևավորված կցակառույցն է:

Ինչ վերաբերում է մատուռի վրա կանգնեցված 1219 և 1220 թթ. գեղաքանդակ զույգ խաչքարերին,



խաքրավանք. 1219 և 1220 թթ. խաչքարեր (ուս.՝ 1999 թ.)

ապա կարելի է ենթադրել, որ մի քանի տարի ավելի վաղ կերտված այս խաչքարերը մատուռի տանիքին են զետեղվել կա՛մ 1225 թ., կա՛մ դրանից ոչ շատ ժամանակ անց:

1219 թ. խաչքարին (148 x 72 սմ) 8 տողով արձանագրված է.

*Թ(վին) ՈԿԸ (1219) | ես Հասան որդի Գրիգորոյ կանգնեցի զիս/աչս եղբար իմոյ Շամսադին/ին, տվի տիրիցորոյ տունն, զԹող/ակերտն ի Խաղարի վանս ծառզար/դար(ի) արն եկեղեցի...:*

Հրատ. Գիվան հայ վիմագրության, V, էջ 126:

Ծանոթ. «Գիվան»-ը շուրհի «ծառզար/դար(ի) արն եկեղեցի...» հաստվածը:

1220 թ. խաչքարին (132 x 68 սմ) 10 տողով արձանագրված է.

*Թ(վին) | ՈԿԹ (1220) | ես Գրիգոր որդի Վարհամայ | տվի զԱրեւշատանց երկ/իրն, Գորատափին այգին տվի Խաղարի վանս, տարու/մն :Ե: (5) ար ժամ իմ հոգոյ/ս արարայք ս(ուր)ք Գորգին:*


Հրատ. Գիվան հայ վիմագրության, V, էջ 126:

Ծանոթ. «Գիվան...»-ում տեղանունը սխալմամբ՝ «զԱրեւտանց» ձևով: Ի դեպ, «Արևշատանց» տեղանունը հիշատակվում է նաև Խաթրավանքի ևս մեկ արձանագրության մեջ, ինչպես նաև Չափար գյուղից արևելք՝ Սորփեն հարթ հնավայրի վիմագրերից մեկում:

Այնքանաբար 1225 թ. կառուցված գավիթ-եկեղեցու խորանի կառուցման մասին է ավանդում գավթի արևմտյան ճակատին ներքուստ ագուցված

թե՛ արտաքուստ խորանի որմերին ագուցվել են բազմաթիվ, այդ թվում արձանագիր խաչքարեր և տապանաքարեր: Ուշ միջնադարին հատուկ մշակութային ընդհանուր անկումային իրավիճակի վառ դրսևորում է նշյալ գերեզմանական հուշարձանների՝ սուկ իբրև շինաքար գործածելը: Գրանք ոչ միայն ամենապատահական դիրքով (մեծ մասամբ՝ հորիզոնական) ագուցվել են վերակառուցված խորանի որմերում, այլև դրանցից, ըստ հարմարության, ձևել են ճարտարապետական նոր մասնիկներ: Այս կերպ, օրինակ, ԺԲ-ԺԳ դարերում իշխան Հասանի հիշատակին կերտված տապանաքարը վերածվել է խորանից բացված լուսամտի գլխաքարի:

Ներկայումս համեմատաբար հեշտությամբ ընթերցվող տապանագրի սկզբնամասում կարդում ենք.



Այս է հա/նգիստ իշխան Հասա/(նա)...  
Հրատ. առաջին անգամ:

ոչ մեծ խաչքարի (65 x 32 սմ) խաչաթևերի միջև և ստորին մասում 6 տողով փորագրված արձանագրությունը.

*ՈՉԸ (1239) | ես Վարհամ շինեցի | զխորանս եւ տի | Հակոբեն :Ա: (1) | համադկի հող:*

Հրատ. առաջին անգամ:

Ի դեպ, գավիթ-եկեղեցու խորանի հաստվածը հիմնավոր վերակառուցման է ենթարկվել նաև շուրջ չորսուկես դար անց՝ 1691 թ., ընդ որում, այս վերջին վերակառուցման ժամանակ թե՛ ներքուստ և

Խորանի բեմի ճակատին 1691 թ. իրականացված վերակառուցման մասին 7 տողով արձանագրվել է.

*Թ(վին) ՌՃԽ (1691), | շնորհիւ ամենագոր(ի)ն Ա(ստուծո)յ, մեք ն(ո)ւ(ա)ստ(ա)ց(եա)լ ծ(ա)ռ(ա)յք Ք(րիստոս)ի | Ոհ(ա)ն(ե)ս, Բ(ա)րս(ե)դ, Աք(ա)ն(ա)ս, Ղ(ա)զ(ա)ր վ(ա)րդ(ա)յ(եա)քս, որոց սեռ | գոլ(ո)վ մեծափ(ա)ռ իշխ(ա)նին Հ(ա)սանա շ(ի)ն(ե)ց(ա)ք զս(ուր)ք տա/ճ(ա)րս Ա(ստուա)ծ(ա)ծնի եւ ս(ուր)ք Առ(ա)ք(ե)լ(ո)ցն, յ(ա)ջ(ա)կ(ո)ղմ(եա)ն :Բ: (2) խ(ո)ր(ա)նս, :Գ: (3) մեծ | կամ(ա)րօքն մինչ ի ատեն(ի) հին կամ(ա)րն կց(եա)լ ք(ա)զ(ո)մ երկամբք | եւ աշխ(ա)տ(ա)նօք ի դ(ա)ռն ժամ(ա)նակի աղօթս յ(ի)շ(ե)լ աղ(ա)չ(ե)մք:*



Հրատ. Ջաղախանց Մ., նշվ. աշխ., Բ, էջ 231; Դիվան հայ վիճագրության, V, էջ 126:

Ծանոթ. «Դիվան»-ում, մանր տարրներցումներից գատ, վերջին՝ «աղ(ա)չ(ե)մք» բառը սխալմամբ վերծանվել է «Ղազար ք(ահանայն)», և դրանից էլ հորինվել է, թե իբր Ղազարը եղել է արձանագրության փորագրողը:

Ուշագրավ այս արձանագրությունից նախ պարզվում են համալիրում առկա եկեղեցիներից երկուսի՝ Սբ. Աստվածածին և Սբ. Առաքելոց անունները, ինչպես նաև երկու խորանների, մինչ ատենի հին կամարը հասնող երեք նոր կամարների նորոգության մանրամասները:

Թերևս շինարարական ինչ-որ դրվագ է լուսաբանել նաև գավիթ-եկեղեցու արտաքուստ հարավային պատի՝ զգալի մասով իսպառ հողմահար երեսապատի երկու շարք սրբատաշ կամ կոփածո քարերին փորագրված քառատող արձանագրությունը.

...նորոգ ի :ՂԵ: (95) ...որոգ շր... / ստեղծման բարեացս ի տ(եառն)է ամէն / ...ազատ չորեքտասան...




...եւ ձեռնտութ(եամ)ք... / [դուստր Հասա]նա Դոփեան:

Հրատ. Դիվան հայ վիճագրության, V, էջ 125:  
Ծանոթ. ժամանակը՝ ԺԳ դար: Աչքի է ընկնում շքեղ և մեծաչափ տառերի (18 սմ) ընտիր գրչությանը: «Դիվան»-ի հրատարակության համեմատ ներկայացնում ենք առավել լրացված վերծանությունը:

Խաթրավանքում ծավալված շինարարական գործունեությանն է առնչվում նաև իշխանուհի Ասփայի թողած, սակայն արդեն 1960-ական թթ.-ից անհետ կորած այն արձանագրությունը, որտեղ խոսվում է խորանի վեմքարի կամ «բեմի սեղան»-ի տեղադրման մասին.

Շնորհիւն Քրիստոսի եւ Ասիե դուստր արքայաշուք իշխանին Տարսայիճին, թագազարմ մօրն իմոյ Մինախաթունին նպաստ եղեալ քրիստոսապասկ գլխոյ իմոյ մեծափառ իշխանին Գրիգորի ի շինութիւն լուսանուէր սուրբ եկեղեցոյս՝ կամեցաւ ի ձեռն քահանայապետին մեծի տ(եառ)ն Յօհաննիսի, զիմ յարդար ընչից կանգնեցի բեմի սեղան ի



զենմանն Քրիստոսի, զի ամենայն կիրակե և շաբաթ տօն ծննդեան և տեսարնընդառաջին, զատկին, վարդավառին և աստուածածնին և ս(ուր)բ խաչին ինձ կատարի պատարագ զամէն եկեղեցիքս, որ և տվի զմեր խաս հողն, բրի հանդի կապն Ա (1) բահի ջուր, թէ որ ի մերոց կամ յօտարաց զայս՝ այս եկեղեցոյս հանէ, կամ զպատարագն խափանէ՝ ի փառաց որդւոյն աստուծոյ որոշեալ եղիցի:

Հրատ. **Շահխաբունեանց Յ.**, նշվ. աշխ., Բ, էջ 362; **Ջալալեանց Մ.**, նշվ. աշխ., Ա, էջ 205-206; **Բարխուդարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 194; Գիվան հայ վիմագրոյթյան, V, էջ 129:

Ծանոթ. ինչպես իրավամբ նկատել են «Գիվան»-ի հրատարակիչները, եկեղեցու բեմի ճակատին այս վիմագիրը գոյություն չունի, ուստի արձանագրոյթյան գտնվելու իրական վայրը դեռևս ճշման կարիք ունի:


Ներկայումս կորած շինարարական բնույթի արձանագրոյթյուններից մեկն էլ, որը գտնվելիս է եղել եկեղեցու «ձախակողմեան փոքր խորանի վերայ», ավանդում է, որ վանքի եկեղեցիներից «ձախակողմյանը» օժված Սբ. Պրոկոպիոսի անվամբ, կառուցել է վանքի առաջնորդ տեր Հովհաննեսը:

Այս ձախակողմ խորանի սուրբ Պրոկոպիոս է, զմեծ տեր Յովհաննէս շինող եկեղեցոյս որդի Դաւիին, եղբայր մեծ իշխանին Հասանայ, աղաւթս յիշեցէք:

Հրատ. **Շահխաբունեանց Յ.**, նշվ. աշխ., Բ, էջ 362-363; **Ջալալեանց Մ.**, նշվ. աշխ., Ա, էջ 206; **Բարխուդարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 195; Գիվան հայ վիմագրոյթյան, V, էջ 128:

Ամփոփելով Խաղայի կամ Խաթրավանքի կառուցապատման փուլերը՝ ցանկանում ենք ընդգծել, որ վանքի հնագույն եկեղեցին հիմնադրվել է ոչ թե 1204, այլ 1182 թ., ընդ որում, վանական համալիրը ձևավորվել և ամբողջացել է գրեթե վեց տասնամյակ շարունակ ծավալված շինարարական գործունեության ընթացքում (1182 թ.-ից մինչև 1239 թթ.), իսկ չորսուկեսդարյա ընդմիջումից հետո մասնակի վերակառուցվել է:

Վերոնշյալ շինարարական փուլերն առավել ակնառու դարձնելու նպատակով ներկայացնում ենք վանական համալիրի վեց հիմնական փուլերից բաղկացած հատակագծային փոփոխություններն ու զարգացումները:




Խաթրավանքի գլխավոր հատակագիծը (չափ.՝ Է. Աբրահամյանի և Ս. Կարապետյանի, 2005 թ., հրատ. պատրաստեց Ճարտ. Ա. Դակոբյանը, 2012 թ.)

## 910 Թ. ՆՈՐԱՀԱՅՏ ԽԱՉՔԱՐԻ ԲԵԿՈՐ ԽՈՏԱԿԵՐԱՅ ՎԱՆՔԻՑ

### Րաֆֆի Զորթոշյան

2010 թ. Վայոց Ձորի մարզի Խաչիկ գյուղի մոտ գտնվող Խոտակերաց կամ Քարկոփի վանքում ընթանում էին վերականգնման աշխատանքներ: Վանքն ամբողջությամբ վերածվել էր շինհրապարակի: Ցավալի էր տեսնել, որ այդտեղ անխնամ կերպով թափված էին ինչպես ճարտարապետական, այնպես էլ գերեզմանական բնույթի տարբեր բեկորներ: Դրանց մեջ ուշագրավ էր փորագիր, երկտող, հստակ ընթեռնելի արձանագրությամբ թվակիր խաչքարի մի բեկոր (պահպանվել է ստորին հատվածը):

*ԹԻ(Լ)Ս ՅԾԹ:*



910 թ. սույն խաչքարի բեկորը փաստորեն Հայաստանի Հանրապետության տարածքում մեկ հայտնի ստույգ թվագրում ունեցող հնագույն խաչքարերից մեկն է և գիտական շրջանակներին ցարդ հայտնի Հորթուն գյուղատեղիում գտնվող (Արարատի մարզ) ամենահին խաչքարից<sup>1</sup> «երիտասարդ» է ընդամենը 34 տարով:

Ի դեպ, խաչքարի բեկորը հասակակից է վանքի ամենահին կառույցին՝ Սբ. Աստվածածին եկեղեցուն<sup>2</sup>:

1 **Կարապետյան Ս.**, Ամենահին թվագրությամբ նորահայտ խաչքարը, «Արարատ» (շրջանային թերթ), 1986, № 151, 20 դեկտեմբեր, էջ 3: Տե՛ս նաև նույնի՝ Ամենահին թվագրությամբ նորահայտ խաչքարը, «Էջմիածին», 1987, Ե-Ձ, էջ 80-81:

2 Խոտակերաց վանքի Սբ. Աստվածածին եկեղեցին 910 թ. կառուցել է Սյունյաց իշխանուհի Շուշանն ամուսնու՝ Սյունյաց Աշոտ իշխանի կառուցած և 800-ական թթ. վերջերին տեղի ունեցած ուժեղ երկրաշարժից քանդված եկեղեցու տեղում (**Մտեփանոս Օրբելյան**, Սյունիքի պատմություն, Երևան, 1986, էջ 214-216):

## ԱԳՈՒԼԻՍԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՂԵՌՆԸ

### Մամվել Կարապետյան

1988 թ.-ից ի վեր, երբ տեղի ունեցավ Նախիջևանի Ինքնավար Հանրապետության տարածքի բնիկների բռնագաղթը, և երկրամասը փակվեց իրենց հայրենիքից վտարված հայազգի քաղաքացիների համար, գրեթե անհնարին դարձավ տարածքում գտնվող հայկական պատմական հուշարձանների վիճակի մասին տեղեկությունների հայթայթումը:

Անշուշտ, պետական մակարդակով օրնիբուն հայաստանացիներն քարոզող աղբյուրներից իշխանությունների կեցվածքը և դեռևս «խաղաղ» տարիներին հայկական պատմական հուշարձանների, հատկապես քրիստոնեական շերտի նկատմամբ իրականացված բազմաթիվ ոտնձգությունները վատ կանխագագումների հիմք էին տալիս, սակայն, այնուամենայնիվ, շուրջ տասը տարի՝ մինչև 1998 թ., երկրամասի պատմական հուշարձանների մասին հավաստի որևէ տեղեկատվություն ձեռք բերել այդպես էլ հնարավոր չեղավ:

Վանդալական գործողությունների մասին հանրությունն առաջին անգամ իրազեկվեց միայն 1998 թ., երբ Արաքսի իրանական ափից լուսանկարներով վավերացվեցին Հին Ջուղայի միջնադարյան գերեզմանոցի՝ բուլղոզերներով ավերման պահերը:

Հակառակ մինչև ՅՈՒՆԵՍԿՕ բարձրացված ահագանգին և բողոքներին՝ ջարդարարությունը շարունակվեց, և արդեն 2003 թ. կատարված լուսանկարները պարզեցին, որ հնավայրի բազմահազար կանգուն բոլոր խաչքարերն էլ տապալված էին:

2005 թ. ամռանը, երբ նախորդ տարիներին ստացած մի քանի մերժումներից հետո ի վերջո մեծ դժվարությամբ Նախիջևան կարողացավ մուտք գործել շոտլանդացի հետազոտող Սթիվեն Սիմը, բացահայտվեց, որ վանդալական գործողությունները բնավ էլ չեն սահմանափակվել սոսկ Ջուղայի գերեզմանոցով, այլ դրանք կրել են համատարած բնույթ: Համենայն դեպս, հազիվ երեք օր աշխատելու հնարավորություն ունեցած Ս. Սիմը (նախիջևանյան իշխանությունները երրորդ օրը նրան ձերբակալում և վտարում են երկրամասի տարածքից) իր այցելած հնավայրերում այլևս պատմական որևէ հուշարձան չէր գտել:


Նա, ի լուր աշխարհի, գուժեց Աբրակունիսի Սր. Կարապետի մեծահոշակ վանքի և Շոռոթ գյուղի եկեղեցու՝ հիմնահատակ ոչնչացման լուրը:

Հաշված ամիսներ անց՝ նույն թվականի դեկտեմբերին, Արաքս գետի իրանական ափից փաստագրվեցին ծանր մուրճերով զինված աղբյուրներից անհայտ աննախադեպ վանդալական գործողությունները, որի արդյունքում Ջուղայի գերեզմանոցի՝ արդեն տապալված բազմահազար խաչքարերն ու տապանաքարերը վերածվեցին խճազանգվածի, և հաշված օրերի ընթացքում Երկրի երեսից մեկընդմիջտ ջնջվեց աշխարհահոշակ հնավայրը:

Եղերական այս դեպքից հետո հաստատվեց, որ փաստորեն քաղաքակրթության և համայն մարդկության դեմ կատարվել է ողջ երկրամասը ներառած պետական մակարդակով ծրագրված հանցագործություն: Ընդ որում, հակառակ բազում ուրացումների, կեղծավոր, ստահող և խուսափողական տեղեկատվությունների, այսօր արդեն առկա են անժխտելի իրողության ցավալի ապացույցները: Խոսքը վերաբերում է 2011 թ. հուլիսի 17-ին տիեզերքից կատարված լուսանկարի միջոցով ձեռք բերված նոր տվյալներին, որոնցից մասնավորապես պարզվում է, որ այլևս գոյություն չունեն ոչ միայն արդեն ահագանգված Ջուղայի գերեզմանոցը, Նախիջևան քաղաքի և մերձակա Ալիապատ գյուղի եկեղեցիները, Աբրակունիսի վանքը<sup>1</sup>, այլև Վերին և Ներքին Ագուլիսների միջնադարյան ութ վանք-եկեղեցիները և հազարավոր տապանաքարեր պարունակող մի քանի գերեզմանոցները:

Ստորև համադրաբար ներկայացնում ենք բոլոր ութ հուշարձանների (1 վանք, 7 եկեղեցի)՝ արդեն երբեմնի գոյությունը փաստող տվյալները և սկսած վերհիշելով Վիկտոր Հյուգոյի մարգարեական խոսքերը («Ամեն կողմ ավեր ու սուգ, թուրքերն են անցել այստեղից»)՝ ցանկանում ենք շեշտել, որ, ի տարբերություն Եվրոպայի, Հայոց Հայրենիք ներթափանցած թուրքերը դեռ չեն «անցել այստեղից», նրանք ներկա են, նրանք «ապրում և գործում են» մինչև հիմա «ապրած» նախորդ դարերի նման...

<sup>1</sup> Թվարկված հուշարձանների ոչնչացման վերաբերյալ մանրամասները տե՛ս ամբողջությամբ այս խնդրին նվիրված «Վարձք» հանդեսի 2011 թ. № 3-ում:



Վերին և ներքին Ագուլիս գյուղերի և հարակից տարածքի համույթն ըստ ԽՍՀՄ զինվորական գլխավոր շտաբի 1:50.000 մասշտաբի քարտեզի (1977 թ.) և 2011 թ. հուլիսի 17-ին տիեզերքից կատարված լուսանկարի (լուս.՝ Google Earth)



Ներքին Ագուլիսի Անառային կամ Սբ. Նշան և Սբ. Ստեփանոս կամ Սբ. Երրորդություն եկեղեցիներ




Վերին Ագուլիսի Սբ. Հովհաննես-Սկրսիչ եկեղեցի




Վերին Ագուլիսի Սբ. Հակոբ-Հայրապետ եկեղեցի




Վերին Ագուլիսի Սբ. Շնավոն եկեղեցի






Վերին Ագուլիսի Սր. Աստվածածնի Մեծ անապատ վանք




Վերին Ագուլիսի Սր. Քրիստափոր եկեղեցի



Վերին Ագուլիսի Սբ. Թովմա վանք



Վերին Ագուլիսի Սբ. Ստեփանոս եկեղեցի



# ՄՈՌԱՅՎԱԾ ԽՆԵ

## Բաֆֆի Քորթոշյան

Խնե<sup>1</sup> գյուղը գտնվում է Սիրիայի Ճըսըր-Շոլուր գավառի հյուսիսում՝ Եագուպիե գյուղից արևելք՝ մի բլրակի վրա՝ Շեյխ Իսա անվամբ հայտնի հանքային ջերմուկի մոտ:

Գյուղն ունի բազմաթիվ աղբյուրներ և շրջապատված է պարտեզներով, ձիթենու և թզենու այգիներով<sup>2</sup>:

Գյուղանվան մեզ հայտնի առաջին հիշատակությունը Հալեպի զանձատանը պահվող սաղավարտն է՝ 1804 թ. հայերեն ելնդագիր երկտող արձանագրությամբ.

*Նոր(ո)գ(ե)ցի սաղ(ա)վ(ա)րդս ձեռամբ տ(ե)ր Յոհանէս զահանային և տրամբ իւր կողակցուն / և տրամբ Իտլիպու եղեալ ժողովրդոցն ի դռան Ս(ուր)բ Կիպրիանոսի Խնէ գուղին եկեղեց(ու)ն, ՌՄԾԳ (1804):*

Հրատ. առաջին անգամ:



Խնե գյուղի տեսքը տիեզերքից (լուս.՝ Google Earth, 2010 թ.). կարմիր օղակով մատնանշված է ավերված Սբ. Կիպրիանոս եկեղեցու տեղը

Հայանի է, որ հայր Սահակ Քեշիշյանը գյուղի մոտ ընդօրինակել է 1818 և 1856 թթ. վերաբերող հայերեն երկու արձանագրություն<sup>3</sup>:

1852 թ. գյուղի համար Ստում քահանա է ձեռնադրվում խնեցի Պետրոս Մովսեսյանը<sup>4</sup>:

1 Ներկայումս պաշտոնապես կոչվում է Ղնեյե (قنّية): Հայտնի է որպես լատինացած հայերի գյուղ:

2 Տեր-Ղազարեան Յ., Հայկական Կիլիկիա. տեղագրություն, Անթիլիաս, 1966, էջ 216-217:

3 Նշվ. աշխ., էջ 217:

4 Միրմեհան Ա., Պատմություն Հալեպի Հայոց, հ. 3, Փարիզ, 1950, էջ 811-812:

Լատին քարոզչությունը գյուղ մուտք է գործում 1870-ական թվականներին՝ Մեսրոպ Նազյանի<sup>5</sup> քահանայագործության ժամանակ, գյուղի երկու մեծ ընտանիքների՝ Ջոուբի և Հաննեի միջև ծագած վեճերի պատճառով:

1871 թ. Մարկոս քահանա Տեր-Գասպարյանն ուղարկվում է գյուղ՝ տեղում քննելու աթոռապատկան ձիթաստանի հաշիվները և տեղի Մեսրոպ քահանայի լատինամետ գործունեության հետևանքները: Նրան հաջողվում է լատինադավանությունից ետ պահել գյուղացիների մի մասին<sup>6</sup>: Սակայն, հակառակ դրան, 1876 թ. գյուղի բնակչության մեծ մասը լատինադավանություն է ընդունում<sup>7</sup>:

1878 թ. գյուղում հիմնվում է լատին վանական կենտրոն՝ արական և իգական դպրոցներով, արհեստագործական վարժարանով, առողջապահա-



Տեսարան Խնե գյուղի աթոռապատկան ձիթապտղի այգիներից (ձիթաստանը)

կան կենտրոնով և եկեղեցով, իսկ 1884 թ.՝ լատինական երկրորդ եկեղեցին<sup>8</sup>:

1878 թ. Հալեպի գավառական ժողովներից մեկի ժամանակ վերստին քննարկվում է Մեսրոպ քահա-

5 Մեսրոպ քահանան ծնվել է 1829 թ. Կարինում: Մինչև կյանքի վերջը՝ 1916 թ., գյուղի լատին եկեղեցում կատարել է հայերեն ժամերգություն (Չղաքեան Յ., Անտիոքի մերձակայ Ռուհի հովիտի հայերը, Անթիլիաս, 2006, էջ 126, 136):

6 Միրմեհան Ա., նշվ. աշխ., էջ 833:

7 «Արեւելեան մամուլ», 1906, № 49, էջ 1199-1202:

8 Ագգեհան Հ., Հայերու տեղաբաշխումը Մուրիոյ մէջ, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2008, № 3, էջ 79:



Հալեպի զանձատանը պահվող 1804 թ. սաղավարտը (լուս.՝ Բ. Քորթոշյանի, 2008 թ.)

նայի՝ լատինամետ քարոզչություն ծավալելու հարցը, քանի որ նրա հետ լատինացել էր 30-40 հայ ընտանիք: Նշյալից զատ՝ տեր Մեսրոպը սեփականացրել էր աթոռապատկան ձիթատանը<sup>9</sup> և մերժում էր հաշվետվություն ներկայացնել<sup>10</sup>:

Ինչպես երևում է 1888 թ. մի տեղեկությունից, բարձրաստիճան հոգևորականներն իրենք ևս իրենց շահանով գործելակերպով նպաստում էին առաքելադավան հոտի հուսալքությանն ու լատինացմանը. «Տաղուպեայի գիղին Ս. Գրիգոր քահանայեն 25 ոսկի կը պահանջուի, բայց յիշեալը պարտք չունի եղեր, այդչափ դրամ չունի եղեր, որու հոգ. եթէ անկարող է, ինչու քահանայ եղաւ, թէ ոչ Լատին եղող Ս. Մեսրոպ քահանային մօտ թող երթայ: Արամոյ գիղին Ս. Մատթէոս քահանայեն ուխտագիր և կամ ոսկի կը պահանջուի, եթէ ոչ փիլոն առնելու իրատւոքէն զրկելու է, իբր թէ զանգատագրեր հասեր են եղել»<sup>11</sup>:

1899 թ. Օ. Մազումյանը գրում է. «Ղընիսի բնակիչներուն 3/4ը իր երկու քահանաներով (տեր Մեսրոպ և տեր Կարապետ) լատինացած են շնորհիւ ապունա Էմին հռչակուած Ֆրանչիսկեանին թափած կարմրուկ ոսկիներուն և անդուլ ջանքերուն: Այս ապունան, քանի մը հայ տուն որսալու համար, հրաժարած է Հալեպի Մեծատրութենէն՝ կը բնակի Ղընիս, ուր շինած է մեծ ծախքով փառատր վանք մը, յարակից եկեղեցի մը ու դպրոց մը, ձրիաբար կը դաստիարակէ գիղացիներուն լատին և ոչ լատին մանուկները, և յամառութեամբ մնացածներուն զաւակները կը պատրաստէ լատինութեան: Գալով Լուսատրչական Հայերուն (եթէ ներելի է այդ ա-

նունը տալ) ունին մի եկեղեցի Ս. Կիպրիանոս անունով. դպրոց՝ մի փնտրուէք. քահանայ ալ չունին. կիրակիէ կիրակի Եագուպիյէէն քահանայ մը գալով կը պատարագէ Հայերէն լեզուով. լեզու մը գոր ինքն ալ չի հասկնար: Այս գիղի եկեղեցիին մէջ պատարագեց քաղաքիս Առաջնորդական տեղապահ Ներկարարեան հայր օգոս. Տին, որ մեզի հետ շրջագայութեան ելած էր այս կողմի գիղերը...»<sup>12</sup>:

1906 թ. գյուղն ուներ 131 տուն բնակիչ, որից 5-ը՝ հայ առաքելական (քահանան էր տեր Կարապետ Փափազյանը), իսկ 126-ը՝ հայ լատինադավան: Լատին հայերի հոգևոր հայրն էր 80-ամյա տեր Մեսրոպ քահանան<sup>13</sup>:

Սբ. Կիպրիանոս<sup>14</sup> եկեղեցին գտնվում էր գյուղի կենտրոնում՝ լատինական վանքի արևելյան կողմում:

1902-1905 թթ. լատինադավան հայերը քանիցս խլում են եկեղեցու բանալին, սակայն տեղի կառավարության միջամտությամբ ստիպված վերադարձնում են այն Կարապետ քահանային: Չկարողանալով սեփականացնել եկեղեցին՝ 1905 թ. գիշերով քանդում են եկեղեցու տանիքը<sup>15</sup>:

1906 թ. օգոստոսին Բերիո թեմի ժողովներից մեկում քննարկվում է եկեղեցու տանիքը նորոգելու հարցը: Որոշվում է նորոգման թույլտվությունը ստանալ Ճըսըր-Շղուրի գայմագամին կաշառելու միջոցով, որը պիտի իրականացնեն խնեցիներ Իբրահիմ Ասիսը և Իբրահիմ Մուսային<sup>16</sup>: Մտանալով

<sup>9</sup> Մեսրոպ քահանայի սերունդներն այժմ էլ բնակվում են գյուղում:

<sup>10</sup> Մխրմեան Ա., նշվ. աշխ., էջ 856:

<sup>11</sup> «Արձագանք», Թիֆլիս, 1888, № 6, էջ 73:

<sup>12</sup> Մազումեան Օ., Մոռացուած անկիւններ Ղընիս և Եագուպիյէ, «Բիւրակն» 1899, էջ 635:

<sup>13</sup> «Արեւելեան մամուլ», 1906, № 49, էջ 1201-1202:

<sup>14</sup> Եկեղեցու հիմքերը 2007 թ. գյուղացիները ծածկել են հողով (տեղեկությունը 2011 թ. մեզ է փոխանցել Ավետիս Օհանյանը):

<sup>15</sup> «Արեւելեան մամուլ», 1906, № 49, էջ 1200, 1202:

<sup>16</sup> ՀԱԳ, ֆ. 1421, ց. 5, գ. 4, թ. 3:



ԽՆԵ գյուղի լատին եկեղեցու տեսքը

հրամանագիրը՝ մույն թվականի սեպտեմբերի 6-ին տեր Արսեն Հարությունյանը ժամանում է Խնե և կազմում 5600 դուրուշ ծախս պահանջող նախահաշիվը: Սակայն գյուղապետն ընդդիմանում է նախաձեռնությանը՝ ասելով. «...գեղի մեծամասնությունը լատինացած է... եկեղեցին ալ մեծամասնութեան կը պատկանի... մնացեալ 5 տուն հայերը իրաւունք չունին եկեղեցիին տիրանալու...»<sup>17</sup>:

1906 թ. հոկտեմբերի 6-ին առաքելադավան հայերն իրեն իրավունքները վերականգնելու նպատակով դատ են հարուցում, սակայն դա էլ ավարտվում է ի նպաստ լատինների, քանի որ դատարանը Թերա Սանթա առաքելության հայրերի և Հալեպի Իտալիայի հյուպատոսի ճնշման տակ մերժում է Խնե գյուղի առաքելական հայ համայնքի բոլոր իրավունքները և հարցը համարում փակված<sup>18</sup>:

Այս ճախողումից հետո վախի մթնոլորտ է տիրում Խնե և Եագուպիե գյուղերի առաքելադավան հայերի շրջանում. «...դրողալի ահին պտուղը բացի Գնիոյ հայ ժողովրդեան, մինչև իսկ Եագուպիոյ ժողովրդեան ևս ազդած էր. այնպես որ գիտէն լուր էին դրկել, թէ ալ ևս տ. Կարապետը մեր գիտը ոտք չկոխէ, մենք այժմս կը վախնանք. կամ ճիսիր թող

նստի մինչև յաջողութիւն մը գտնէ և կամ Հալեպ թող երթայ...»<sup>19</sup>:

Հայտնի է, որ 1907 թ. գյուղն ուներ 5 տուն հայ առաքելական բնակիչ<sup>20</sup>, որոնց հոգևոր հովիվը՝ Կարապետ քահանա Փափագյանը, գտնվում էր Հալեպում<sup>21</sup>: Նա վերադառնում է միայն 1909 թ. դեկտեմբերին<sup>22</sup>, երբ գյուղն արդեն ամբողջովին լատինացած էր, իսկ ֆրանչիսկյանների կողմից կառուցված լատինական դպրոցում իսպառ դադարել էր հայերենի ուսուցումը<sup>23</sup>:

1960-ական թթ. Խնեն ուներ 100 տուն ծագումով հայ, արաբախոս լատինադավան բնակչություն<sup>24</sup>:

2011 թ.<sup>25</sup> գյուղում բնակվում էին 70 տուն արաբախոս լատինադավան հայեր: Նրանք, քաջատեղյակ իրենց հայկական արմատներին, այնուամենայնիվ, չունեին ազգային գիտակցություն, որին փոխարինել էր կրոնականը:

Ինքնաբերաբար հարց է ծագում, թե ո՞վ է գյուղի լատինացման մեղավորը՝ Սկրտիչ կաթողիկոսի կամ տեր Մեսրոպի շահամուլությունը, գյուղացիների խեղճությունը, թե՞ կարմրուկ ոսկիների սերը: Բայց մենք կարծում ենք, որ մեղավորը մեր անտարբերությունն է: Այն անտարբերությունը, որի պատճառով հայերենը դադարել էր մի գյուղում, որտեղ մինչև ԺԹ դարի կեսերը ոչ միայն խոսում էին հայերեն, այլ նաև գրում: Լեզուն է մեր վահանը, ռազմի դաշտում առանց վահանի անհնար է գոյատևել:

Բայց դեռ ուշ չէ: Քանի դեռ այդ մարդկանց մեջ առկա է հիշողությունը, պետք է փորձել զարկ տալ ազգայինին և ոչ թե կրոնականին: Հայը հայ է՝ լատին, թե առաքելական: Այսպես պետք է մոտենանք հարցին: Ի վերջո նորից պետք է վերականգնել 1908 թ. դադարած հայոց լեզվի ուսուցումը Խնե գյուղում: Սա կոչ է ՀՀ սփյուռքի նախարարությանը, որն իր ձեռքին պետք է կրի հայ պետականության փարոսը՝ իր մոտ կանչելով մոլորված զավակներին:

Սա նաև կոչ է Բերիո թեմի հայ առաքելական և կաթողիկե առաջնորդարաններին: Կաթողիկե առաջնորդարանն ունեցել է նման նախադեպ, երբ 1946 թ. Քեսաբի հայախոս լատին համայնքը լուծվեց հայ կաթողիկե համայնքի մեջ:

Ի վերջո սա նաև կոչ է Խնե գյուղի լատին հայերին՝ վերադառնալու իրենց և իրենց նախնիների ազգային ինքնությանը:

19 Նշվ. աշխ., էջ 142:

20 «Արարատ», 1907, էջ 142:

21 ՀԱԳ, ֆ. 1421, ց. 5, գ. 6, թ. 5:

22 ՀԱԳ, ֆ. 1421, ց. 5, գ. 24, թ. 3-4:

23 Միրոնեան Ա., նշվ. աշխ., էջ 895-896:

24 Տեր-Ղազարեան Յ., նշվ. աշխ., էջ 216-217:

25 Ընդհանրապես ենք հայտնում Բերիո թեմի առաջնորդ Շահան եպս. Սարգիսյանին և մեր ուղեկիցներ Եագուպիե գյուղի հայ առաքելական եկեղեցու թաղական ատենապետ Մալաթի Պիթարին և թաղականության անդամ Ավետիս Օհանյանին, որոնց շնորհիվ 2011 թ. իրականացավ մեր այցելությունը Խնե:

17 «Արեւելեան մամուլ», 1906, № 49, էջ 1199-1200:

18 Չոլաքեան Յ., նշվ. աշխ., էջ 141-142:


## ՄՐԵՆԸ ԵՎ ՆՐԱ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

### Սամվել Կարապետյան

Մրեն քավաքատեղին փռված է Ախուրյան և Տեկոր գետերի միջև երկարած տափարակ մակերևույթով հրվանդանին՝ ծովի մակերևույթից 1260-1300 մ բարձրության վրա:

Հետազոտողները քաղաքատեղիի մասին նշել են. «Յարևմտակողմն յայնկոյս գետոյն ի բաւականաչափ դաշտաձև տեղոջ է մեծ աւերակն Մրենայ, ուր երևին ի կանգուն ինչ ինչ խաչքարինք և մատրունք, և մեծ կաթուղիկէ եկեղեցին՝ գորմէ աւանդեն պատմիչք, շինեալ ի Դարթայ Սահառունոյ. զայս տեղի այլազգի մահմէտականք անուանեն Գարաբաղ, իսկ հայք՝ պարզ կոչմամբ Մրեն, մանաւանդ բնակիչքն Բագարանայ որ ի Մրենայ ընդ հարաւ է իբրև մի ժամ հեռի»<sup>1</sup>: Նաև՝ «Հռչակատր և գուարճատեսն Մրեն, որոյ այգիքն վերիվայր յեղյեղին յարձանագրութիւնս, ժամաւ հեռի կայ ի Բագարանայ ի միջակետ ընդարձակ դաշտավայրի»<sup>2</sup>: Նաև՝ «Մրեն քաղաք կիյնայ Նախիջևան գիւղի արևելակողմ 3 ժամ հեռաւորութեամբ և շինուած է տափարակ դաշտի մը մէջ, որոյ հարաւային կողմէն կանցնի Ախուրեան գետ»<sup>3</sup>:

Նշվել են նաև՝ «Արփաչայ գետի ողջ ստորին հոսանքում՝ մի ամբողջ վերստ տարածության վրա, սփռված են քաղաքների, եկեղեցիների, տների, պարիսպների ու աշտարակների ավերակներ: Այդ ավերակների մեջ իր գեղեցկությամբ և նրբազեղ պարզությամբ առանձնապես աչքի է ընկնում Մրենի տաճարը»<sup>4</sup>: Նաև՝ «Անիից և Արփաչայից հավասարապես 20 վերստ դեպի հարավ՝ մեկ այլ հանգիստ հայկական մի գյուղում, թվում է, ևս հետաքրքիր ավերակներ են, պատեր և լավ պահպանված մի եկեղեցի: Այն կոչվում է Մերին»<sup>5</sup>:



Մրեն. քաղաքատեղիի տեղադրությունն ըստ ԽՍՀՄ զինվորական գլխավոր շտաբի 1:25.000 մասշտաբի քարտեզի (1977 թ.) և տիեզերքից կատարված լուսանկարի (լուս.՝ Google Earth, 2002 թ.)

1 Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի և հինգ զաւառացն Արարատայ, աշխատասիրութեամբ Յովհաննու եպիսկոպոսի **Շահխաթունեանց** Շահրիարցոյ միաբանի սրբոյ Էջմիածնի, հ. երկրորդ, Ս. Էջմիածին, 1842, էջ 42:

2 **Մարգսեան Ն.**, Տեղագրութիւնք ի Փոքր և ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 194:

3 ԳԱԹ, **Գ. Մրվանձոյան** ֆոնդ, ք. I, գ. 17, ք. 9: Տե՛ս նաև **Մրապեան Կ.**, Ստորագրութիւն Կարսի շրջակայ գիւղօրէից և վանօրէից, «ԲՀԱ», 1970, № 2, էջ 105:

4 **Надеждинъ П.**, Опытъ географіи Кавказскаго края, Тула, 1891 г., с. 256 (բնագրում՝ “Все нижнее течение р. Арпачая на целыя версты усеяно развалинами городовъ, храмовъ, дворцовъ, домовъ, оградъ и башень. Среди этихъ развалинь особенно выдается своей красотой и изяшной простотой Мренскій соборъ”).


5 **Martel E.-A.**, La Cofte d’azur russe: Riviera du Caucase, Paris, 1909, p. 282 (բնագրում՝ “A 20 verstes au sud d’Ani et sur

Նաև՝ «Գիգորի Գարաբաղ գյուղի մոտ գտնվում է Գարաբաղի թանգարանը (Մրեն եկեղեցի)»<sup>6</sup>:

**Կառուցապատում.** ավելի քան 2 քառ. կմ մակերես զբաղեցնող քաղաքատեղիի կենտրոնական մասն իրենից ներկայացնում է մոտավորապես

l’Arpa-Tchap également, une autre ville arménienne itale, paraot-il, des ruines bien curieuses aussi, des murailles et une église bien conservée. On la nomme Merin.”. E.-A. Martel, La Cofte d’azur russe: Riviera du Caucase, Paris, 1909, p. 282).

6 Kars Valiliği il Turizm Müdürlüğü, Kars, Ankara, sayfa 19.



Մրեն. քաղաքատեղիի կենտրոնական մասի և եկեղեցու տեսքը տիեզերքից (լուս.՝ Google Earth, 2002 թ.)

եռաճյուղ, մեծագույն մասով անկանոն և խճողված հատակագծերով, մոտ 300 առավելաբար բնակելի կացարանների մնացորդներով խիտ կառուցապատված տարածք, որի գրեթե կենտրոնում տեղադրված է Կաթողիկե եկեղեցին, իսկ բնակելի թաղամասերին բոլոր կողմերից հարակցում են ոչ բարձր քարաշար պարիսպներով սահմանազատված նույնպես անկանոն հատակագծերով հողակտորները, որոնք բնակավայրի շեն ժամանակ պատված են եղել մրգատու այգիներով. «Ընդհանուր տեսութեամբ յերկուս բաժանեալ էր Մրեն, տունք և այլ շինուածք ի մի կողմն, և ի միսն այգեստանք...»<sup>7</sup>:

Թերևս ԺԵ-ԺԶ դարերից ի վեր վերջնականապես ամայացած այգիներն արդեն ԺԹ դարի կեսերին ամբողջապես վերածվել էին արոտավայրերի. «...այգեստանքն իսպառ խոպանացեալ՝ որք արօտ են այժմ խաշնարածաց՝ մեծատարածք են և բազմաթիւ, սահմանեալ իւրաքանչիւր շուրջանակի վարկպարագի քարակուտի»<sup>8</sup>:

7 Մարգարեան Ն., նշվ. աշխ., էջ 195:

8 Նշվ. աշխ., էջ 196:

Քաղաքատեղիի կառուցապատման առանձնահատկություններին անդրադարձել է նաև Կարսի թեմակալ Կյուրեղ Սրապյանը, ով 1878 թ. նշել է. «Քաղաքի շինութիւններ ընդհանրապէս եկեղեցույ արևելեան և հիւսիսային կողմ են, մի նեղ թաղ արևմտեան կողմ կերկնայ, իսկ քաղաքի բոլորտիք մանաւանդ հարաւային կողմ պարտեզներ են»<sup>9</sup>:

Ինչ վերաբերում է լայնարձակ քաղաքատեղիի ողջ տարածքով մեկ սփռված շինություններում սրբատաշ քարերի բացակայության հանգամանքին, ապա այդ երևույթը բացատրվում է դարեր շարունակ մերձաբնակ գյուղերի բնակիչների համար քաղաքատեղիի մատչելիությամբ, որի արդյունքում տեղի է ունեցել սրբատաշ քարերի լիակատար յուրացում. «...տանց առ հասարակ կործանեալ՝ հիմունքն և եք երևին գերեսօք գետնոյ, և չեն զարմանք թէ չգտանիցի ի քարակոյտս աւերակաց նորին կոփածոյ վէնք մեծամեծք. զի առ դաշտավայր գոլոյ ճանապարհին՝ ամենայն ուստեք դիրութիւն մեծ է ի բաց տանել զնոսին շրջաբնակ գիւղօրէիցն»<sup>10</sup>:

Եվ եթե ցարդ բավականաչափ հստակ նշմարելի են բնակավայրի երբեմնի փողոցներից շատերը, ապա կարելի է ենթադրել, թե դրանք որքան որոշակի են եղել 1878 թ. «Քաղաքի փողոցներ դեռ հայտնի կերևին նույն շինութեանց կիսափուլ որմեր»<sup>11</sup>:

**Պատմություն.** Մրենի պատմության վաղնջական էջերն առայժմ մնում են չլուսաբանված: Որպես կարևոր բնակավայր՝ հայ մատենագրության մեջ առաջին անգամ հիշվում է Ե դարի կեսին, երբ պարսից արքայից արքա Հազկերտ Բ-ի (439-457 թթ.) հրովարտակը քննության առած բարձրաստիճան հոգևորականության և «պատուական երիցանց» թվում հիշվում է «...եւ Խորէն ի Մրենեայ...»<sup>12</sup>:

Հայտնի է, որ Մրենի բնակչությունը նշանակալի կորուստներ է ունենում արաբական տիրապետության ժամանակ (754-775 թթ.). «...կոտորումն եղեւ Քաղանու, Մրենոյ, Թալնայ, ուր սպանան ողիք եօթն հարիւր եւ գերեցան հազար եւ երկու հարիւր»<sup>13</sup>:

Այնուամենայնիվ, Մրենում կյանքը շարունակվում է: Մասնավորապես 992 թ. եկեղեցին մի այգի է նվեր ստանում (տե՛ս վիմագիր Բ), իսկ 1041 թ. թագավորական հրամանով Մրենն ազատվում է որոշ հարկատեսակներից (տե՛ս վիմագիր Ե):

1163 թ. թուրք-սելջուկներն ավերում են Մրենը և ոչնչացնում 4000 բնակիչների. «...եւ մրմռեալ իբր գազան կատաղի՝ գայ ի Մրեն եւ այրե անդ զամ-

9 Գ.ԱԹ, Գ. Սրվանձտյան ֆոնդ, ք. I, գ. 17, ք. 9: Տե՛ս նաև Մրապեան Կ., նշվ. աշխ., «ԲՀԱ», 1970, № 2, էջ 105:

10 Մարգարեան Ն., նշվ. աշխ., էջ 195-196:

11 Մրապեան Կ., նշվ. աշխ., «ԲՀԱ», 1970, № 2, էջ 106:

12 Դազարայ Փարպեցույ Պատմութիւն Հայոց..., Երևան, 1982, էջ 100-101:

13 Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, Երևան, 1961, էջ 72:



Մրեն. Կաթողիկե եկեղեցու տեսքը հարավ-արևելքից (տա.՝ Ի դարի սկիզբ)

րոցն, ուր ողջակիզեցան վասն Քրիստոսի ոգիք իբրև չորեք հազար...»<sup>14</sup>:

Սակայն Մրենն այդ արհավիրքը ևս կարողանում է սպիացնել և առանձնապես աշխույժ կյանքով ապրել ԺԳ դարի հատկապես 2-րդ կեսը:

ԺԴ դարի կեսերից սկսած՝ քաղաքն աստիճանաբար կորցնում է իր կարևորությունը և ժամանակի ընթացքում ամայանում: Երևում է, որ Մրենն այդուհետ այլևս երբեք չի բնակեցվում, քանի որ ընդարձակ ավերակավայրում ԺԴ դարից հետո ստեղծված հուշարձաններ առկա չեն:


Հետագա դարերում քաղաքատեղիի՝ վաղուց անհետացած այգիները վերածվում են խոտհարքների, իսկ եկեղեցին՝ անասնագոմի:

1878 թ., երբ Մրենը Կարսի մարզի հետ անցնում է ռուսական տիրապետության ներքո, և քաղաքատեղի է այցելում զեներալ Պոպկոն, կացությունը հետևյալն էր. «Այս տաճարը քուրդ Կասկալի հասարակությունից Բիշար-Պրտոբեկ օղլու անասունների փարսխն է»<sup>15</sup>:

14 Հուարքումն պատմութեան Վարդանայ վարդապետի, Վենետիկ, 1862, էջ 127:

15 Աղամյան Ավետիք, Վավերագրեր Անի քաղաքի և Կարսի մարզի մերձակա վայրերի հուշարձանների պահպանության մասին, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1971, № 3, էջ 48 (բնագրում՝ «В этом храме загоняет скот куртин Каскалинского общества Бишар-Пртобек оглы»):

Կարծելով, թե դարավոր ընդմիջումից հետո քրիստոնյա տերության ներքո Մրենում կարելի է վերստին ներկայություն ապահովել, հայ հոգևորականությունը դիմում է տեղի իշխանություններին: Սակայն նույնիսկ անտերունջ եկեղեցուն վերստի-րանալու ծրագիրը բախվում է ռուսական իշխանությունների շահերին, որոնք Մրենի ավերակատեղին ծրագրել էին հատկացնել վերաբնակիչ հույներին: Խնդրո առթիվ 1891 թ. նշվել է. «Անշեն և աւերակ վանքեր շատ կան Կարսի վիճակում, բայց նոցա մէջ կանգունը և վսեմը Մրենի վանքն է, որ մի ամայի և անմարդաբնակ տեղումն է, Բագարանի Ս. Գեորգ ուխտատեղից մի ժամու հեռաւորութեամբ: Այդ վանքի շուրջը մեծ քանակութեամբ դատարկ հողեր կան, որոնց մասին ժամանակին հոգևոր իշխանութիւնը դիմում է կառավարութեանը, խնդրելով նոցա մի մասը վանքին յատկացնել, բայց բացասական պատասխան է ստացել: Սպասելով, որ մի օր այդ հողերը յոյներին կարող են տալ և յունաց գիւղ կազմել, որով և մեր վանքը կարող են դարձնել յունաց եկեղեցի՝ Կարսի արբասաշեն Ս. Առաքելոց մայր եկեղեցոյ նման: Ես փորձ փորձեցի վանքը մաքրելու, որի համար շրջակայ հայ ժողովուրդը ճիւղաբար մշակներ տուեց, բայց առանց կարևոր նորոգութեան թոյլ չեն տալու եկեղեցին օժելու և նորա մէջ ժամասացութիւն անելու, իսկ այդ նորոգու-



Մրեն, Կաթողիկէ եկեղեցու տեսքը հյուսիս-արևմուտքից (լուս.՝ ԺԹ դարավերջ և 2000 թ.)



Մրեն, Կաթողիկէ եկեղեցու տեսքը հարավ-արևմուտքից (լուս.՝ Ի դարասկիզբ և 2000 թ.)



Մրեն. Կաթողիկե եկեղեցու տեսքը հարավ-արևելքից (լուս.՝ Սեպուհ Եպիս. Զուլքյանի, 2011 թ.)

թիւնը մի քանի հազար ռուբլու կարօտ է, որ ձեռք բերելը մեր միջոցներով անհնարին է»<sup>16</sup>:

1892 թ. նոյեմբերի 31-ին Կարսի հոգևոր կառավարությունը Էջմիածնի սինոդին հայտնում է. «...թէ վանքն Մրենոյ շունի բնաւ զկալուած և անկարանայ սոյնն ցուցանել զմիջոց որով մարթասցի հայթիայթել սնունդ վանահօր այնր վանուց, եթէ կարգեսցի:

Հոգևոր կառավարութիւնս համարձակի ծանուցանել ի տեղեկութեան սրբազան Ատենիդ թէ՛ ի շրջակայս Մրենոյ գտանի ազատ արքունի գետին 1073 դեսեստին տարածութեամբ և եթէ յօժարեսցի զինուորական պ. նահանգապետն ելանել ի միջնորդութիւն առ վերագոյն քաղաքական իշխանութիւնն ի յատկացուցանել յիշեալ վանուցն ի սեպիականութիւն գլխատակեալ վայրսն յայնժամ արդեսմբք նոցին դիրութեամբ կարէ ապրել վանահայրն: Առ այս թէև փոխանորդ թեմակալին Երևանայ գերապատիւ Սուրբիաս սրբազան եպիսկոպոսն գրութեամբ իւրոյ յ30 ապրիլի 1888 ամի N 354 դիմեալ էր առ պ. նահանգապետին Կարուց խնդրելով 300 դեսեստին հողս, սակայն ընկալելի էր ի նմանէ զբացասական պատասխանի, առարկելով թէ՛

վանք Մրենի է իսպառ քայքայեալ և կարօտէ մեծաքանակ ծախսոց ի պետս նորոգութեան: Մինչդեռ վանքն այն գտանի բոլորովին կանգուն դրութեամբ և գրեթէ անկարօտ վերանորոգութեան և մեծաքանակ ծախսոց, զպատճենս այնց գրագրութեանց ընդ ամեն հոգևոր կառավարութիւնս առաջի առնէ սրբազան ատենիդ ի տեղեկութիւն»<sup>17</sup>:

Ինչպես երևում է հետագա գրագրությունից, Մրենի եկեղեցու համար, այնուամենայնիվ, հոգևոր սպասավոր է կարգվել: Համենայն դեպս 1896-1899 թթ. Մրենում վանահայր է հիշվում Սարգիս քահանա Տեր-Կարապետյանը, որն իր տնտեսական անձուկ վիճակը շտկելու նպատակով ցանկություն էր հայտնել վարձակալել 280 դեսյատին արքունի հողամաս<sup>18</sup>:

1900-1910-ական թթ. կատարված լուսանկարները ցույց են տալիս, որ Մրենի հուշարձանների նկատմամբ, այնուամենայնիվ, նշյալ ժամանակահատվածում որոշակի ուշադրություն դրսևորվել է: Մասնավորապես նոր շարվածքներով ամրակայվել

17 Հայաստանի ազգային դիվան (այսուհետև՝ ՀԱԴ), ֆ. 56, ց. 18, գ. 158, թ. 16:

18 ՀԱԴ, ֆ. 56, ց. 18, գ. 346, թ. 78:

16 Մատենադարան, թղթ. 63, վավ. 29, թ. 2:

են Կաթողիկե եկեղեցու որմերի ստորին՝ օղի մեջ մնացած հատվածները, որոնք այդ վիճակին էին հասել ստորին շարվածքում երեսապատի սրբատաշ քարերի հափշտակման հետևանքով: Կատարվել էին նաև մաքրման աշխատանքներ քաղաքատեղիում գտնվող Սահմադինի ապարանքի շքամուտքի շուրջ:

**Նյութական ժառանգությունը.** առկա նյութերը վկայում են, որ Սրենն իր պատմության ողջ ընթացքում ունեցել է զարգացման երկու գլխավոր շրջան: Դրանք էին՝ Է և ԺԳ դարերը, ինչպես նաև վերջիններիս զիջող, սակայն համեմատաբար արգասաբեր նաև միջանկյալ Ժ-ԺԱ դարերը:

Նշյալ երեք ժամանակահատվածներով էլ խմբավորվում և թվագրվում է նյութական մշակույթի մրենյան ժառանգությունը:

Վերջիններս, ըստ ցարդ պահպանված կամ սոսկ հավաստի վկայություններով գիտական շրջանակներին հայտնի տվյալների, կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.

**ա.** քառակող կոթողներով գերեզմանոց (Ե-Է դդ.), Կաթողիկե եկեղեցի (639-640 թթ.):

**բ.** խաչքարեր (Ժ-ԺԱ դդ.), բազմաթիվ արձանագրություններ (992, 1041, 1063 թթ., ևս մի քանիսը՝ անթվակիր) Կաթողիկե եկեղեցու որմերին:


**գ.** Սահմադինի ապարանք (1261 թ.), միանավ մատուռ (1277 թ.), բազմաթիվ արձանագրություններ (1251, 1273, 1284, 1288, 1295 թթ.) Կաթողիկե եկեղեցու որմերին:

Ժամանակագրության հիմքով տարանջատված Սրեն քաղաքատեղիի՝ ահա այս երեք խմբի բաժանված հուշարձաններն էլ ներկայացվում են ստորև:

**Քառակող կոթողներ.** առաջինը Ե-Է դարերով թվագրվող քառակող կոթողի բեկորներն են, որոնք իրենց գոյությամբ փաստում են արդեն նշյալ ժամանակաշրջանում գերեզմանոցի գոյության մասին: Գերեզմանական այս կոթողները մեզ են հասել առանձին բեկորների տեսքով, որոնք Կաթողիկե եկեղեցու որմերին ագուցվել են ԺԱ-ԺԳ դարերում իրականացված մասնակի նորոգությունների ժամանակ (թերևս միևնույն կոթողի զույգ բեկորներն են սրանք, որոնք առկա են եկեղեցու արևմտյան և հարավային ճակատներին):

**Կաթողիկե եկեղեցի.** Սրենի Կաթողիկեն գտնվում է Ախուրյան գետի աջ ափից 1,1 կմ հեռու: Ծովի մակերևույթից բարձր է 1284 մ: Աշխարհագրական կոորդինատներն են՝ N 40°14' 31.80", E 43°39' 46.54":

Հայ ճարտարապետության եզակի այս կերտվածքին վերագրվող հայրենի մատենագիրներից առաջին վկայության հեղինակը եկեղեցու կառուցումից շուրջ 300 տարի հետո ապրած Հ. Դրասխանակերտցին է, որը նշել է. «Ի սմին յայսմիկ ատուրս կայսրն Հերակլ գԴալիթ Սահառունի կուրապալատ արարեալ իշխան հայոց կացուցաներ... Եւ ի հրա-



Սրեն. Կաթողիկե եկեղեցու արևմտյան և հարավային ճակատներից արտաքուստ ագուցված քառակող կոթողի բեկորները (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2000 թ.)

մանե նորան շինէր իսկ եկեղեցին գեղեցկայարմար, որ ի քաղաքագիւղն Սրեն»<sup>19</sup>:

Հաջորդը եկեղեցու կառուցումից մոտ 600 տարի անց գործունեություն ծավալած Կիրակոս Գանձակեցին է. «Դալիթ Սահառունի մարզպան լեալ ամս երեսուն: Յաւուր սորա ի ԿԲ (613) թուականին եղև շինուած կաթողիկէին Սրենոյ»<sup>20</sup>:

Մոտավորապես նույն ժամանակաշրջանն է մատնանշում (615) նաև Սամվել Անեցին. «Շինուած կաթողիկէին Սրենոյ»<sup>21</sup>:

Առաջնորդվելով սույն վկայություններով՝ հայր Ներսես Սարգսյանը նշել է. «Հրաշակառոյց կաթողիկէն Սրենոյ ըստ վկայելոյ մատենագրաց՝ արարք են Դալիթ Սահառունոյ յեօթներորդ դարուն, նախ քան զծաղկել մայրաքաղաքին Անուոյ»<sup>22</sup>:

Տիրապետող այս կարծիքը բեկվել է միայն եկեղեցու արևմտյան ճակատի շինարարական արձանագրությունը վերծանելուց հետո. «Առհասարակ մատենագիրները տեղեկություն են տալիս, որ Դալիթ Սահառունին Սրենի մեջ կանգնեց մի շքեղ եկեղեցի: Ներկայիս, պատմագիրներ տեղեկությունները վերագրում են այժմ Սրենի մեջ կանգուն երևող մեծ տաճարին՝ առանց որևէ վարանումի: Սակայն վերջերս այդ համոզումը կասկածելի դարձավ շենքի վրա շինության արձանագրության մասնակի վերծանումով, որ տեղի բարձրության և մասամբ քարերի մաշվածության պատճառով չէր կարողացվում: Վերջերս շնորհիվ լավ լուսանկարի, լուսանկարին վրա հնարավորին եղավ կարդալ մի քանի

19 **Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցոյ** Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 80:

20 **Կիրակոս Գանձակեցի**, Պատմություն Հայոց, էջ 53:

21 **Սամուելի քահանայի Անեցոյ** Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 78-79:

22 **Մարգսեան Ն.**, նշվ. աշխ., էջ 196:



Մրեն, Կարմրիկէ եկեղեցու տեսքը հյուսիս-արևելքից և արևելքից (լուս.՝ Սեպուհ եպս, Զուլքյանի, 2011 թ.)

անուններ, որով հավանակագույն դարձավ, թե այս եկեղեցին ոչ թե Դավիթ Սահառունիին շինածն է, այլ Կամսարական շինարար տոհմի շառավիղներից մեկն է շինած: Արձանագրության մեջ հիշված Հերակլ կայսեր և Շիրակա ու Արշարունյաց տեր Ներսեհի անունների գոյութենեն ժամանակը միանգամայն փոխվում է և չի համապատասխանում Դավիթ Սահառունիի ժամանակին»<sup>23</sup>: Ի վերջո, Թ. Թորամանյանը որոշակի հանգում է այն եզրակացության, որ պատմիչների վկայությամբ 610-ական թվականների սկզբներին Սահառունու կառուցած եկեղեցին գիտությանն անհայտ մնացած մեկ այլ կառույց է. «Պատմական հիշատակությանց համաձայն Սրենի մեջ կանգներ է մահ Դավիթ Սահառունին մի հոյակապ եկեղեցի, որուն տեղը հայտնի չէ այժմ»<sup>24</sup>:

Շրջանառված է նաև այն կարծիքը, որ պատմիչների վկայակոչած տարեթվերն ու շինարարական արձանագրությունների թվականները պարզապես մույն եկեղեցու հիմնադրության և շինարարության ավարտի տարեթվերն են. «...իշխան Դավիթ Սահառունու կառուցած Սրենի Կաթողիկեն (ըստ պատմիչների՝ նրա կառուցումը սկսվել է 613-615 թթ. և ավարտվել է, ըստ շինարարական արձանագրության 639-640 թթ.)»<sup>25</sup>:

Հայտնի է, սակայն, որ պատմիչը երբ առանց մանրամասնելու մատնանշում է շինության որևէ տարեթիվ, ապա այն ընդհանրապես վերաբերում է շինարարության ավարտին, այլ ոչ հիմնադրմանը:

Ինչևէ, բավականաչափ հետաքրքրական այսօրինակ հարցերը, անշուշտ, կարելի էր ավելի դյուրությամբ լուսաբանել, եթե միայն հետազոտողները հնարավորություն ունենային բավարար չափով ուսումնասիրելու քաղաքատեղիի տարածքում կանգուն, կիսավեր կամ ավերակ տարաբնույթ հուշարձանները: Մինչդեռ այնպես է ստացվել, որ Սրեն այցելած մասնագետ այցելուներից և ոչ մեկը ցավալիորեն հնարավորություն չի ունեցել տեղում կատարելիք ուսումնասիրությունների համար մեկ օրից ավելի ժամանակ հատկացնել: Եթե սրան ավելացնենք նաև այն հանգամանքը, որ յուրաքանչյուր այցելուի ներդրած ժամանակի առյուծի բաժինն էլ հատկացվել է Կաթողիկե եկեղեցուն (իհարկե, հենց միայն այս կառույցի բավարար ուսումնասիրությունը ենթադրում է անհամեմատ ավելի տևական ժամանակի ներդրում), որը, ըստ էության, ստվերել էր քաղաքատեղիում պահպանված մնացած բոլոր հուշարձանները, ապա պարզ կդառնա ցարդ կատարված ուսումնասիրական աշխատանքների անբավարար մակարդակը: Ի դեպ, այս

առումով հատկանշական է երախտաշատ Թ. Թորամանյանի նկատառումը. «Սրենը մի անգամ տեսնել շատ քիչ է. երկար օրեր և շաբաթներ են հարկավոր լիակատար ուսումնասիրության համար, բայց դժբախտաբար ես չունեցա այդ հնարավորությունը: Միայն մի օր հագիվ հնարավոր եղավ Սրենն անցնելու և կանգուն տաճարն ուսումնասիրելու»<sup>26</sup>:

Մեր կողմից ցանկանում ենք հավելել, որ 2002 թ. տիեզերքից կատարված լուսանկարն իրապես պարզում է, որ, խնդրո առարկա Կաթողիկե եկեղեցուց զատ, Սրենում, իրոք, եղել է և կա առնվազն ևս մեկ (թերևս՝ երկու) մեծադիր եկեղեցի (չհաշված մատուռները): Սպասվելիք ուսումնասիրությունները գուցեև հաստատեն Թորամանյանի տեսակետը:



Սրեն. կենտրոնագմբեթ եկեղեցու մնացորդների տեսքը տիեզերքից (լուս.՝ Google Earth, 2002 թ.)

26 Թորամանյան Թ., նշվ. աշխ., էջ 295: Ի դեպ, 2000 թ. հուլիսի 19-ին մեզ ևս բախտ վիճակվեց այցելել Սրեն և վայելել տեղում «աշխատելու» բերկրանքը, որը, ցավոք, սահմանափակվեց հագիվ 15 րոպեի սահմաններում, քանի որ վրա հասած թուրք սահմանապահները խափանեցին ցանկալի աշխատանքը (հատկանշական էր, որ թուրք սահմանապահները բավականաչափ զգոն են զբոսաշրջիկների մուտքն արգելելու խնդրում, իսկ պարբերաբար և տևականորեն հնավայրը տակնուվրա արած և անող մերձաբնակ զանձախույզների նկատմամբ՝ միանգամայն անզգա ու անտարբեր): Ինչևէ, հենց այդ օրը ձեռք բերված լուսանկարների շնորհիվ ներկա հոդվածը հագեցած է երբևէ գիտական շրջանառության մեջ չներմուծված բոլոր վիճագրերի լուսանկարներով և դրանցից ստացված գրչանկարներով: Ինչ վերաբերում է 2005-2006 թթ. միջակայքում կործանված հարավային ճակատին, որի արդյունքում ներկայումս փլատակների ներքո են հայտնվել այդ որմին ներքուստ և արտաքուստ ագուցված խաչքարերը, քառակող կոթողը և արտաքուստ փորագրված արձանագրությունները, ապա վերջիններիս մասով մեր լուսանկարները փաստորեն բացառիկ են (այցելությունն իրականացնելու համար պարտական ենք մեր առաջնորդ ազատամարտիկ Վարդան Սամսոնյանին):

23 Թորամանյան Թ., Նյուֆեր հայկական ճարտարապետության պատմության, Երևան, 1942, էջ 295:

24 Նշվ. աշխ., էջ 246:

25 Հասարակայնության Մ., Հայկական վարքիստոնեական ճարտարապետությունը, Մոսկվա, 2010, էջ 34:

Եկեղեցիներից մեկը գտնվում է քաղաքատեղիի հարավարևելյան կողմում՝ Կաթողիկե եկեղեցուց 350 մ արևելք (փոքր-ինչ հարավ-արևելք ուղղությամբ)՝ բնակելի թաղամասի մեջ: Աշխարհագրական կոորդինատներն են՝ N 40°14' 29.54", E 43°40' 00.00": Սրա մնացորդները սպիտակին են տալիս կրաշաղախով կառուցված լինելու պատճառով և դրանով իսկ զանազանվում են քաղաքատեղիի բազմաթիվ այլ շինությունների ավերակներից: Ունի կենտրոնագմբեթ հորինվածք և մոտավորապես 20 x 23 մ արտաքին չափեր:

Եկեղեցու նմանվող երկրորդ կառույցի մնացորդները գտնվում են քաղաքատեղիի հյուսիսային կողմում՝ բնակելի թաղամասերից փոքր-ինչ մեկուսի դիրքով: Աշխարհագրական կոորդինատներն են՝ N 40°14' 42.12", E 43°39' 44.87": Կառույցը բլուրածն է և ունի մոտ 24-25 մ տրամագիծ: Այլ խոսքով,




Մրեն. բլուրածն հատակագծով եկեղեցու նմանվող մնացորդների տեսքը տիեզերքից (ուս.՝ Google Earth, 2002 թ.)

եթե ապագա հնարավոր ուսումնասիրությունները պարզեն, որ ավերակը եկեղեցի է, ուրեմն կարող է բացահայտվել թերևս Ջվարթնոցի հորինվածքը կրկնած մի նոր եկեղեցի (կասկածը, որ այս մեկը կարող է և եկեղեցի չլինել, հիմնված է որմերի ավելի թուխ գույնով, մինչդեռ կրաշաղախի պարագայում դրանք սպիտակին են տալիս):

**Ճարտարապետություն.** Մրենի Կաթողիկե եկեղեցու ճարտարապետական նկարագրին (ինչպես և վիմագրերի վերծանության խնդրին) առաջինն անդրադարձել է հայր Ն. Սարգսյանը. «Չփառահեղ մեծութենե եկեղեցոյս՝ համարիմ ճշդի ասացեալ թէ թանձրութեամբ որմոցն և քարանցն ստուարութեամբ և սեանցն չորեցուն և կամարացն ձգելոց՝ զանազանե քան զբազում հոյակապ եկեղեցեոք Շիրակայ որ յայսկոյս են Ախուրեան գետոյ. ընդ Շիրակաւանին կշռեալ՝ սա լայնանիստ է քան զնա. թէպէտ փոքր մի կարճագոյն. այլ ընդ կաթողիկէին Անույ երկրորդ է սա, իշխելի ասել և նորին ճարտա-

րապետի արհեստակերտեալ, եթէ խորոց չէր ի միջի ժամանակացն բացակայութիւն»<sup>27</sup>: Երախտա-



Մրեն. Կաթողիկե եկեղեցու առաջին չափագրությունը (հեղ.՝ հայր Ներսես Սարգսյան)

շատ հոգևորականը մինչև իսկ եկեղեցու հատակագիծը ներկայացնելու փորձ է կատարել<sup>28</sup>:

Հաջորդ հեղինակը, ով առավել հպանցիկ, սակայն, այնուամենայնիվ, անդրադարձել է եկեղեցու ճարտարապետական նկարագրին, Կարսի թեմակալ Կ. Սրապյանն է: Նրա՝ 1878 թ. կազմած տեղեկագրում կարդում ենք. «Եկեղեցին կարմիր և թուխ քարերէ շինուած է...: Գմբէթաւոր եկեղեցին կը բարձրանայ չորս սեանց վրայ իր փառաւոր և հոյակապ շինութեամբ քաղաքի մէջ տեղ, երեք դուռ ունի, արևմուտք, հարաւ և հիւսիս...»<sup>29</sup>:

Մեծապես շահեկան է նաև Կարապետ Օհանջանյանցի վաստակը: Նա գուտ Մրենին նվիրված ընդարձակ հոդվածը լույս է ընծայել 1881 թ.<sup>30</sup>:

Կաթողիկե եկեղեցու՝ ճարտարապետական ուղղվածությամբ առավել հանգամանալից ուսումնասիրությունը (անշուշտ, համեմատության մեջ, քանի որ գիտնականի վերլուծությունները հենված էին միայն մեկ օրվա ուսումնասիրությունների վրա) հեղինակել է ճարտ. Թ. Թորամանյանը:

Առաջինը, որ, իբրև եզրակացություն, նկատել է գիտնականը, եկեղեցու՝ ի սկզբանե ոչ թե գմբեթավոր, այլ եռանավ բազիլիկ եղած լինելու խնդիրն էր. «...ինչպես Տեկորի տաճարին հատակագծի վրա անմիջապես կպարզվի, թե Մրենի տաճարը ևս եղեր է մի ժամանակ Տեկորի տաճարի նախնական շինության նման, արևելքն արևմուտք ձգված միջին լայն և կողմնակի նեղ թևերով (nef), խաչածն անջատ մույթերով կամարակապ մի շենք, առանց գմբեթի, որուն նախնական կառուցումն շատ հե-


27 Սարգսյան Ն., նշվ. աշխ., էջ 196:

28 Ն. Սարգսյանի՝ առաջին անգամ ներկայացրած սխեմատիկ հատակագիծը (տե՛ս նշվ. աշխ., էջ 195) վերահրատարակել է նաև Ղ. Ալիշանը (տե՛ս նրա՝ Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 137):

29 ԳԱԹ, Գ. Սրվանձտյան ֆոնդ, ք. I, գ. 17, ք. 9-10: Տե՛ս նաև Սրապյան Կ., նշվ. աշխ., «ԲՀԱ», 1970, № 2, էջ 105:

30 Յովհաննջանյանց Կ., Մրեն, «Մեղու Հայաստանի», 1881, № 143, 25 յուլիսի, էջ 1-2; № 146, 29 յուլիսի, էջ 1-2:

տո, տվեր են այսօրվան ձևը»<sup>31</sup>: Գիտնականը միանգամայն համոզված է, որ Կաթողիկե եկեղե-



Մրեն. Կաթողիկե եկեղեցու հատակագիծն ըստ Թ. Թորամանյանի

ցին հիմնվել է նախաքրիստոնեական տաճարի տեղում, ուստի այդ առթիվ նշել է. «Ի՞նչ էին 3-րդ կամ 4-րդ դարերում մեջ գոյություն ունեցող այդ միօրինակ հսկա շինություններ, որոնց վրա ոչ շինության կանոնավոր արձանագրություն կա և ոչ ալ պատմագրական հիշատակություն: Հայոց պատմագիրներ այս շենքերեն շատ նվազ կարևորություն ունեցող եկեղեցիները հիշատակել են և երկնամասն փառքերով պսակել են, այլև զանոնք կանգնողներու սրբությունն ու բարեպաշտությունը փառաբանելու համար բանաստեղծական ներբողներ են հյուսել: 7-րդ դարում Դավիթ Սահառունիի մը Մրենի մեջ շինած եկեղեցին, որուն հետքը այսօր չկա, չէ մոռացված հիշատակելու, իսկ անոր քովիկը Կամսարականի մը ձեռքով կանգնած (ավելի ճիշտը՝ փոխարկված) հսկա եկեղեցին ի՞նչ պատճառ կար չհիշելու: Արդյոք այդ շենքերու ծագումը մոռցնե՞լ տալ կուզեին մեր պատմագիրներ, թե՞ իսկապես իրենց օրով կանգնված շինություններ չէին անոնք: Այս վերջինը ավելի հավանական է: Սույն մի շարք հսկա տաճարներու մասին ոչ միայն 7-րդ դարու պատմագիրներ լուռ են, այլև 5-րդ և 6-րդ դարերու պատմագիրներ, հիշելով հանդերձ իրենց օրով կանգնած եկեղեցիներու անուններն ու տեղերը, երբեք չեն արձանագրած գոնե մյուսներուն մեկ կամ երկուքին անունը: Շատ պարզ է, որ մեզ ծանոթ 5-րդ և 6-րդ դարերու պատմագիրներու ապրած թվականներեն առաջ կանգուն էին անոնք, այլևս ի՞նչ հարկ պիտի ստիպել զիրենք գրելու:

Չե՞նք կարող արդյոք այս ձևի հնագույն տաճարներու վրա հայոց հեթանոսական մեհյաններու պարզ դրոշմը տեսնել, քանի որ անոնք հեթանոս հայոց կրոնակից հունա-հռոմեական մեհյաններուն շատ մոտիկ նմանություն ցույց կուտան»<sup>32</sup>: Նաև ավելացնում է. «...տարօրինակ չի լինիր ենթա-



Մրեն. Կաթողիկե եկեղեցու հարավային (լուս.՝ 2000 թ.) և հյուսիսային (լուս.՝ Սեպուհ եպս. Չուլջյանի, 2011 թ.) ճակատներից բացված լուսամուտների պսակներ և շրջանակ

դրել, որ եթե Երեւույք ու Մրեն և այլ նմաններ մեհենական պարզ դրոշ մը կկրեն, կարող էին ավելի ուշ ժամանակ փոխարկված լինել, քան իրենց նախորդները, փոխարկման ժամանակի քրիստոնեության պահանջներուն համեմատ հավելվածներու ենթարկվելով»<sup>33</sup>:

Մրենի Կաթողիկեն հիրավի «Հայաստանի հին ճարտարապետությանը մեծ պատիվ բերող շենքե-

31 Թորամանյան Թ., նշվ. աշխ., էջ 201:

32 Նշվ. աշխ., էջ 210:

33 Նշվ. աշխ., էջ 211:



Մրեն. հատվածներ Կաթողիկե եկեղեցու արևմտյան և հյուսիսային ճակատներից (լուս.՝ Սեպուհ եպս. Չուլջանի, 2011 թ.)

րեն մեկն է...»<sup>34</sup> և, անշուշտ, զուգակցելի դարաշրջանի առավել արժեքավոր տաճարների հետ. «Basilique ոճի խիստ շքեղ օրինակներն են Արուճի մեջ Գրիգոր Մամիկոնյանի, Մրենի մեջ Կամսարականի շինած կաթողիկեները և Էջմիածնի մոտ Գալանեի վանքը՝ Եզր կաթողիկոսի շինած. այս եկեղեցիներու մեջ բնորոշ նորություն մը եթե կա, այն է, որ արևմտյան կողմը սենյակներ չունեն, իսկ արևելյան կողմի սենյակները փոխանակ հավասարակողմ քառակուսիի՝ ավելի երկարած են դեպի արևելքն արևմուտք՝ հակառակ նախորդ դարու հավասարակողմ քառակուսիին»<sup>35</sup>:

Նկատվել են նաև մասնավոր այլ առանձնահատկություններ. «Ինչ որ ավելի տարօրինակ է և գրեթե հակառակ հայոց եկեղեցիներու ավանդական օրենքին, Մրենի տաճարի կիսաբոլոր խորանին երեք մեծ պատուհաններն ունենալն է. թերևս առաջին և վերջին օրինակն է այս ձևով խորան հայոց մեջ և ուղղակի ազդված Կոստանդնուպոլսու Ս. Սոֆիա եկեղեցիի խորանեն»<sup>36</sup>:

Խորանից բացված երեք լուսամուտների վերաբերմամբ ճարտարապետի հայտնած այսօրինակ կարծիքը, անշուշտ, տարակուսանք է առաջացնում, քանի որ գիտնականը քաջածանոթ էր, օրինակ, Արուճի Մր. Գրիգոր, Թալինի Կաթողիկե, Արթիկի Մր. Գրորգ, Բագավանի Մր. Հովհանես և վերջապես Վաղարշապատի Մր. Հռիփսիմե եկեղեցիներին, որտեղ ամենուր առկա են խորանից բացված երեք լուսամուտներ: Այս առումով երևույթը պարզորոշ արտացոլումն է Եզր կաթողիկոսից մինչև Հովհան Օձնեցի պաշտոնապես ընդունված (սակայն Եզրից առաջ էլ արդեն տարածում գտած) քաղկեդոնական գաղափարաբանության, ուստի ոչ թե «տարօրինակ է», այլ օրինաչափ, որ է դարում կառուցված Մրենի Կաթողիկեն ևս ունի «հայոց եկեղեցիներու ավանդական օրենքին» հակառակ ծիսական գաղափարաբանությամբ թելադրված և ճարտարապետությամբ դրսևորված տարրեր<sup>37</sup>:

Ինչ վերաբերում է այն դիտարկմանը, թե «Իբրև բացառիկ երևույթ նկատելի է Մրենի տաճարին վրա, արևելյան կողմն կիսաբոլորակ խորանին դուրս շեշտվիլը: Ինչպես կերևի, 7-րդ դարուն բոլոր խաչածն եկեղեցիներու վրա, կիսաբոլորակներու (abside) դուրս շեշտվիլը ընդհանրացած նորաձևություն էր, թերևս այդ նորաձևությունն է, որ ազդեր է Մրենի տաճարին վրա, բայց որ չափ տևել է այդ նո-



Կաթողիկե եկեղեցու խորանի ներքո գտնվող թաղակապ սենյակը՝ ավերակված զանձախույզների ձեռքով (լուս.՝ Սեպուհ եպս. Զուլջանի, 2011 թ.)

րաձևությունը՝ հայտնի չէ...»<sup>38</sup>, ապա հարկ է նկատել, որ այդ «նորաձևությունը» բնավ էլ է դարի յուրահատկությունը չէ, այլ հանդիպում է արդեն Դ-Ե դարերով թվագրվող պաշտամունքային բազմաթիվ կառույցներում<sup>39</sup>: Այսու՝ էլ առավել համոզիչ չէ երախտաշատ գիտնականի այն պնդումը, թե «Անդրադառնալով Մրենի տաճարին դուրս հանված կիսաբոլորակ խորանին, պիտի ըսեն, որ երկար քառակուսի հատակագծով եկեղեցիներու մեջ խորանը արևելյան պատեն դուրս հանելու հազվագյուտ օրինակներն են մեկն է 7-րդ դարուն մեջ: Ավելի հավանական է 9-րդ կամ 10-րդ դարուն դուրս հանված լինի, որուն անմիջապես հաջորդած է երեք դուրս ցցված խորաններու (abside) սովորությունը: Համոզվելու համար, բավական է քննական հայացք մը նետել խորանին արտաքո կարգի խորության վրա, որ մեկ ու կես անգամեն ալ ավելի է սովորական խորաններու խորություններն: Մի օր պետք տեսնելով կամ ավելի մեծ խորության և կամ հատկապես խորանը դրսեն տեսանելի ընելու դիտմամբ, քանդեր են արևելյան պատը և դուրս հաներ են: Խորանին երկու կողմի սենյակներուն ծածկը ավելի նորագույն ար-

34 Նշվ. աշխ., էջ 295:

35 Նշվ. աշխ., էջ 125:

36 Նշվ. աշխ., էջ 297:

37 Կաթողիկեի խորանից բացված երեք լուսամուտների առթիվ, քաղերով Ա. Երեմյանից, որ Մ. Հասրաթյանը նշել է. «Շենքի ծավալից դուրս է գալիս միայն արտաքուստ բազմախիտ արքիթը, որը լուսավորվում է երեք պատուհաններով. դա կառուցողի՝ Եզր կաթողիկոսի քաղկեդոնական արտահայտությունն է (Ա. Երեմյան)» (**Հասրաթյան Մ.**, Հայկական վաղքրիստոնեական ճարտարապետությունը, Մոսկվա, 2010, էջ 34):

38 **Թորամանյան Թ.**, նշվ. աշխ., էջ 214:

39 Նմուշները տեսն **Հասրաթյան Մ.**, նշվ. աշխ., էջ 195-196, 198-204, 224-227, 256-259:



Մրեն. Կաթողիկէ եկեղեցու մերքին տեսքը դէպի արևմուտք (լուս.՝ 2000 թ.)

վեստագործության դրոշմն ունի, voute d'arete ըսված ոճի կամարով ծածկված է և հագիվ 12-րդ դարու հնություն ունի հայոց արվեստին մեջ...»<sup>40</sup>:

Շատ այլ եկեղեցիների նման Մրենի Կաթողիկեն խորանի ներքո ունեցել է թաղակապ սենյակ. «Մի քանի եկեղեցիներ ունին առանձնապես խորանին ներքև ալ դատարկություններ գետնափոր, ինչպես Մրենի եկեղեցի...»<sup>41</sup>: Այն ներկայումս գանձախույզների ձեռքով ավերված է:

Եկեղեցու կամարների հորինվածքի մասին, որոնք գոնե ձեռքի տակ եղած լուսանկարների հիման վրա, իրոք, կիսաշրջանի տպավորություն են բողոմում, Թ. Թորամանյանը նշել է. «...միայն Մրենի եկեղեցիին աղեղներն են, որ թեև դարձեալ բեկում ունին կատարին վրա, սակայն այնքան քիչ, որ անզգայի է և առաջին նայվածքով ուղիղ կիսաբոլորակի տպավորությունը կթողու»<sup>42</sup>:

Անդրադարձալով ծածկերին՝ նշենք, որ Մրենի Կաթողիկեն սակավաթիվ այն հուշարձաններից է, որն առ այսօր ութանիստ վեղարին կրում է իր նախնական (է դարից) բարձրորակ կոմիդորով պատված ծածկի զգալի հատվածներ. «Որ հնում աղյուսը կատարելապես ձուլել և թրծել գիտեին, վկայում են մինչև այժմ դեռ կանգուն հնագույն շենքերի, ինչպես՝ Մրենի, Աշտարակի, Բագարանի, Տեկորի, Չվարթնոցի և ուրիշների վրա եղած կոմիդորները, որոնք ոչ միայն չափազանց լավ եփված են, այլև ձևով այնքան լավ մշակված չեն անցկացնում ներքև»<sup>43</sup>:

Եկեղեցու կոմիդորածածկի մասին ուշագրավ դիտարկումներ ունի նաև 1920 թ. Մրեն այցելած Աշխարհբեկ Քալանթարը. «Բարեբախտաբար Մրենի գմբեթը պահպանվել է նախնական՝ սկզբնական ծածկը կոմիդորով: Բացի այդ, գմբեթի կոմիդորները տափակ չեն, այլ կիսաբոլոր, կես արած գնդի նման: Կոմիդորների կտորներ անթիվ քանակությամբ թափված էին Բագարանի Ս. Թեոդորոսի շուրջը (այնտեղ կան և տափակներ), պարզ է, որ նրա գմբեթն էլ Մրենի նման ծածկ է ունեցել»<sup>44</sup>:

Եկեղեցին նշանակալի նորոգությունների է ենթարկվել ԺԳ դարում: Դրանք առանձնապես ակնհայտ են եկեղեցու հարավային (ներքուստ և արտաքուստ) և արևմտյան (միայն արտաքուստ) ճակատներին: Այս մասին նշել են և՛ Թ. Թորամանյանը. «Մրենի կաթողիկեին հարավային պատին կեսն ավելին հիմեն վեր վերստին նորոգված է...: Այժմ ալ նույն պատը վտանգված է»<sup>45</sup>, նաև՝ «Չգիտեմ՝ ինչ պատճառով, արևմտյան ճակատի արտաքին քարերի մի նորոգություն է հարկ եղած 13-

րդ դարում: Հատկապես զանազան չափերով մի խումբ խաչքարեր պատին ամրացնելու դիտավորությանը շենքի ճակատի քարերը քանդեր են և վերին աստիճանի ճարտարությամբ նորանց տեղը շարել են 10-րդ և 11-րդ դարերու խաչքարերը, որոնք մինչև այսօր պատին հետ լիակատար ձուլված՝ մնացել են անվնաս»<sup>46</sup>, նաև՝ «Հարավային ճակատի արևմտեան անկյունին մոտ, պսակեն մինչև դռան կամարը (մասնապես արևմտեան կողմն ալ) չորսեն մինչև հինգ մետր լայնությամբ՝ պատներ են պատը և վերստին տեղը նոր քարեր շարեր են: Այս քանդումը կամ փոփոխությունը, հնացած կամ որևէ արկածով վնասված մասի մը նորոգության երևույթը չունի ամենևին. կարծեք թե հատկապես այդ մասին վրայեն մի հիշատակություն կամ մի ուրիշ անհաճո բան անհետացնելու դիտումով քանդած և վերաշինած են: Այս ըսածիս հավանական ճշմարտության կհամոզվին ամեն անոնք, որոնք մասնագիտորեն քննելով կտեսնեն, թե ինչպես պատին վրա դեռ մինչև այսօր ալ առողջ մնացած մեծ ծավալով քարեր հակուղիղ ձևով տաշված և անոնց վրա նոր քարեր պատշաճեցուցված են: Հավանաբար այս փոփոխությունը կատարվել է 13-րդ դարում, որովհետև այդ մասին վրա գրված արձանագրություններ, որոնց ամենահինը Չ թվականը չանցներ»<sup>47</sup>, «...Մրենի տաճարին արևելյան և հարավային պատերու մեջ ազուցված խաչքարերը 10-րդ դարու գերեզմաններու վրա է քանդելով՝ բերած շարած են այնտեղ: Հավանորեն տաճարը նորոգողի տոհմին հիշատակարաններն էին անոնք. հետևաբար Մրենի տաճարը պետք է որ նորոգված լինի 10-րդ դարու կեսն հետո, եթե ոչ ավելի շատ ուշ, որով անկյուններու սյունանման քանդակվածքն ալ կլինի 10-րդ դարու կեսն հետո շինված գործ»<sup>48</sup> և՛ ավելի ուշ նաև Ա. Քալանթարը. «Մրենի եկեղեցին նորոգումներ շատ է կրել: Պատերի մեջ մասնավանդ արևմտյան՝ դրսից, և հարավային՝ դրսից ու ներսից, ահագին քանակությամբ խաչքարեր են դրված: Բազմապիսի և ընտիր օրինակներ են դրանք անխտիր բոլորը: Արևմտյան պատում մուտքի գլխի զարմանալի ռելիեֆի գլխին եղել է ըստ երևույթին կլոր ձև ունեցող ընդարձակ ռելիեֆ (այժմ ներքևում մի չնչին բան է մնացել շրջանակի կտորով), շատ տեղերում շատ բան է փոխված: Շինության արձանագրության սկիզբը և վերջը, մի-մի քար, նույնպես խաչքարերի է փոխվել»<sup>49</sup>:

Նորոգության ընթացքում երեսապատի սրբատաշ քարերը խաչքարերով փոխարինելն ընդհանուր առմամբ ընդմիջել են որմնի ողորկ միապա-

40 Թորամանյան Թ., նշվ. աշխ., էջ 216:

41 Նշվ. աշխ., էջ 149:

42 Նշվ. աշխ., էջ 180:

43 Նշվ. աշխ., էջ 142:

44 Քալանթար Ա., Հայաստան. քարե դարից միջնադար, ԵԺ, հ. 4, Երևան, 2007, էջ 192:

45 Թորամանյան Թ., նշվ. աշխ., էջ 133:

46 Նշվ. աշխ., էջ 296:

47 «Ախուրյան», 1909, օգոստոս 9: Տե՛ս նաև Թորամանյան Թ., նշվ. աշխ., էջ 191, 193:

48 Նշվ. աշխ., էջ 193:

49 Քալանթար Ա., նշվ. աշխ., էջ 192-193:



Մրեն. հատվածներ Կաթողիկե եկեղեցու գմբեթի և խորանի գմբեթարդի մերքին ծավալներից (լուս.՝ Սեպուհ եպս. Զուլքյանի, 2011 թ.)



ղաղությունը, և դժվար է գեղարվեստական առումով միանշանակ գնահատական տալ, սակայն կանաս այսպիսի կարծիք. «...հարաւային պատին գետնէն չորս մէքր բարձրութեան վերայ գտնուող 10-րդ դարու խաչքարերը եթէ իբր զարդարանք ընդունինք, զարտուղի եւ անհաճոյ տպաւորութիւն մը կը գործեն յուշարձանին ներքին միասնականութեան մէջ»<sup>50</sup>:

Եկեղեցին ներքուստ ամբողջապէս սվաղված է եղել, և տեղ-տեղ դեռևս նկատելի է նաև որմնանկարագարդ: Քիչ թէ շատ բարվոք դրոթյան մեջ են խորանի գմբեթարդի հարավային կողմում միմյանց հաջորդող մեղալիոնակերպ սրբապատկերները (պահպանվել է երեք ամբողջական և 1 հատվածական սրբապատկեր). «Խորանի կիսաբոլորակը ծեփուած է եւ վրան առաքեալներու ուրուագծերը քանդակուած են պարզ ակօսներով, ինչ որ կիսաւարտ մնացած է»<sup>51</sup>:

Եթե եկեղեցու ներքին հարդարանքում աչքի են ընկել որմնանկարները, ապա արտաքին հարդարանքում՝ լուսամուտների պսակները (ի դեպ, ավանդատներից դեպի արևելք բացված լուսամուտների պսակներն իրենցից ներկայացնում են իրար փաթաթված վիշապներ), քիվագոտիները և հատկապէս հյուսիսային և արևմտյան մուտքերի բարավորները (ԺԳ դարից հետո, անշուշտ, նաև հարա-



50 Մարգարյան Զ., Բաղրատական ակնարկ մը կրօնական ճարտարապետութեան վրայ հայ ճարտարապետութեան տեղը անոր մէջ, Իսթանպուլ, 1970, էջ 123:

51 Նշվ. աշխ., էջ 121:

Կաթողիկէ եկեղեցու հարավային որմին ԺԳ դարի նորոգութեան ժամանակ ներքուստ ազուցված խաչքարերը (լուս.՝ 2000 թ.), որոնք 2005-2006 թթ. որմի այդ հատվածի փլուզումից հետո հայտնվել են փլատակների մեջ



Կաթողիկե եկեղեցու արևմտյան մուտքի բարավորը (լուս.՝ Սեպուհ եպս. Զուլջանի, 2011 թ.)

վային և արևմտյան որմերին նորոգման ժամանակ ազուցված բազմաթիվ խաչքարերը):

Առավել զուսպ է հարավային ճակատից բացված մուտքի բարավորը: Այստեղ քարի ողորկ մակերեսի կենտրոնում բոլորածև շրջանակի ներքո հավասարաթև խաչի քանդակ է, մինչդեռ հյուսիսային և արևմտյան մուտքերի բարավորները պատված են հարուստ բարձրաքանդակներով, որոնց առաջին նկարագրությունը տվել է հայր Ն. Սարգսյանը. «Են սորա բարձրաքանդակ պատկերք վերոյ հիւսիսային և արևմտեան դրանցն. ի հիւսիսայինումն է երիվար համետեալ և առ նմա այր մի անկեալ ի ծունկս առաջի խաչի բարձրացելոյ ի ձողի, զոր կալեալ ունի մանուկ մի նոյնպէս ի ծունկս անկեալ. յետոյ նորա մորուեղ ծեր մի երկայն պարեգօտի ի նոյն դիրս այլոց և յաջոց ձեռին

երկայն քսակ. յետոյ ամենեցուն ծառ մի: Իսկ յարևմտեանն են հրեշտակք երկու յոտին, և ստորև նոցա արք վեց, և ոմանց ի նոցանէ մատեան ի ձեռին»<sup>52</sup>:

1878 թ. Կարսի առաջնորդին նույնպես հետաքրքրել են բարձրաքանդակները. «...արևմտեան դրան վերայ վեց պատկերներ քանդակուած են և սոցա գլխոյն վերայ երկու հրեշտակներ թևատարած, իսկ հարաւային դրան վերայ կայ քանդակուած մի ձի, մի խաչադրօշ կրող անձ, մի ի կուճ եկեալ, մի բուրվառակիր, և մի ևս եօթաճիղ ծառ»<sup>53</sup>: Այդ մասին նշվել է նաև. «...քանդակագործական խումբ կայ և Մրենի տաճարի մէջ, որտեղ պատկե-

<sup>52</sup> Մարգսեան Ն., նշվ. աշխ., էջ 196:

<sup>53</sup> ԳԱԹ, Գ. Սրվանձտյան ֆոնդ, ք. I, գ. 17, ք. 9: Տե՛ս նաև Մրապեան Կ., նշվ. աշխ., «ԲՀԱ», 1970, № 2, էջ 105:




րացրած են աշխարհական անձինք, որոնցից մէկ իշխանի գլխին ապարօշանման զարդ կայ»<sup>54</sup>:

Արդեն 1881 թ. արևմտյան մուտքի պատկերաքանդակներն այսպես է մեկնաբանել նաև Կ. Օհանջանյանցը. «...զարդարուած է գրեթէ մէկ արշինաչափ բարձրութեամբ 5 ուռուցիկ արձաններով, որոնցից մէջ տեղի երեքը պատկերացնում են 3 աներատարանիչներին, որոնք բռնած ունեն աստուծոյ խօսքերը, իսկ երկու, աջ և ձախ կողմերի արձանները թերևս հրեշտակներ լինեն, որոնք մատնանիշ լինելով դէպի Փրկչի աշակերտները՝ պատուիրում են հնազանդուել Աստուծոյ խօսքերին: Սոցա բարձր, կիսաքանդ կամարի ներքև շինուած են երկու աւելի մեծ և բարձր արձաններ, դոքա թռչունի պէս թևեր ունեն, աջ ձեռքերը կտրծքերին դրած, որ հպատակութեան և խոնարհութեան յատ-



Կաթողիկէ եկեղեցու հյուսիսային (լուս.՝ Սեպուհ եպս. Զուլջանի, 2011 թ.) և հարավային (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2000 թ.) մուտքերի բարավորները

54 «Հովիտ», 1907, № 33, էջ 525:



Կաթողիկէ Եկեղեցու հարավային որմին ժԳ դարի նորոգութեան ժամանակ արտաքուստ ագուցված խաչքարերը (լուս.՝ 2000 թ.), որոնք 2005-2006 թթ. որմի այդ հատվածի փլուզումից հետո հայտնվել են փլատակների մեջ



Կաթողիկէ եկեղեցու հարավային որմին ԺԳ դարի նորոգութեան ժամանակ արտաքուստ ազուցված խաչքարերը (լուս.՝ 2000 թ.), որոնք 2005-2006 թթ. որմի այդ հատվածի փլուզումից հետո հայտնվել են փլատակների մեջ

կանիշն է, թերևս աղօթում են եկեղեցականների համար և պահպանում են նոցա: Ինչպէս ասացինք, այս երկու հրեշտակների բարձրով անցնում է դրան կիսաբոլոր շրջանակը նեղ և սրանկիւն շերտերով, որի վերայ քանդակուած կայ խաղողի լայն տերևներ ուռուցիկ ողկոյզներով»<sup>55</sup>:

Թ. Թորամանյանը գտնում է, որ պատկերաքանդակներն «...ավելի պատմական նշանակություն ունին, քան գեղարվեստական: Այս քանդակներուն մեջ մենք կտեսնենք 7-րդ դարու հայ իշխանին ու ազնվականին տարազը իր բոլոր մանրամասնություններով, որուն անփոփոխ շարունակությունը պահված է քուրդ պեյերու մեջ»<sup>56</sup>: Գիտնականը նաև նկատել է, որ երկու մուտքերին առկա բարձրաքանդակները «...բավականին մեծ են և խառն են կրոնական ու աշխարհիկ մարդկանց պատկերներով. այս պատկերները չափազանց շահեկան են ազգագրական տեսակետով. որովհետև կրոնական բարձրաքանդակները, եթե բյուզանդական պատկերների ոճը կամ տիպը ունին, այնուամենայնիվ աշխարհիկ մարդկանց պատկերները գուտ տեղական տարազով հագնված մարդիկ են»<sup>57</sup>:

Կարծիք կա նաև, թե քանդակաշարը ներկայացրել է կտիտորների աղոթքը «...սրբերի ամբողջ շարքի առջև (այստեղ են Քրիստոսը, Պողոս և

55 Յովհաննջանեանց Ա., Միեն, «Մեղու Հայաստանի», 1881, № 143, 25 յուլիսի, էջ 1:

56 Թորամանյան Թ., նշվ. աշխ., էջ 175:

57 Նշվ. աշխ., էջ 296:



Կաթողիկե եկեղեցու արևմտյան որմին ժԳ դարի նորոգության ժամանակ արտաքուստ ագուցված խաչքարերը (լուս.՝ 2000 թ.), որոնք դեռևս հարատևում են իրենց նախնական տեղում

Պետրոս առաքյալները, ևս մեկ սուրբ, հավանաբար՝ Գրիգոր Լուսավորիչը»<sup>58</sup>:

Ինչ վերաբերում է ԺԳ դարում իրականացված նորոգությունների ժամանակ եկեղեցու որմերին ընդհանուր թվով ագուցված 51 խաչքարերին, ապա

նրանցից 16-ն արտաքուստ ագուցված է եղել արևմտյան (դրանցից 8-ը դեռևս տեղում է), իսկ 35-ը՝ հարավային ճակատին: Վերջիններիցս 23-ն ագուցված է եղել որմի արտաքին, իսկ 12-ը՝ ներքին երեսապատի մեջ, ընդ որում, դեռևս մինչև 1950-ական թթ. նրանցից 5-ն անհետացել է եկեղեցու հարավարևմտյան անկյանը հարող հատվածի փլուզ-

<sup>58</sup> Մնացականյան Ս., Հայկական աշխարհիկ պատկերաբանությանը, Երևան, 1976, էջ 9:



Կաթողիկէ եկեղեցու տեսքը հարավ-արեւմուտքից (լուս.՝ Երմակովի, 1890-ական թթ.) և հարավից (լուս.՝ Սեպուհ եպիս. Զուլքյանի, 2011 թ.)

ման հետևանքով, իսկ մնացած 30-ը (12-ը՝ ներքուստ, իսկ 18-ը՝ արտաքուստ) փլատակների մեջ է հայտնվել 2005-2006 թթ. հարավային ճակատի մեծագույն մասի փլուզումից ի վեր:

Խաչքարերի վերաբերմամբ հարկ է նաև նշել, որ ազուցելիս հեռացվել են նրանց ստորին ելուստները, որոշ խաչքարեր տուժել են նաև վերին կամ ստորին, մի քանիսը՝ նաև կողային հատվածներից: Մեկ խոսքով՝ ակնհայտ է, որ եկեղեցին նորոգելիս առանձին կարևորություն չի տրվել խաչքարերի գեղարվեստական նշանակությանը: Դրանք գործածվել են որպես հարմար և պատրաստի շինանյութ:

Մրենի Կաթողիկեն իր չափերով Անիի Մայր տաճարից հետո համարվում է ողջ Արևմտյան Շիրակի առավել մեծադիր շինությունը: Այս առթիվ ճարտ. Հ. Մարգարյանը նշել է. «Յատակագիծը 20,00 x 29,30 մ, այսինքն մոտավորապես 586 մ քառակուսի ուղղանկյուն քառանկյուն գետնի վրայ կը հանգչի ինչ որ Ախուրեան գետի աջ ափին վրայ գտնուող եւ ամենամեծը եղող Անիի Մայր տաճարէն վերջ երկրորդ կուգայ, իսկ իր բարձրութեամբ կը կարծեն որ առաջինն է»<sup>59</sup>:

Պատմությունը մեզ չի ավանդել եկեղեցու ճարտարապետի անունը, սակայն Ա. Քալանթարի քննախույզ աչքն այստեղ նկատել է մի տառ, որի կրկնօրինակը եղել է նաև Ագարակի եկեղեցու մ: Այն թերևս կարելի է վարպետի նշանագիր կամ պարզապես անվան առաջին տառ համարել. «Պատի քարերի վրա տեսա Յ տառը, այս նույն Յ-ն, որ կա Ագարակի խաչածն եկեղեցու վրա. միտքս այն է, թե մի վարպետ է աշխատել այս երկու հուշարձանի վրա, մի մարդ է այս բացառիկ գլուխգործոցների ստեղծողը»<sup>60</sup>:

Մրենի Կաթողիկեն հետագոտած բոլոր հեղինակներն առանձնահատուկ նկատել են կառույցի հանճարեղ պարզությունը: Ճարտ. Հ. Մարգարյանը նշել է. «...տաճարին անձանօթ ճարտարապետը կարողացած է իրագործել՝ «Պարզով ամենադժուարինը»<sup>61</sup>:

Բնութագրելով եկեղեցու տեխնիկական վիճակը՝ հարկ է նշել, որ դեռևս 1900-ական թթ. վերջերին կացությունն ընդհանուր առմամբ անվտանգ էր. «...գրեթե մինչև մեր օրերը կանգուն է աննշան վնասվածքներով: Եթե հնագիտական լուրջ հոգատարություն լինի, հեշտությամբ դարմանելի վնասվածքներ, և այն ժամանակ այս շենքը դեռ մի քանի դար ևս կապրի»<sup>62</sup>: Վիճակը փոքր-ինչ մտահոգիչ է նկարագրել Ա. Քալանթարը 1920 թ. «Տաճարը կանգուն է ամբողջովին, գմբեթով հանդերձ, բայց շատ վտանգավոր ճեղքվածքներ ունի. օրինակ, արևմտյան պատի հյուսիսային անկյունը՝ վերից մինչև


վար, նույն կողմի հարավային թևը՝ միջին նեֆից սկսած թեք գծով պատուհանով՝ մինչև գետին, ուր այդ ներքին անկյունը քանդված է բոլորովին: Ուրիշ ճեղքվածքներ էլ կան, գմբեթը ծակված է՝ խաչի տեղը, պատերի մեջ ծակվածներ կան, որոնք փակված են հասարակ քարերով, առանց շաղախի (արևմտյան և հյուսիսային պատերի մեջ): Ծածկը վնասվածքներ ունի: Անհրաժեշտ է, առաջին հերթին, այդ տեղերը կարգի բերել, այլապես ջրի մտնելով պատերի մեջ քանդումը կարող է արագ քայլերով առաջ գնալ և արագորեն խախտել այս եզակի հուշարձանը»<sup>63</sup>:

Ինչ վերաբերում է 1920 թ.-ից ի վեր ստեղծված կացությանը, ապա հստակ է, որ վերջին 90 տարիներին մարդկային չարամտությունն ավելի է քայքայել հնամենի կառույցը, քան անցած 1300 տարիները:

Մրենի Կաթողիկեն ճարտարապետական հանճարի արգասիք է, ուստի «...որքան ատեն, որ կանգուն մնայ՝ այդ ամայութեան մեջ պիտի փնտրել զինքը գնահատող գեղարուեստասերներ»<sup>64</sup>:

*Վիճագրեր.* Մրենի Կաթողիկեն եկեղեցու արձանագրությունների հավաքման, վերծանման և հրատարակման գործում ևս հիմնարար ավանդ ունի հայր Ներսես Մարգարյանը<sup>65</sup>: Նրա՝ բարեբախտաբար բավականաչափ ամբողջական վերծանություններից հետագայում օգտվել են բազմաթիվ ուսումնասիրողներ, ովքեր հարկ եղած դեպքում հենց այդ ընթերցումներն են վերահրատարակել:

Մրանով հանդերձ՝ վաղուց հասունացել էր եկեղեցու արձանագրությունները գիտության այդ ճյուղի ժամանակակից պահանջների համեմատ հրատարակելու կարիքը: 2000 թ. ձեռք բերելով նպատակին ծառայող հարկավոր լուսանկարները՝ Կաթողիկեն եկեղեցուն նվիրված սույն բաժինը եզրա-



Կաթողիկեն եկեղեցու արևմտյան ճակատին առկա վիճագրերի տեղադրության սխեմա

59 Մարգարյանեան Յ., նշվ. աշխ., էջ 120:

60 Քալանթար Ա., նշվ. աշխ., էջ 192:


61 Մարգարյանեան Յ., նշվ. աշխ., էջ 123:

62 Թորամանյան Թ., նշվ. աշխ., էջ 295:

63 Քալանթար Ա., նշվ. աշխ., էջ 191:

64 Մարգարյանեան Յ., նշվ. աշխ., էջ 130:

65 Մարգարյան Ն., նշվ. աշխ., էջ 196-200:



վիակում ենք՝ ներկայացնելով եկեղեցու արևմտյան և հարավային որմերի արձանագրությունները:

**Ա.** Արևմտյան ճակատի վերնամասում, 3 տող.

*[Ամոյն քսան եւ իններ]որդի (կառ) [երեսներ]որդի* Հերակղի բարեյաղթող թագաւորի յիշխանութեան Դաւթի ա]մենագոյ պատրկի կուրապաղատի եւ սպարա/[պետի Հայ]ոց եւ ասորոց եւ յեպիսկոպոսութեանն սրբա[սիրի տեսոն Թե]ովփիղոսի եւ ի տանուտերութեան Ներսե[հի Շիրա]կայ եւ Արշարունաց տեսոն շինեցաւ սուրբ եկեղեցիս ի բարեխաւս]ութիւն Կամսարականաց եւ Սրենոյ եւ ամենայն երկրի:

Հրատ. **Ալիշան Ղ.** Այրարատ, Վեներիկ, 1890, էջ 114; **Օրբելի Ի.** Багаванская надпись 639 года и другие армянские ктиторские надписи VII века, “Христианский Восток”, СПб, 1913, т. 2, выпуск 1, էջ 138; **Օրբելի Ի.** Избранные труды, Ереван, 1963, էջ 401; **Մանուչարյան Ա.** Սրենի և Թալին տաճարների շինարարական արձանագրությունները, «ՊԲՀ», 1966, № 1, էջ 247; **Մնացականյան Ս.**, Ե՞րբ է կառուցվել Սրենի տաճարը, «ՊԲՀ», 1969, № 3, էջ 161:

Ծանոթ. 639-640 թթ. շինարարական այս վիմագիրն առաջինը նկատել, սակայն բարձրության պատճառով չի կարողացել ընդօրինակել հայր Ն. Սարգսյանը. «Ի նոյն յարեմտեան կողմն բաց ՚ի վերոյգրեթոց կայր և այլ միս ևս արձանագիր խոշորատառ, որ վասն բարձրութեան տեղոյն մնաց անվերժանելի, իւրում թերևս յիշատակ գոյր հիմնադրի նորա Դաւթի Սահառունոյ» (**Սարգսյան Ն.**, նշվ. աշխ., էջ 158): Տեսական ընդմիջումից հետո վիմագիրն առաջինը հրատարակել է Ղ. Ալիշանը: Ավելի ուշ լուսանկարների և Ն. Մատի՝ 1892 թ. կատարած դաշտային գրառումների հիման վրա վիմագրի վերծանությունը հրատարակել է մահ Հ. Օրբելին: Հիմք ընդունելով Կ. Գանձակեցու վկայությունը՝ «Յատրս սորա ի ԿԲ (613) թուականին եղև շինուած կաթողիկէին Սրենոյ», Ա. Մանուչարյանը վիմագրի կորած սկզբնամասն առաջարկել է ընթերցել. «[Յամի երր]որդի Հերակղի...», իսկ Ս. Մնացականյանը՝ «[Ամի երեսներ]որդի Հերակղի...»:

Ներկայացնում ենք Հ. Օրբելու վերծանությունը:

**Բ.** Արևմտյան ճակատին, 5 տող.

*Յանուն ա(ստուծոյ) ի ՆԽԱ (992) քիվականիս եւ Դաւիթ Վարդա որդի ետու զիմ այգին զայն | որ ... ի գետեզերն իմ ձեռաց արկել ի սուրբ Կաթաղիկե ի ձեռն աստուածապատիվ | եւ հոգետր տեսոն Սահակայ եւ պարտիս եմ [ընգեցեալ մինչ ի] միս {ան}անգամ գալուստն զբար/եկենդանին ուրբաբ արն պատարագ[ն յամենայն եկեղե]ցիս յիմ անուն մատուցանե եւ որ որ ստե կամ յապիշտակել իմ մեղ[ացս եւ իմ ազգի մեղաց] պարտական եղիցի առաջի աստուծոյ եւ | [աստուծոյ յաստուծոյ դատապարտ եղիցի եւ մասն եւ բաժին ընդ իսաչահանս կրեց: | իսկ կատարիչ գրոյս արինեալ եղիցին յաստուծոյ եւ յամենայն սրբոց]:*

Հրատ. **Ջալալեանց Ս.**, Ճանապարհորդութիւն ի Սեծն Հայաստան, Տիփսիս, 1858, Բ, էջ 47 (զգալի անճշտություններով); **Սարգսեան Ն.**, նշվ. աշխ., էջ 196-197; **Ալիշան Ղ.** Շիրակ, էջ 138; «Մերու Հայաստանի», 1881, № 146, էջ 1-2; **Эмян Н.**, Армянские надписи в Карсе, Ани и в окрестностях последнего, Москва, 1881, էջ 72-73; **Սրապյան Կ.**, նշվ. աշխ., «ԲՀԱ», 1970, № 2, էջ 105:

Ծանոթ. ներկայացնում ենք Ն. Սարգսյանի վերծանությունը:

**Գ.** Արևմտյան ճակատին՝ մուտքից հարավ, 7 տող.

*Եւ եւ Սովի դուստր մեծին Աշոտոյ Շ[ահան-շ]լահի Հ[այոյց եւ Վրաց թագուտի տվեալ եմ ե[ւ] |*



Կաթողիկե եկեղեցու արևմտյան ճակատի 992 թ. արձանագրության (NՊ Բ) լուսանկարն ու գրչանկարը



Կաթողիկե եկեղեցու արևմտյան ճակատի Ժ-ԺԱ դարերի արձանագրության (NՊ Գ) լուսանկարն ու գրչանկարը

[h]աստատեալ զԴարթի զայգին ի սուրբ կաթ[ո]ղիկե եւ ի տ(է)ր Սահակ եւ ի նորին աթոռակալս / [q]որ ինքն ինձ անդարձ եր արարեալ վասն Դավթի / [hո]գոյն եւ վասն իմ եւ վասն Գագկայ Շահան[շա]յի արեւշատութեան եւ որ որ յայրջտակել ջա[նայ] յա(ստուծոյ) բանն ...եալ եղիցին իսկ հրամանակատարքն արինեալ եղիցին յաստուծոյ]:

Հրատ. Մարգսեան Ն., նշվ. աշխ., էջ 197; Ալիշան Ղ., Շիրակ, էջ 138; «Մեղու Հայաստանի», 1881, № 146, էջ 1; Զմառ Ի., նշվ. աշխ., էջ 73; Մրապեան Կ., նշվ. աշխ., «ԲՀԱ», 1970, № 2, էջ 105:

Ծանոթ. ժամանակը որոշվում է Աշոտ Գ Ողորմածի դստեր՝ Սոփիի անվան հիշատակությանը (Ժ-ԺԱ դդ.): Արձանագրության չպահպանված (2000 թ.) հատվածները լրացրել ենք ըստ Ն. Մարգսեանի հրատարակության:

Գ. Արևմտյան ճակատին՝ մուտքից հյուսիս, 9 սող.

Յանուն ա(ստուծոյ) այս իմ ի հրամանք են Գագկա շահիագնշահի / ազատեալ են զՄրենոյ զկոռն, որ ի Նախճաւանի էր զմարդո / եւ զեզին ի ձեռն խնդրոյ ա(ստուա)ծապատի տ(եառ)ն Սահակ Աշարունեաց եպիսկոպոսի որ անմառաց խնդրե ի Զ(րիստոս)է թողութիւն լինելի մեղաց իմոց արդ արդ որ ընդիմանա իմա հրաման[ց]նացս կամ / յիմ յորդեաց կամ այլոք եւ իցե պարտական լիցի մեղաց իմոց եւ / իմ ամենայն ազգի եւ սպանման արեանն Զ(րիստոս)ի, իսկ կատարիչ գրոյս արին(եալ) եղիցի Զ(րիստոս)է սուրբ կաթաղիկէ եւ սուրբ Նշանս լիցի կնիք գրոյս / եղաւ առաջնորդ բարոյս հարպ հայոց տանաւտէր:


Հրատ. Մարգսեան Ն., նշվ. աշխ., էջ 197; Ալիշան Ղ., Շիրակ, էջ 138-139; «Մեղու Հայաստանի», 1881, № 146, էջ 1; Մրապեան Կ., նշվ. աշխ., «ԲՀԱ», 1970, № 2, էջ 105 (թերի); Զմառ Ի., նշվ. աշխ., էջ 73:

Ծանոթ. ժամանակը որոշվում է Գագիկ Թագավորի գահակալության տարիներով (989-1020 թթ.):

Ե. Արևմտյան ճակատին՝ մուտքից հարավ, 8 սող.

Վահան քահանա գծող: / Ի ՆՂ (1041) թուակա-նութեանս Հա(յ)ոց, ի հայրապետութեան տ(եառ)ն Պետրոսի եւ Խաչկա Հա(յ)ոց կաթողիկոսաց, այս իմ հրամանք են Գագկա Շահանշահի որդոյ Աշոտտ՝ ազատել իմ զՄրենոյ զհարկն զծուծ եւ մրուր, զկապիճքն :ԻԵ: (25) / իջուցի եւ բազինի հացն եւ զղրամն, եթե որ ընդիմանա հրամանաց իմոց / յիմոց կամ այլ որ ով իցե պարտական եղիցի սպանման արեանն ի Զ(րիստոս)ի ի ժամ ամենայն / ազգի մեղաց տէր է ի ՅԺԸ ն (318) հայրապետացն նզովեալ եղիցի ի կենոք եւ մահու / եղեւ առաջնորդ ...Գրիգոր Հա(յ)ոց տանաւտէր:

Հրատ. Ջալալեանց Ս., նշվ. աշխ., Բ, էջ 47; Մարգսեան Ն., նշվ. աշխ., էջ 197; Ալիշան Ղ., Շիրակ, էջ 139; «Մեղու Հայաստանի», 1881, № 146, էջ 1; Զմառ Ի., նշվ. աշխ., էջ 74; Մրապեան Կ., նշվ. աշխ., «ԲՀԱ», 1970, № 2, էջ 105 (թերի):



ԿՅԱՆ ՈՒՆ ԱՅԱՅՍԻՆՏՐԱՄԱՆ ԲԵՆԻՄԻԿԱՇԻ ԱՉՍՇԱՍԻ  
 Ա ՉԱՆԵԱԼԵՍՉՄՐԵՆՈՅԳՈՒՆՈՐԻՆ ԱԻՃԱԻԱՆԻ ԲԶՄԱՐԴՈ  
 ԵՂԶԵԶԻՆԻ ԶԵՆՈՒՆԻՆ ԴՈՅԱԾԱՂԱՍԻՄՆՍԱՏԱԿԱԱՇԱՐՈՒՆ  
 ԵԱՅԵՂԻՍԿՈՂՈՍԻՈՐԱՆ ՄԱՌԱՅԻՆ ԴՐԵԻՔԵՌՈՂՈՒՈՒՄԻՆ ԿՆԵ  
 ԱՆԵՂԱՅԻՄՈՑԱՐԴԱԻՈՒՔԸ ՆԻՄԱՆ ԱԻՄԱՏՐԱՄԱՅՆ ԱՅՍԿԱՄ  
 ՅԻՍՅՈՐԴԵԱՅԿԱՄ ԱՅԼՈՒՔԵԻ ԿՅԵՂԱՐՄԱԿԱՆ ԼԵՑԻՍԵ ՂԱՅԻՄՈՑԵԻ  
 ԻՄԱՍԵՆ ԱՅՆ ԱՉ ԳԻԵԻՍՂԱՆ ՄԱՆ ԱՐԵԱՆՆՔԻ ԻՍԿԱՄ ԱՐԻՉԳԻՐՈ  
 ՅԱՍԻՆԵՆ ԼԵՑԻՔԵՍ ՈՒՐԲԿԱՌՈՒԿԵՒ ՄՈՒՐԲՆՇԱՆ ՍԼԵՑԻԿՆԻ ԳԻՐՈՅՍ  
 ԵՂԱԻԱՌԱՋՆՈՐ ԴԲԱՐՈՅՍ ՏԱՐԴՏԱՅՈՅՅԻՄԱՆ ԱԻՆԵՐ

Կաթողիկե եկեղեցու արևմտյան ճակատի Ժ-ԺԱ դարերի արձանագրության (N<sup>o</sup> 7) լուսանկարն ու գրչանկարը



ԱՆՆԱՆԲԱՆԱՆԱԳԻԾՈՂ  
 ԻՆՂՈՒԱՆԱՆՈՒՈՒՅԵ ԱՆՏԱՆ ՅԻՆԱՅՐԱՊԵՏՈՒՈՒՅԵ ԱՆՂՊԵՏՐՈՍԻԵԻՈՒՂ  
 ԱՆՆԱՆՅԱՌՈՂԵԿՈԱՅԱՅՍԻՆՏՐԱՄԱՇԿԵՏԱԳԿԱՋԱՆԱՆՆԱՆՈՐԴՈՅԱ  
 ՉՈՐՈՒ ՉԱԼԵՒՄՉ ՄՐԵՆՈՅՉՏԱՐԸ ՉԻՈՒԾԵՄՐՈՒԹՅՈՒՆՔԻՆԵ  
 ԻՋՈՒՑԻԵԻԱՐԻՆԿԱՅՆԵՉ ԴԲԱՆԵՌԵՆՈՒՔԸ ԵՒՄԱՆԱՆՏՐԱՄԱՆ ԱՅԻՈՅ  
 ՅԻՄՈՅ ԳԿԱՄԱՅՈՒՔՈՒՄԵՑԵՂԱՆԱԿԱՆՅԻՍՂԱՄԱՆ ԱՐԵԱՆԵՔԻՅ՝ ԱՄԱՊԵԱՅՆ  
 ԱՉԳԻՆԵԱՅՏԻԵԻՅԻՇՆԱՅՐԱՊԵՏՆԵՉՈՒՄԵԱԼԵՂԵՑԻԿԵՆՈՒՔԻՄԱՆՈՒ  
 ԵՂԵԱՌԱՋՆՈՐԴԻՔԻ ԳԻՐԳՈՐՏԱՆ ՅԻՄԱՆՈՒՅԵՐ


Կաթողիկե եկեղեցու արևմտյան ճակատի Ժ-ԺԱ դարերի արձանագրության (N<sup>o</sup> 8) լուսանկարն ու գրչանկարը

Ծանոթ. առաջին տողում տառերն ավելի խոշոր են: Ջալալյանցի ընթերցումը կիսատ է, թվականը սխալմամբ՝ ՆՁ (957): Ն. Սարգսյանն ունի մանր տարրընթերցումներ: Ի դեպ, արձանագրության մեջ հիշված նվիրատու Աշոտ Դ-ն վախճանված է համարվում 1040 թ., մինչդեռ վիճագիրն ավանդում է, որ տվյալ դեպքում թագավորը որոշ հարկերից Մրենն ազատել է 1041 թ.: Ինչ վերաբերում է «Վահան քահանա գծող»-ին, ապա նրա անվանը հանդիպում ենք նաև Բագարանի 1034 թ. արձանագրության մեջ (**Սարգսյան Ն.**, նշվ. աշխ., էջ 202-203):



**Ձ** Արձանագրություն. խոշոր տառերով և թերի.  
**Ի յարեղական տոհմիս տոմարիս եւ թ(վին) Հայոց ի ՇԺԲ (1063) ամաց շր...:**

Հրատ. **Սարգսյան Ն.**, նշվ. աշխ., էջ 198; **Ալիշան Ղ.**, Շիրակ, էջ 139; «Մեղու Հայաստանի», 1881, № 146, էջ 1; **Մրասյան Կ.**, նշվ. աշխ., «ԲՀԱ», 1970, № 2, էջ 105:

Ծանոթ. արձանագրությունը 2000 թ. դրությամբ պահպանված չէր:





Կաթողիկե եկեղեցու հարավային ճակատին առկա վիճագրերի տեղադրության սխեմա



Կաթողիկե եկեղեցու հարավային ճակատի 1251 թ. արձանագրության (№ Ե) լուսանկարն ու գրչանկարը

**Է.** Հարավային ճակատին՝ մեկ ամբողջական քարին, 6 տող. *Թուակ | Չ (1251) | յանս ա(ստուա)ծապատի տ(եառ)ն Կոստանդեա Հա(յոց) կաթողիկոսի.../ հրամանաւ մեծին Շահանշահի եւ յառաջնորդոք .../ տ(է)ր Գրիգորո, եթե որ յեպիսկոպոսաց կաշառաւք ե.../ առնէ կամ անմորու կամ առանց ընտրութե(ան) մասն զ(Ու)րդահն առցէ եւ զՄիմոնի կախարդի, ով զգիրս ջնջէ ... / ջնջի ի կենաց գրոյն:*

Հրատ. **Սարգսյան Ն.**, նշվ. աշխ., էջ 198; **Ալիշան Ղ.**, Շիրակ, էջ 139; «Մեղու Հայաստանի», 1881, № 146; **Յառաջ H.**, նշվ. աշխ., էջ 74:



Կաթողիկե եկեղեցու հարավային ճակատի 1273 թ. արձանագրության (№ Ը) լուսանկարն ու գրչանկարը

Ը. Հարավային ճակատին՝ մեկ ամբողջական քարի վրա, 4 տող.


Թուակ / ՉԻԲ (1273) / ողորմութե(ամ)քն ա(ստուծոյ) ես պարոն Սահմադինս ազատեցի զս(ուր)ք ուխտին [Արջվա .../n այգիքն Մրենն եւ Աւշականն ի Խալ :Ա: (1) ի եւ յոր հարկէ որ բնական ազատ էր ոչ Ամիրի :Ա: (1) / ոչ ում ձեռն չկա ի վերա վ(ա)ս(ն) արեւշատութե(ան) որդեց ինոց քատութե(ան) մեղաց մե(րոց) .../ [ազատ մինչ ի ծագումն Զ(րիստոս)ի, արդ թէ որ ի մերոց կամ յատարաց] ...:

Հրատ. Մարգսեան Ն., 62վ. աշխ., էջ 198; Ալիշան Ղ., Շիրակ, էջ 139; «Մեղու Հայաստանի», 1881, № 146, էջ 1; Զմառ Խ., 62վ. աշխ., էջ 74:

Ծանոթ. արձանագրության՝ 2000 թ. լուսանկարում չպահպանված հատվածները լրացրել ենք ըստ Ն. Մարգսեանի:

Թ. Հարավային ճակատին՝ երեք շարք քարերի վրա, 11 տող.

Թուակ(անութեանս) / ՉԼԳ (1284) կաման ա(ստուծոյ) ամենակալին այս մեր արձանագիր է պարոն Սէնոպ Սալիմատինս Աւետեց որդոյս եւ կենակից իմ Ուրտուրիտայ որ յառաջ գն/եցի զՄրենն յիմ հալալ արդեանց եւ հաստատեցաք արձանալին զգրով եւ թողաք զՄրենոյ տասնակն հացին, որ է շարիատն նախ մեզ արեւշատութի(ւն) եւ որդեաց մ/երոց եւ յիշատակ յետ ելից աստի կենացս եւ մեզ մեղաց թողութի(ւն) եւ արձան մնալ մինչ ի գալուստն Զրիստոսի արդ էթէ որ ի մերոց կամ յատարաց զհաստատ արձանս / մեր խափանել ջանայ, պարտական լիցի սպանման արեան որդոյ ա(ստուծոյ) եւ դատաղ նորայ սա/տանա լիցի եւ գյախտեմից անեծս {ս}ն ժառանկեցէ զՈւդաի եւ զԿանեմին



ԹՈՒԱԿ  
:ՉԼԳ:  
ԿԱՄԱՆԱՅԱՆԱԵՆԱԿԱԼԻՆԱՅՍԵՐԱՐՁԱՆԱԳԻՐԵՂԱՐՈՆՄԵՆՈՂՍԱ  
ՅՆԱՐԻՆՍՄԷԼԵՅՈՐՈՒՅՄԵՎԵՆԱԿԻՅԻՄՈՒՐՈՒԻՐՍԱՅՈՒՅՄԱՄԷՐԵ  
ԵՅԻԶՄԵՆԵՅԻՄԱԿԱԼԵՆՅԵՍԱՄԱՐԵՅՄԷՁԱՄՈՒՎԵԹՈՂԱԿԵ  
ՄԻՆՈՅՄԱՄԱՅՍՅԱՅԻՄԷՇԵՐՍՆԱՄԻՅԵՉԸՄՈՒԹԻՆՈՒՅԻՄԵՅՅԻ  
ԵՐՈՅԵՅԻՇԱՄԱՅԵԼԵՅՄԱՅԻՄԵՅՄԵՅՉԵՄՅՈՒՐՈՒԹԻՆԵՁԱՄ  
ՆԱԿԻՉԻԳԱՄՍԻՒՄԷՂԻԹԻՔԻՆՈՅԿԱՅՄԱՍՅՉՉԱՄՍՅՁԱՄ  
ՏԵՐԻՄՓԻՄԷՂՍՈՅՄԱՅԻՄԷՇԵՐՍՆԱՄԻՅԵՇԵՐՍՆԱՄԻՅԵՇԵՐՍՆԱՄ  
ՄԱՄԱՅԻՅԵՅՄԵՐՅԻՄԷՇԵՐՍՆԱՄԻՅԵՇԵՐՍՆԱՄԻՅԵՇԵՐՍՆԱՄ  
ՊԱՏԱՆՔԻՆԵՐՍԻՆԵՅՅԻՄԵՇԵՐՍՆԱՄԻՅԵՇԵՐՍՆԱՄԻՅԵՇԵՐՍՆԱՄ

Կաթողիկե եկեղեցու հարավային ճակատի 1284 թ. արձանագրության (№ Թ) լուսանկարն ու գրչանկարը

եւ հաստատ / պահապան արհմինն յա(ստուծոյ):

Կիլիկիանայ Ամիրութե(ամ)քս գրեցաւ:  
Հրատ. Մարգսեան Ն., 62վ. աշխ., էջ 198-199; Ալիշան Ղ., Շիրակ, էջ 139-140; «Մեղու Հայաստանի», 1881, № 146, էջ 1; Զմառ Խ., 62վ. աշխ., էջ 75:  
Ծանոթ. քվականը սխալմամբ՝ ՉԻԳ (1274):

Ժ. Հարավային ճակատին՝ երեք շարք քարերին, 8 տող.

Թ(վին) ՉԼԷ (1288) յանուն {ն} ա(ստուծոյ) եւ միջնորդութե(ամ)ք ամենայն երկնայ(յ)ին եւ երկրայ(յ)ին զաւրութե(ան)։ Ես պարոն Սէնոպ Սահմադինս եւ ամուսին իմն Տուրտա վ(աս)ն փրկութե(ան) / մեղաց մեր եւ վ(աս)ն յերկար կենդանութե(ան) զաւակաց մերոց եւ վ(աս)ն շինո(ւ)թե(ան) համար Մրենն հացին շարինատն թողել էաք եւ հայնայլ թողաք զեզեցն / զհին եւ խաղողի խալէն, որ այլ ոչ ի մերոց եւ ոչ յատարաց ոչ ով չխառնէ / ով հակառակի եւ զմեր յիշատակս խափանէ, նզովի յաստուծոյ եւ :ՅՃԸ: (318) հա(յ)րապ/ետացն եւ մասն եւ բաժին նորա ընդ Ուդայի եւ ընդ Կաեին եւ ընդ սատանայի ԵԸ (?):

Հրատ. Մարգսեան Ն., 62վ. աշխ., էջ 199; Ալիշան Ղ., Շիրակ, էջ 140; «Մեղու Հայաստանի», 1881, № 146, էջ 1; Զմառ Խ., 62վ. աշխ., էջ 75:

ԺԱ. Հարավային ճակատին՝ երկու շարք քարերի վրա, 4 տող.

Թ(վին) ՉԻԳ (1295) / կաման ա(ստուծոյ) եւ Դաւիդ միաբանեցա ս(ուր)ք կաթողիկեիս եւ արար արդիւնք տ(է)ր Յով եւ այլ սպասաւորք եկեղեցոյս փոխարէն հատուցին մեզ ի տարին :Բ: (2) ժամ ի տաւնի Դարթի եւ Յիսկորայ :Ա: (1) ինձ առնեն Դարթի եւ :Ա: (1) ամուսնոյ իմոյ Էլիսաբունին, կատարողք արհմինն աստուծոյ:

Հրատ. Մարգսեան Ն., 62վ. աշխ., էջ 199; Ալիշան Ղ., Շիրակ, էջ 140; Զմառ Խ., 62վ. աշխ., էջ 76:

Ծանոթ. Ն. Մարգսեանի մոտ առկա են մանր տարբերություններ, որոնք առկա են նաև վերահրատարակություններում:

ԺԲ. Հարավային պատին՝ արևմտյան անկյանը մոտ և ցածր մասում, 5 տողով փորագրված է եղել.


Կաման ա(ստուծոյ) ի պարոնութե(ամ)քն Մարգսի և Էվան խաթունին / եւան Ակորայ և [ի] հայրապետութե(ան) ի տ(է)ր Վ(ար)դ(անին) եւ Իւանիկս իմ ամիրութե(ան)ս և Աւտաշին ձ(եռն)ատրութե(ան) զայս արձան հաստատ/եցաք ու զձթիհանն եկեղեցոյս ընձայ տվ/ար մեր հոգոյս համար...:

Հրատ. Маррз Խ., Новые материалы по армянской эпиграфике, СПб, 1893, էջ 88-89:

ԺԳ. Հարավային պատին՝ արևմտյան անկյանը մոտ և ցածր մասում.

... (ս) և այլ աթոռ(ակալ) այն մին / (ն) եւ հոգոյս յիշատակի / ... ակ են մինչ ի Զ(րիստո)ս եւ որ որ ... (մ)եղաց և իմ ազգի մեղաց...:

Հրատ. Маррз Խ., 62վ. աշխ., էջ 88:



Կաթողիկէ եկեղեցու հարավային ճակատի 1288 թ. արձանագրո-  
ւթյան (N<sup>o</sup> Ժ) լուսանկարն ու գրչանկարը

**ԺԳ.** Հյուսիսային պատին 3 տողով փորագրված է եղել.  
*Չաւորդ յիշեցեր Սրենոյ ... զերեց:*  
Հրատ. **Սրապեան Կ.**, նշվ. աշխ., «ԲՀԱ», 1970, № 2, էջ 105:


**ԺԵ.** ԺԳ դարում իրականացված նորոգության ժամանակ եկեղեցու հարավային որմին արտաքուստ ագուցված խաչքա-  
րերից մեկի ստորին մասում.

*S(t)ր աւ/դորմեայ:*  
Հրատ. առաջին անգամ:  
Ծանոթ. ժամանակը՝ Ժ-ԺԱ դդ.:

**Գերեզմանոց.** ներկայումս իսպառ անհետաց-  
ված հնավայրի մասին դեռևս 1878 թ. նշվել է. «Բա-  
ղաքիս գերեզմանաքարեր նույնպես և ուրիշ նշա-  
նավոր շինվածոց քարեր տաճիկներ տանելով  
փոշտ շինած են, միայն մի մահարձան հանդիպե-  
ցավ մեզ, որո վերա եպիսկոպոսական հանդերձով  
կղերական մի քանդակված էր»<sup>66</sup>:

Ինչպես երևում է, գլխավոր գերեզմանոցը գտնվել է Կաթողիկէ եկեղեցու հարևանությամբ. «Մօտ առ եկեղեցույն բազում շիրիմք են վաղեմիք. ոմանք բարձրակերտք արկղածևք, այլք ըստ սովորական ձևոյ. են ի նոսա և քանդակագործ զարդք անշուք»<sup>67</sup>: Սակայն գերեզմանական հուշարձաններ Սրենում եղել են ոչ միայն գերեզմանոցում, այլև քա-  
ղաքատեղիի զանազան մասերում. «Խաչքարք բա-  
զում են ի Սրեն, ոչ ի միում վայրի, այլ ցրիւ. ոմանք հո-  
յակապք և բարձր որմագործ ստուար պատուանդա-  
նաւ, այլք մարդաչափ բարձրութեամբ...»<sup>68</sup>, այգիներ-

66 **Սրապեան Կ.**, նշվ. աշխ., «ԲՀԱ», 1970, № 2, էջ 106: Տե՛ս նաև Գ.ԱԹ, Գ. Սրվանձտյան ֆոնդ, ք. I, գ. 17, ք. 9-10:  
67 **Սարգսյան Ն.**, նշվ. աշխ., էջ 200:  
68 Նշվ. աշխ., էջ 199:




Կաթողիկէ եկեղեցու հարավային ճակատի 1295 թ. արձանագրո-  
ւթյան (N<sup>o</sup> ԺԱ) լուսանկարն ու գրչանկարը

րի մեջ, որտեղ գերակշռում էին տապանաքարերը. «Այգիներից շատերի մեջ ես պատահեցայ 2-6 հատ մանր և խոշոր տապանաքարերի և մի քանի տեղ էլ գիմու հնձանների»<sup>69</sup>:

Խաչքար. պատվանդանին եղել է.  
*Ով ս(ուր)ք խաչ փրկական եւ ներկեալ արեամբ որդոյն ա(ստուծոյ) ի քեզ ապահնեցաք ծառայքս խաչելոյն Զ(րիստոս)ի. եւ Մարտիրոս եւ ամուսին իմ Վարդուստ եւ հարազատ որդիք մեր Փարսամն Հմատ...Ս(ար)գ(ի)ս ք(ա)հ(անա) եւ քոյր մեր Նճիս կանկնեցաք զխաչս բարեխաւս մեզ եւ ծնողաց մե-  
րոց, զաւակաց մերոց, արդ աղաչեմք:*  
Հրատ. **Սարգսեան Ն.**, նշվ. աշխ., էջ 199; **Ալիշան Բ.**, Շիրակ, էջ 141; «Մեղու Հայաստանի», 1881, № 146, էջ 1; **Յառն Ի.**, նշվ. աշխ., էջ 76:  
Ծանոթ. Ն. Սարգսյանը նշել է. «Փակագիր գրեալ թուի Հմատկ և այլ ևս անուն մի եղծ»:

**Մատուներ.** տեղագիր հեղինակները Սրենում արձանագրել են երկու մատուռ. «Բաց ի խաչքա-  
րիցն են և երկու փոքր մատրուներ...»<sup>70</sup>: Նրանցից մեկը գտնվել է Կաթողիկէ եկեղեցու հարավային («Եկեղեցույ հարաւակողմ կարմիր սրբատաշ քարերով շինուած մի փոքրիկ կիսափուլ մատուռ կայ վերան խաչեր քանդակուած և դրան առջև մի պատուանդանի մահարձան...») <sup>71</sup>, մյուսը՝ արևել-

69 **Յովհաննջանեան Կ.**, Սրեն, «Մեղու Հայաստանի», 1881, № 146, 29 յուլիսի, էջ 2:  
70 **Սարգսեան Ն.**, նշվ. աշխ., էջ 199:  
71 Գ.ԱԹ, Գ. Սրվանձտյան ֆոնդ, ք. I, գ. 17, ք. 10: Տե՛ս նաև **Սրա-  
պեան Կ.**, նշվ. աշխ., «ԲՀԱ», 1970, № 2, էջ 106:



Մրեն. որմնափակ խաչքարեր քաղաքատեղիի տարածքում (լուս.՝ 1900-ական թթ.): Միտումնավոր անհետացվել է 1920-ական թթ.-ից հետո:

յան կողմում («Եկեղեցոյ արևելակողմ կարմիր քարերով շինուած երեք դռնեայ մի փոքրիկ մատուռ ևս կար դեռ բոլորովին կանգուն, որոյ կամարակապ դրան կամարին մէջ փակագրերով արձանագրութիւն մը կը գտնուէր...»)<sup>72</sup>:

Արևելակողմյան մատուռի մուտքին եղել է.

*Թ(վին) ՉԻՋ (1277) ի հայրապետութեան եւ թագաւորութեան Հայոց տեառն Յակոբա եւ Լեւոնի եւ ի պարոնութեան Սահմատինի նվերակառուցելս զայս խորան յանունադրութիւն Յ(իսուս)ի փրկչին մերո, որ է պատճառ աղաթելոյ ի սմա զիս Մխ(իթար) վարդապետս եւ որք ազնեցին, յիշեցէք:*

Հրատ. **Մարգսեան Ն.**, նշվ. աշխ., էջ 200; **Ալիշան Ղ.**, Շիրակ, էջ 140; **Յառն Հ.**, նշվ. աշխ., էջ 76; **Մրապեան Կ.**, նշվ. աշխ., «ԲՀԱ», 1970, № 2, էջ 106:

Ծանոթ. Ս. Կյուրեղյանի վերծանությունը չափազանց սխալաշատ է:

**Ապարանք «Սահմադինի» կամ «Վարդան քյոխվի դարպաս».** ԺԹ դարում Մրենի այցելուները քաղաքատեղիի տարածքում արձանագրել են մասնատարապետական աչքի ընկնող այլ կառույցների մնացորդներ, որոնց թվում հիշվում է իշխան Սահմադինի ապարանքը. «...զի դուռն որ ցարդ կանգուն կայ վսեմ է յոյժ և գեղեցկաքանդակ շուրջանակի: Ներքին կողմն նորա և երկուստեք որմունքն քալքայեալ իսպառ, հանդիպակաց որմն և եք կիսափուլ ի տեղուջն կայ, յորմէ չէ մարթ գուշակել ինչ. և տեղոյն տարածութիւն ոչ մեծ ինչ: Ի




Մրեն. Կաթողիկէ եկեղեցու արևելյան կողմում գտնված մատուռի (1277 թ.) տեսքը հարավ-արևմուտքից (լուս.՝ Երմակովի, 1890-ական թթ.)

վերայ դրանն արձանագիր կայր, որ և այն մնաց անվերծանելի վասն տեղոյն բարձրութեան»<sup>73</sup>:

72 Նույն տեղում:

73 **Մարգսեան Ն.**, նշվ. աշխ., էջ 200:

Կ. Սրապյանն էլ հավելել է. «Նոյնպես հարաւակողմ ուրիշ տեղ մը մի մեծ պալատի ատերակներ կը գտնուէին, որոյ արևելեան դուռ զարմանալի գեղեցկութեամբ բարձր և հոյակապ շինութիւն էր կարմիր



Սրեն. Կաթողիկէ եկեղեցու արևելեան կողմում գտնված մատուռի (1277 թ.) արևմտեան ճակատից բացված մուտքի արձանագրության գրչանկարը

քարերով, դրան վերայ՝ խոշոր յախճապակիներով ևս զարդարուած էր, այս դուռ չորս տող ճակատագիր ունէր, զոր չկրցանք կարդալ թէ բարձրութեան և թէ ժամանակի տղութեան պատճառաւ»<sup>74</sup>:

Ուշագրավ է նաև Կ. Օհանջանյանցի վկայութիւնը, քանի որ նա ավանդել է ապարանքին տրված նաև ժողովրդական անվանումը. «...հարաւային բնակարանների կենդրոնում քարի և հողի շէջերի մէջ կանգուն կան երկու կտոր ուրիշ շինութեանց բեկորներ, որոնք հաստատուած են կարմիր քարերով, տեղ-տեղ գմայլեցուցիչ նկարներով և քանդակներով զարդարուած: Դոցանից մէկը՝ որ դռան նմանութիւն ունի, «Վարդան քեօխի դարպաս» է կոչվում, իսկ երկրորդը՝ հաւանական է դիտանոց կամ բուրգի մնացորդ կարծել»<sup>75</sup>:

Ապարանքի զարդաքանդակները գրավել են նաև Հ. Օրբելու ուշադրութիւնը<sup>76</sup>:

Ներկայումս այս հուշարձանն էլ է անհետացված, ուստի մեծ բարեբախտություն է, որ կառույցի շինարարական արձանագրությունը, որը չէին կարողացել ընթերցել Ն. Սարգսյանն ու Կ. Սրապյան-

ըն, այնուամենայնիվ, ժամանակին արժանացել է մեկ այլ երախտավորի՝ Ն. Մառի ուշադրութեամբ, ում հաջողվել է ամբողջութեամբ վերծանել այն.

Սահմադինի ապարանքի մուտքի վերնամասում, 4 տող.

ԹՎ ՉԺ (1261) ի տիեզերակալութիւն) Հուլաւու դանի եւ Սահմադին որդի [Աւետեաց գ]նեցի գրագատրանիս[տ] տեղի[ս] զՄրեն ի յԱրտաշրէ որդո Շահնշահի հալալ ընչ[ից իմ]ոց ի վայելումն ինձ և որդոց իմոց, ա(ստուա)ծ շնահատր ար[ա]յսցէ յախտեանս ժամանակաց: [Ի թվ] ՉԻԵ (1276) յաշխարհակալութե(ան) Ապադանին եւ Սամտին, որ պարոնին ամարանոց ու դարապաս չկայր, զաս ալգիս և գրա[խ]տս, որ կոչի Արքայութիւն, գնեցի՝ զամէն մէկ յիւր տիրոչէն. և յիմ մտաց դուս՝ առանց (՞) վարդպետի ձևեցի ու հիմն ձգեցի դարապասիս ու դրախ[տ]իս. ի Ժ (10) տարին կատարեցի. ա(ստուա)ծ / շնահատր արասցէ պարոն սահմատինին որդից ի յորդիք. ու խարճ, որ եղաւ դարապասիս :Խ:Ռ: (4000) դուկատ դահեկան:

Հրատ. **Мартъ Н.**, Новые материалы по армянской эпиграфике, СПб, 1893, էջ 82-83; **Мартъ Н.**, Ани, Ереван, 1939, стр. 79; **Քալանթար Ա.**, նշվ. աշխ., էջ 192 (ունի միայն սկզբնամասը); **Ժամկոչյան Հ. Գ.**, Անի քաղաքի 13-րդ դարի երկու արձանագրության մասին, «Տեղեկագիր», 1955, № 47, էջ 102:

Ծանոթ. Ա. Քալանթարը նշել է, որ «Սահմատինի պալատի դուռն է մնացել միայն յուր ճակատով: Վերին եզերքում 4 տող, բազմաթիվ ծղպատներով և հաճախ տառերի մեջ տառեր ու արձանագրություն է խոշոր տառերով ամբողջ լայնութեամբ»:

**Ապարանք «Արքունի».** քաղաքատեղիի՝ մեզ չհասած աշխարհիկ կառույցներից է եղել նաև պայմանականորեն Արքունի կոչված ապարանքը. «Մի երևելի հնութեանց Սրենոյ է և ատերակ արքունիքն... և յայդ անուն զնա աւանդեն, զի և ոչ այլում ձևոյ նմանե ցուցանել կարեն. ոչ իբրու աթոռանիստ արքայական, այլ զբօսանաց վայր. և զայդ ոչ ի ստոյգ ինչ յիշատակարանաց երաշխատրենմ, այլ այնու ետք զի այգեստան էր տեղին և շինուածդ փառահեղ, նմին իրի և թագաւորաց արժանաւոր...»<sup>77</sup>:

**Ապարանք «Վարաքեօխի».** ևս մեկ ապարանքի եզակի նկարագրություն է փոխանցել Կ. Օհանջանյանցը. «Եկեղեցուց մի քանի հարիրաւոր քայլափոխ հեռաւորութեամբ կանգնած կայ մի մեծ շինութեան հետք կամ մնացորդ. դա իւր գմայլեցուցիչ նկարներով, մանր, խոշոր և բազմատեսակ քանդակներով գրաւում է այցելուի բոլոր ուշադրութիւնը...: Այդ կիսաւեր որմը՝ որ հաստատուած է կարմիր քարերով, շինութեան արևմտեան պատն է. բարձրացած է մի քանի կարգ աստիճանների վերայ. արտաքին երեսը ամբողջապէս կազմուած է խիտ քանդակներից, երեք քառակուսի խորշերի վերայով անցնում են երկու կարգ ծաղկանկար զառնիզներ, որոց վերայ և դրուած են թուվ վեց հատ խաչարձանները. դոցանից աջակողմեանը գրեթէ 2 1/2 արշ. բարձրու-

74 Գ.Ա.Թ., Գ. Սրվանձտյան ֆոնդ, ք. I, գ. 17, ք. 10: Տե՛ս նաև **Սրապյան Կ.**, նշվ. աշխ., «ԲՀԱ», 1970, № 2, էջ 106:

75 **Յովհանջանեանց Կ.**, Սրեն, «Մեղու Հայաստանի», 1881, № 146, 29 յուլիսի, էջ 2:

76 **Орбели И.**, Колокол с анийскими орнаментованными мотивами XII-XIII века, Избранные труды, Ереван, 1963, стр. 184.

77 **Սարգսեան Ն.**, նշվ. աշխ., էջ 200:



«Սահմադիր» կամ «Վարդան քոխվի դարպաս» ապարանքը (ուս.՝ 1900-ական թթ.)

թիւն ունի և գտանվում է քանդակագործ շրջանակի մէջ: Խաչի պատուանդանը ներկայացնում է մի ուրիշ քառաթև խաչ: Այս քնարածև խաչարձանի բարձրը միևնույն քարի ճակատին կարգով շարուած կան ուրիշ 5 հատ խաչեր: Սորա մօտ գտանվում է երկրորդ խաչարձանը միևնույն բարձրութեամբ, ջոկվում է առաջինից այն զանազանութեամբ միայն, որ այստեղ խաչը քնարածև չէ և նորա բոլորակ պատուանդանը կազմուած է մի խումբ ամենամանր խաչարձաններից: Սորան կից են միւս 4 խաչերը, որոնք յար և նման են միմեանց, միաչափ հաւասար մեծութեամբ և միատեսակ քանդակներով: Դոցանից 2-ը դրուած են ներքի և 2-ն էլ վերին կողմերում, առանց կրորակ պատուանդանի, քառակուսի դիրքով քանդակագործ շրջանակների մէջ զետեղուած են ծաղկանկար և դալարուն, կիսաբոլոր ու քառակուսի մանր քանդակներով: Ներքուստ որմը շարուած է կարմիր կոփածոյ քարերով, հարթ և հաւասար դրութեամբ: Տեղագծին նայելով՝ սա մի բաւականի մեծ բնակարան կամ թերևս եկեղեցական մի նշանատր շինութիւն է եղել մի յարկից բաղկացած: Այս մնացորդի նոր և անաղարտ գրութիւնից կարելի է եզրակացնել, որ բնութիւնը իսպառ չէ մասնակցել դորա կործանմանը, այլ անգութ մարդիկների կործանիչ ձեռքերը բնաջինջ են արել դորան: Այս աւերակին շրջակայ գիւղերի թէ՛ հայ և թէ՛ մահմեդական բնակիչները աւանդութեանը հետևելով՝ «Ղարաբեօխ-

վի» պալատ են անուանում, ասելով, որ իբրև սկզբում այդտեղ բնակուելիս է եղել «Ղարա» անունով տեղական գիւղ-աւագը»<sup>78</sup>:

**Վանական կալվածքներ Մրենում.** Ինչպես երևում է նվիրատվական արձանագրութիւններից, Մրենի ընդարձակ այգիներից, որոնց թիվը հասել է մինչև 1200-ի<sup>79</sup>, սեփական մասնաբաժիններ են ունեցել Արարատյան տարածաշրջանի զանազան վանքերը: Դրանցից էր, օրինակ, Մարմաշենը, որին 1029 թ. նվիրաբերվել են «Մրենի այգիք»<sup>80</sup>, Անիի Տիգրան Հոնենցի վանքը, որին 1215 թ. նվիրված կալվածքների թվում հիշվում է նաև «...այգի Ա ի Մրեն...»<sup>81</sup>, Խծկոնքի վանքը, որին 1240 թ. ընծայվել է Մրենի Աղտոտ կոչված այգին<sup>82</sup> և այլն: Ի դեպ, Բագարանի Մայր եկեղեցուն էլ 1034 թ. նվիրաբերվել է Մրենում գտնվող ջրաղացներից մեկը. «...ջաղաց մի Մրենի ետու ի սբ կաթողիկէ...»<sup>83</sup>:

**Ամփոփում.** Մրեն քաղաքատեղիի հուշարձանների և հատկապես նրա Կաթողիկէ եկեղեցուն նվիրված սույն հակիրճ ուսումնասիրութեան հրապարակումը նախ և առաջ SOS-ահագանգ է՝ հասցեագրված միջազգային պատկան մարմիններին և առաջին հերթին UNESCO-ին՝ կորստյան դատապարտված ճարտարապետական գոհարի պահպանութեան, թերևս արդեն փրկութեան խնդրին հրատապ ուշադրութիւն հրավիրելու ակնկալութեամբ: Քաղաքատեղիի հարևանութեամբ տեղակայված թուրքական բանակի սահմանապահ ուժերի դիտակետ-գործանցի շնորհիվ արդեն տասնամյակներ ճարտարապետական հրաշալիքին մոտենալու արտոնութիւն ունեն միայն մերձակա գյուղերի գանձախույզ բնակիչները, այլ ոչ երբեք ճարտարապետներն ու մշակութաբանները կամ պարզապես զբոսաշրջիկները:

Կոչ ենք անում հնարավոր և անհնարին բոլոր միջոցներն ուղղել կանխելու գրեթէ 1400-ամյա հուշարձանի հովանավորված շարունակական քայքայումը:

*Հ. Գ. մեր խորին շնորհակալութիւնն ենք հայտնում խիզախ հոգևորական Մեայոս եպիսկոպոս Չուլջանին 2011 թ. կատարած լուսանկարները մեզ տրամադրելու համար:*

78 **Յովհաննջանեան Կ.**, Մրեն, «Մեղու Հայաստանի», 1881, № 146, 29 յուլիսի, էջ 2:

79 Մասնավորապես «Կաթողիկէ եկեղեցու արևմտեան և հիւսիսային կողմերով, ըստ մեծի մասին դրուած են այգիները, որոնք կարելի է թով աւելի քան 1,200 համարել: Բոլորն էլ պատած են ցածրիկ, բայց քարեայ ամուր շրջապատներով, այգիների մէջ տակաւին գտանվում են աննշան քանակութեամբ վայրենացած պտղատու ծառեր, իսկ քարախիտ ձորակում բուսումն է բաւականի համեղ խաղող» («Մեղու Հայաստանի», նույն տեղում):

80 Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի և հինգ զաւառացն Արարատայ, աշխատասիրութեամբ Յովհաննու եպիսկոպոսի Շահխաթունեանց Շահիխարցոյ միաբանի սրբոյ Էջմիածնի, հ. երկրորդ, Ս. Էջմիածին, 1842, էջ 272:

81 Գիվան Հայ վիճագրութեան, պրակ 1, Երևան, 1966, էջ 63:

82 **Մարգիսեան Ն.**, նշվ. աշխ., էջ 211:

83 Նշվ. աշխ., էջ 202-203:

